

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ IDF**

*Իրավական դաշտի ուսումնասիրություն*

**ԹՈՎՄԱՍ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ**

*Իրավաբանության եւ փիլիսոփայության դոկտոր*

*Վերջնական տարբերակ*

*29 նոյեմբերի 2001*

*ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ*

<i>Բաժին 1. Քաղաքականության եւ օրենսդրության վերլուծություն</i>	<i>1</i>
<i>1. Աշխատանքի ծավալները</i>	<i>1</i>
<i>1.1 Հանրագումար եւ հետագա քայլեր</i>	<i>1</i>
<i>1.2 Մեթոդաբանություն, իրավական եւ վարչական ուղեցույցներ, մոդելներ, արդյունավետության եւ որակի չափանիշներ</i>	<i>3</i>
<i>1.3 Էլեկտրոնային կառավարում</i>	<i>6</i>
<i>2. Մշակութային ժառանգության սահմանումը</i>	<i>6</i>
<i>2.1 Անշարժ մշակութային ժառանգություն</i>	<i>7</i>
<i>2.2 Շարժական մշակութային ժառանգություն</i>	<i>8</i>
<i>2.3 Ոչ նյութական/ներկա մշակութային ժառանգություն</i>	<i>10</i>
<i>3. Ընդհանուր քաղաքականության նպատակները</i>	<i>10</i>
<i>3.1 Պահպանում, գույքագրում եւ դասակարգում</i>	<i>10</i>
<i>3.2 Ազգային ինքնություն</i>	<i>10</i>
<i>3.3 Մշակութային զբոսաշրջություն</i>	<i>11</i>
<i>3.4 Հայաստանի համար հատուկ կարեւորության հարցեր</i>	<i>11</i>
<i>3.4.1 Փոքր մասշտաբ</i>	<i>11</i>
<i>3.4.2 Սփյուռք</i>	<i>12</i>
<i>3.4.3 Արտասահմանում գտնվող մշակութային արժեքներ</i>	<i>12</i>
<i>3.4.4 Հին եւ ժամանակակից քաղաքակրթության խաչմերուկ եւ հանգրվան</i>	<i>13</i>
<i>3.4.5 Ֆինանսական ռեսուրսների սղություն</i>	<i>13</i>
<i>3.4.6 Անցում համայնավարությունից</i>	<i>13</i>
<i>3.4.7 Եկեղեցի-Պետություն հարաբերություններ</i>	<i>14</i>
<i>4. Առաջարկների ամփոփագիր</i>	<i>15</i>
<i>4.1 Ռիսկի գնահատում</i>	<i>15</i>
<i>4.2 Գույքագրում եւ դասակարգում</i>	<i>15</i>
<i>4.3 ԵԽ-ի միջազգային նորմերի հետ ներդաշնակեցում եւ ինտեգրացիա</i>	<i>16</i>
<i>4.4 Արդյունավետություն, ռեսուրսների արդյունավետ բաշխում</i>	<i>16</i>
<i>4.5 Ֆինանսավորվող ինստիտուտներ՝ հանրային-մասնավոր համագործակցություն, հարկային քաղաքականություն</i>	<i>18</i>
<i>4.6 Սեփականության հստակեցում՝ հատկապես Եկեղեցի-Պետություն հարաբերություններում</i>	<i>18</i>

4.7	<i>Էլեկտրոնային կառավարում</i>	19
4.8	<i>Բնական եւ արհեստական միջավայրի ինտեգրացված կոնսերվացիա, քաղաքաշինության պլանավորում եւ պահպանում, անշարժ, շարժական եւ ոչ նյութական մշակութային արժեքների նկատմամբ քաղաքականություն</i>	20
4.9	<i>Մշակութային եւ կրթական քաղաքականությունների ինտեգրացիա</i>	20
4.10	<i>Արդյունավետության տեստի իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակները</i>	20
4.11	<i>Արտասահմանում գտնվող մշակութային արժեքները</i>	21
5.	<i>Հայաստանի քաղաքականության, օրենքների, ինստիտուտների եւ պրակտիկայի վերլուծություն եւ առաջարկներ միջազգային նորմերի համատեքստում</i>	22
5.1	<i>Պայմանագրեր</i>	22
5.1.1	<i>ՄԱԿ-ի միջազգային համաձայնագիրը տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների վերաբերյալ</i>	23
5.1.2	<i>Զինված կոնֆլիկտների դեպքում մշակութային արժեքների պահպանության Հասագայի կոնվենցիան (1954)</i>	24
5.1.3	<i>Եվրոպական մշակութային կոնվենցիան (1954)</i>	24
5.1.4	<i>Փարիզի կոնվենցիան մշակութային արժեքների անօրինական ներմուծման, արտահանման եւ սեփականության իրավունքի փոխանցման արգելման եւ կանխման վերաբերյալ (Նոյեմբեր 14, 1970)</i>	25
5.1.5	<i>1995 UNIDROIT-ի կոնվենցիան գողացված կամ անօրինականորեն արտահանված մշակութային արժեքների մասին</i>	29
5.1.6	<i>UNESCO-ի կոնվենցիան համաշխարհային մշակութային եւ բնական ժառանգության պահպանման վերաբերյալ (Նոյեմբեր 16, 1972)</i>	30
5.1.7	<i>Բնության եւ բնական ռեսուրսների կոնսերվացման միջազգային միություն (IUCN)</i>	31
5.1.8	<i>Մշակութային արժեքների ուսումնասիրման եւ վերականգնման միջազգային կենտրոն (ICCROM, Հռոմեական կենտրոն)</i>	32
5.1.9	<i>Համաշխարհային հուշարձանների հիմնադրամ</i>	32
5.1.10	<i>Գրանադայի եւ Սալթայի կոնվենցիաներ</i>	34
5.2	<i>ԵԽ-ի առաջարկներ</i>	36
5.2.1	<i>R (95) 3</i>	36

5.2.2 R (98) 4	37
5.2.3 R (86) 11	38
5.2.4 R (86) 15	38
5.2.5 R (89) 5	38
5.2.6 R (89) 6	39
5.2.7 R (88) 5	39
5.2.8 R (93) 9	40
5.2.9 R (95) 9	40
5.2.10 R (97) 2	41
5.2.11 R (96) 6	41
5.2.12 R (98) 5	42
5.3 ՀՀ օրենսդրությունը	42
5.3.1 ՀՀ սահմանադրությունը, ընդունված 1995թ. հունիսի 5-ի հանրաքվեով	42
5.3.2 ՀՀ քրեական օրենսգիրքը	43
5.3.3 ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, ուժի մեջ է մտել 2000թ. մարտի 1-ից	44
5.3.4 Քաղաքաշինության մասին օրենքը	46
5.3.5 Հողային օրենսգիրք	46
5.3.6 Հուշարձանների մասին օրենք	47
5.3.7 Մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին օրենք	49
5.3.8 Արխիվային ֆոնդի մասին օրենք	51
5.3.9 Հեղինակային իրավունքի օրենք	52
5.3.10 Հարքային օրենսդրություն	56
5.3.11 Այլ օրենքներ	58
6. Հաստատություններ եւ մշակույթի այլ ոլորտներ	58
6.1 Թանգարաններ	58
6.2 Գրադարաններ	60
6.3 Արխիվներ	63
6.4 Եկեղեցի-պետություն հարաբերություն	63
6.5 Մշակութային զբոսաշրջություն – մշակութային վայրեր	67
6.6 Այլ մշակութային ոլորտներ	69
6.6.1 Ժողովրդական բանահյուսություն	69

6.6.2	Լեզու	69
6.6.3	Արվեստ եւ կիրառական արվեստներ	69
6.6.4	Կինոնատոգրաֆիա	70
<i>Բաժին 2. Իրավական չափանիշներ եւ բաղադրիչներ</i>		72
1.	Քաղաքականության բաղադրիչ հարցեր	73
2.	Արդյունավետության չափանիշներ	78
3.	Տեխնիկական աջակցություն	85
4.	Հարցազրույցների ցանկ	86
5.	Պետական եւ մշակութային հաստատությունների ցանկ	87
6.	Հայաստանի ուսումնասիրված օրենքների ցանկ	91
7.	Հապավումների ցանկ	95
8.	Հավելվածների ցանկ	96

*. Հանաչխարհային Բանկ, օգտագործման լրիվ իրավունքը պատկանում է նաև Թովմաս Սամուէլեանին,  
իրավաբանության եւ փիլիսոփայության դոկտոր*

Բաժին 1. Օրենսդրության եւ քաղաքականության վերլուծություն

1. Աշխատանքի Ծավալները

1.1. Հանրագումար եւ հետագա քայլեր

Սույն ուսումնասիրությունը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության («ՀՀ») կառավարության եւ ՀՀ Մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության օգտագործման համար: Ուսումնասիրությունը կատարվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի շրջանակներում, որպես Համաշխարհային Բանկի Հայաստանում Մշակութային ժառանգության Պահպանման ուսումնասիրության մաս: Այս ուսումնասիրության հիմնական հարցերը վերաբերում են մշակութային ժառանգության պահպանման իրավական, քաղաքականության եւ վարչական պայմաններին՝ միջազգային պրակտիկայի լույսի ներքո: Ուսումնասիրության մեջ հետազոտվում են ներկա օրենքները եւ ինստիտուտները, միջազգային ստանդարտները եւ համեմատելի պայմաններում գտնվող երկրների փորձը՝ նպատակ ունենալով տալ առաջարկներ Հայաստանի դաշտը համապատասխանեցնելու համար լավագույն միջազգային պրակտիկային, մասնավորապես Եվրոպայի խորհրդի («ԵԽ») պրակտիկային, որին 2001թ. միացավ Հայաստանը: Հայաստանը միացել է նաեւ այս ոլորտի մի քանի միջազգային պայմանագրերի (տես Հավելվածը): Դրանցից մի քանիսը, մասնավորապես ԵԽ-ի Եվրոպայի ճարտարապետական ժառանգությունը պահպանելու Կոնվենցիան (հոկտեմբեր 3, 1985թ., Գրանադայի Կոնվենցիա) եւ ԵԽ-ի Հնէագիտական ժառանգության պահպանման Կոնվենցիան (16 հունվարի, 1992թ. Մալթայի Կոնվենցիայի վերանայված տարբերակը) անդամ երկրների վրա պարտավորություն են դնում իրենց օրենսդրությունը այդ Կոնվենցիաներով նախատեսված ստանդարդներին համապատասխանեցնելու համար: Մշակութային ժառանգությանն ուղղված քաղաքականությունը կարելու է խաղում տնտեսական զարգացման, մշակութային զբոսաշրջության, քաղաքաշինության եւ մշակութային եւ ազգային ինքնության հաստատման մեջ: Քանի որ Հայաստանը թեւակոխում է անկախության եւ գլոբալ տնտեսության եւ համաշխարհային համայնքին ինտեգրման երկրորդ տասնամյակ, մասնավորապես պահպանման եւ զարգացման ռեսուրսների սղության պայմաններում մշակութային ժառանգության պահպանումը պահանջում է շուտափույթ ուշադրություն, քանի դեռ այդ հապաղումը անդառնալիորեն չի ազդել հայկական մշակույթի երկարաժամկետ կենսունակության վրա: Սահմանափակ ռեսուրսները պահանջում են գերակայությունների սահմանում մշակութային ժառանգության ոչնչացումը կանխելու եւ ինստիտուտների, հավաքածուների եւ ավանդույթների շարունակելիությունը ապահովելու, որը մեկ անգամ ընդհատվելուց հետո դժվար կամ անհնար կլինի վերականգնել:

Ընդհանուր առմամբ, Հայաստանը նվիրված է կրթված մասնագետների շնորհիվ կարողացել է պահպանել իր մշակութային ժառանգությունը չնայած միջոցների սակավությանը: Այն նաեւ ընդունել է մի շարք օրենքներ,

ենթաօրենսդրական ակտեր եւ այլ իրավական փաստաթղթեր, կապված մշակութային ժառանգության պահպանման հետ, որոնք մոտենում են միջազգային նորմերին: Հիմնական հարցերը, որոնք բարձրացվել են հարցազրույցների ժամանակ եւ հայտնաբերվել են ուսումնասիրության ընթացքում հետեւյալն են.

- ռեսուրսների սակավությունը, որը սպառնում է մշակութային արժեքների ֆիզիկական պահպանությանը եւ սահմանափակում է մասնագետների վերապատրաստումը
  - անարդյունավետությունը եւ հովանավորչությունը
  - Հայաստանի կարիքներից բխող հստակ քաղաքականության բացակայությունը
  - առաջնահերթությունների սահմանումը, որոնք իրենց հերթին բխում են.
1. օրենսդրության մեջ առկա բացերից, հակասություններից եւ անորոշություններից,
  2. թափանցիկությունից, հաշվետվության եւ պատշաճ գործընթացի բացակայությունից,
  3. օրենքների եւ տեղական ինստիտուտների, պայմանների եւ իրավական կուլտուրայի միջեւ անհամապատասխանություններից
  4. տարբեր անցումային երեւույթներից, ներառյալ ա) պետական ապարատի կրճատումը, բ) գործազրկությունը, գ) սեփականաշնորհման հետ կապված անորոշությունները, դ) պետություն-եկեղեցի հարաբերությունների անհստակությունը, ե) կարգավորումների եւ սահմանափակումների չափից ավելի կիրառումը, որոնք ծանրաբեռնում են մշակութային ժառանգության օգտագործողների, ստեղծողների եւ պահպանողներին, քաղաքականության իրագործման անարդյունավետ բաժանումը, օրենքների կիրարկումը, եւ կառավարության չափազանց մեծ ներգրավվածությունը կարգավորման գործառույթներից բացի այլ ծառայությունների մատուցման մեջ գ) միջոցների սղությունը (աշխատավարձեր, ոլորտի աշխատակիցների համար հեռանկարների բացակայություն);
  5. տարբեր կառուցվածքային խնդիրներ`  
հետեւյալ գործառնությունների ոչ բավարար տարանջատումը
    - քաղաքականության մշակում
    - օրենսդրական դաշտի ստեղծում
    - վերահսկողություն/կիրարկում
    - իրականացման գործառույթներ
    - կառավարության կամ կառավարության հետ կապված կառույցների չափազանց ներգրավվածությունը կարգավորման հետ չկապված ծառայությունների մատուցման մեջ



Քանի որ սույն ուսումնասիրությունը եւ դրա մեթոդաբանությունը հիմնված է այն սկզբունքի վրա, որ օրենքները պետք է մշակվեն մշակութային քաղաքականության հստակեցման հիման վրա, սույն ուսումնասիրությունը չի փորձում առաջարկել կոնկրետ օրենսդրական նախաձեռնություններ: Այս ուսումնասիրության նպատակն է տրամադրել քննարկումների եւ մշակութային ժառանգության ասպարեզում որոշումների ընդունման կադապար, որի օգնությամբ հնարավոր կլինի բարելավել օրենսդրական դաշտը: Ակնկալում ենք, որ այս կադապարը կօգտագործվի որոշումներ կայացնողների, վարչարարների, օրենսդիրի, մասնագետների, դոկոր կազմակերպությունների եւ այլ շահագրգիռ անձանց կողմից ներկա իրավիճակի գնահատման գործընթացում ներգրավվելու համար եւ տվյալ պահին Հայաստանի կարիքների համար հատուկ հարմարեցված օրենքների վերաբերյալ համաձայնվելու համար, որը թույլ կտա կազմակերպել մշակութային ժառանգության կարճաժամկետ եւ երկարաժամկետ պաշտպանությունը:

### Հետագա քայլերը.

Սույն ուսումնասիրությունը կարող է օգտագործվել որպես աջակցություն քաղաքականության հարցերի ճշտմանը, իրավական եւ վարչական բարեփոխումների իրականացմանը եւ հատուկ Հայաստանի համար հարմարեցված օրենքների ընդունման համար: Օրենքում բերված առաջարկները եւ Բաժին II-ի Արդյունավետության չափանիշները կարող են ծառայել որպես ելակետ մշակութային ժառանգության պաշտպանության քաղաքականության վերաբերյալ քննարկումներ անցկացնելու համար: Այդ քննարկումներին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ անձինք, բերելով քննարկման խնդիրների իրենց յուրահատուկ ընկալումը: Քննարկումների ժամանակ, որպես մոտեցում կարող է օգտագործվել Արդյունավետության չափանիշները - երբ վերցվում են կոնկրետ դեպքեր եւ ուսումնասիրվում է թե ինչպե՞ս է ներկա համակարգը աշխատում այդ կոնկրետ դեպքում, որո՞նք են նպատակները, ինչպե՞ս կարելի է բարելավել օրենսդրական դաշտը այդ նպատակներին հասնելու համար օգտագործելով միջազգային ստանդարտները, որոնք ամրագրված են ՀՀ Սահմանադրության մեջ (հոդված), ըստ որի օրենքները չպետք է լինեն ավելի սահմանափակող քան դա անհրաժեշտ է պետության եւ հասարակության օրինական շահերի եւ պահանջների բավարարման համար: Ամենաառաջնայինը այս գործընթացում վտանգված մշակութային արժեքների պաշտպանության գործն է: Այլ հարցերը ներառում են՝ (1) ինչպե՞ս ստեղծել ֆինանսավորվող հաստատություններ, որոնք են շուկայի եւ դոկորների, մասնավորապես միջազգային կազմակերպությունների եւ սփյուռքի դոկորների, պահանջները (2) ինչպե՞ս ստեղծել վստահություն հաստատությունների, իրավական եւ վարչական համակարգի նկատմամբ, Հայաստանի մշակութային ժառանգության պաշտպանության գործընթացակցելու եւ խթանելու համար: Այս քննարկումները կարող են տեղի ունենալ ժողովների, մամուլի, ինթերնետի, էլեկտրոնային կառավարման եւ թռուցիկների տախտակի միջոցով: Ինթերնետային քննարկումը ապահովում է հասարակության առավել լայն մասնակցություն

քան մամուլի միջոցով քննարկումները կամ ժողովները: Այսպիսով որպես առաջին քայլ կարելի է ստեղծել թռուցիկների ինթերնեթային տախտակ՝ մշակութային ժառանգության ասպարեզում քաղաքականության եւ օրենքների բարելավման հանրային լայն քննարկումներ սկսելու համար:

1.2. Մեթոդաբանություն. իրավական եւ վարչական ուղեցույցներ, մոդելներ, կատարման եւ որակի վերահսկման չափանիշներ

Եւ-ը թողարկել է իրավական ուղեցույցներ մշակութային ժառանգության օրենքների մասին, որոնք ամփոփում են Եվրոպական երկրների փորձառությունը: Եւ-ն ունի նաեւ իրավական հարցերով օգնության մի կառույց՝ Եւ-ի ստանդարտների հետ ազգային օրենքները ներդաշնակեցնելու համար: Հայաստանի համար այս ուղեցույցները առաջարկվում են որպես քաղաքականության, վարչական եւ իրավական բարեփոխումների սկզբնակետ:

Ինչպես համակարգչային ծրագրերի կողերը, օրենքները գրվում են որոշակի համակարգերում աշխատելու եւ որոշակի արդյունքներ արտադրելու համար: Հնարավոր չէ տարբեր համակարգերի կամ գործառույթների համար նախատեսված կողերը համակցել միմյանց հետ, խուսափելով անհամատեղելիությունից եւ չնախատեսված հետեւանքներից: Այդ պատճառով Հայաստանի օրենքները պետք է մշակվեն՝ հաշվի առնելով առնվազն հետեւյալը.

1. Հայաստանի քաղաքականության նպատակները եւ մշակութային ժառանգության վիճակը,
2. արդյունավետության միջազգային չափանիշները,
3. Հայաստանի ընդհանուր վարչական եւ իրավական համակարգը, որը ներկայացնում է այն համատեքստը, որում պետք է գործեն մշակութային ժառանգության ոլորտի օրենքները,
4. տեղայնացված արդյունավետության չափանիշները,
5. որակի վերահսկողությունն ապահովելու (1) եւ (2)-ի հետ համատեղելի արդյունքներ, եթե ապահովված են (3) եւ (4)-ը,
6. օրենքների ստուգում նախքան դրանց ընդունումը չնախատեսված եւ անցանկալի հետեւանքները եւ դրանց սխալ գործադրումը հնարավորին չափ կանխելու համար:

Մեր կողմից ուսումնասիրվել են բազմաթիվ օտարերկրյա օրենքներ, գեկույցներ եւ ուսումնասիրություններ, որոնց պատճենները կցված են: Սրանք ներառում են նաեւ Եվրոպական եւ Անկախ Երկրների Համագործակցության («ԱՊՀ») երկրների եւ Արեւելյան Եվրոպայի երկրների օրենքների եւ պրակտիկայի ուսումնասիրությունները:

Սկսած խորհրդային ժամանակաշրջանից Հայաստանի օրենսդրությունը հիմնված է ռուսական մոդելների վրա: Այս միտումն է արտահայտված նաեւ 2001թ. ամառվանից շրջանառության մեջ գտնվող մշակույթի հիմնադրույթների մասին օրինագծում: Սա ունի իր առավելությունները եւ թերությունները: Հիմնական առավելություններն են 1) Հայաստանի իրավական եւ վարչական համակարգի հետ համատեղելիություն, 2) որակի վերահսկողություն, քանի որ դրանք մշակվել են ավելի մեծ երկրում օրենքի

մշակման համար տրամադրվող ավելի լայն հնարավորություններով: Հիմնական թերություններն այն են, որ այս օրենքները նախատեսված են 1) բազմազգ երկրի համար 2) Հայաստանի իրավական եւ վարչական համակարգերը այժմ բավականին տարբեր են ռուսական համակարգից 3) Ռուսաստանը, ինչպես եւ Հայաստանը գտնվում են անցումային շրջանում եւ այդ օրենքները Ռուսաստանի անցումային շրջանին ներհատուկ կարիքների եւ փոխզիջումների արտահայտումն է, որոնք կարող են չհամընկնել Հայաստանի կարիքների հետ:

Այլ օտարերկրյա մոդելներ: Տարբեր երկրների ուսումնասիրված մոդելներից ոչ մեկը չի կարող ուղղակիորեն կիրառվել Հայաստանում, ելնելով տեղական պայմաններից, ինստիտուտներից եւ քաղաքականության նպատակներից: Դրանք կարող են օգտագործվել որպես սկզբնակետ եւ ոչ ավելին: Դրանք պատրաստի «ծրագրային փաթեթներ» չեն, որոնք կարող են ներկայացվել Հայաստանի համատեքստում: Կարճաժամկետ հեռանկարում դրանք կարող են օգտագործվել, հաշվի առնելով այդ դաշտի կարգավորման անհետաձգելի անհրաժեշտությունը, սակայն երկարաժամկետ առումով Հայաստանի մշակութային ժառանգության պահպանման օրենքները պետք է մշակվեն հաշվի առնելով վերը նշված արդյունավետության չափանիշները:

Բոլոր ուսումնասիրված մոդելներից ամենակիրառելին Կիպրոսի եւ Բալթյան երկրների ի մոդելներն են: Դրանք հարաբերականորեն նոր օրենքներ են եւս-ի ստանդարտների շրջանակներում՝ գրված համեմատելի չափերի երկրի համար, նոր անկախացած երկրների եւ էթնիկական մեծամասնության կառուցվածքով: Կիպրոսի եւ Բալթյան երկրների մոդելները, այնուամենայնիվ, չեն ապահովում հստակ կողմնորոշիչներ ազգային եկեղեցու եւ եկեղեցական հարուստ ժառանգության դերի համար: Այդպիսի կողմնորոշիչներ չեն ապահովում նաեւ կաթոլիկ երկրների մեծ մասի մոդելները, ինչպես նաեւ նախկին խորհրդային երկրների մոդելները, ներառյալ Ռուսաստանը, որտեղ ռուսական եկեղեցու դիրքը շատ է տարբերվում, կապված մեծության, ռեսուրսների եւ ավելի քիչ տարածված սփյուռքի հետ: Ազգային եկեղեցիներ ունեցող երկրների մոդելները, ինչպիսիք են Անգլիան, Դանիան, Շվեդիան, Ֆինլանդիան եւ Հունաստանը, ավելի լավ անալոգիայի հիմք են տալիս, այնուամենայնիվ յուրաքանչյուր դեպքում յուրահատուկ պատմական, մշակութային գործոնները (օրինակ, Հունաստանի հատուկ անտիկվարիատի օրենքները, ազգային վստահության բարձր մակարդակը՝ Անգլիայում), երկրի հարստությունը եւ չափերը, իրավական համակարգի զարգացման յուրահատուկ ընթացքը չեն թույլատրում ուղղակիորեն կիրառել նրանց քաղաքականությունը Հայաստանի համատեքստում:

Արդյունավետության գույճանիշներ, որակի վերահսկողություն, չարաչափումների ստուգում

Մշակութային ժառանգության պաշտպանության ոլորտում Հայաստանի քաղաքականության հստակեցման, արդյունավետության եւ որակի մշակութային արժեքների պահպանության օրենքների վերահսկողության

չափանիշներ մշակելուն օժանդակելու համար, ինչպես նաև դրանք շտկելու եւ փորձարկելու համար, պատրաստվել են ստուգացուցակներ եւ չափանիշներ (տրված Բաժին II-ում): Դրանք հիմնված են հարցազրույցների եւ իրավական ու վարչական համակարգի վերլուծության վրա՝ հաշվի առնելով միջազգային ստանդարտները եւ տեղական իրավիճակը ու կարիքները:

Այդ ստուգացուցակները եւ չափանիշները կարող են օգնել օրենսդիրներին եւ քաղաքականություն մշակողներին մշակութային արժեքների պահպանության նոր սերնդի օրենքների մշակման գործում:

Յուրաքանչյուր նոր օրենք պետք է ապահովի հիմնական գործարքների իրականացումը միջազգայնորեն ընդունված ձեւերով:

- Որակի ապահովում - ապահովել բոլոր տարածված եւ կարելու գործարքների հեշտ կատարում: Բոլոր կարելու գործարքների իրականացումը պետք է լինի այնքան հեշտ, որքան լավագույն միջազգային պրակտիկայում,
- Արդյունավետության տեստի իրականացում որոշակի համատեքստում: Սա ապահովելու համար օրենքի նախագիծը պետք է փորձարկվի որոշակի արդյունավետության չափանիշների հիման վրա՝ հաշվի առնելով փաստացի օրենսդրական դաշտը, ինստիտուտները եւ պրակտիկան Հայաստանում:
- Չարաշահումների ստուգումը: Տիպային գործարքների մեծամասնության համար օրենքի դրույթները պետք է ստուգվեն ոչ ազնիվ անհատի տեսանկյունից, որը կարող է օգտագործել օրենքը կաշառք ստանալու, քաջքշուկներ ստեղծելու եւ արդար ու կանխատեսելի արդյունքին խոչընդոտելու համար:

### 1.3. Էլեկտրոնային կառավարում

Օրենքի էությունը կայանում է պատշաճ գործընթացի եւ հավասար պաշտպանության ապահովման մեջ: Պատշաճ գործընթացը պահանջում է (1) ծանուցում, (2) լսված լինելու հնարավորություն, (3) ռացիոնալ/պատճառաբանված որոշումների կայացում, (4) հիմնավորված բողոքարկում: Հավասար պաշտպանությունը պահանջում է օրենքների հետեւողական կիրառում եւ դրանց մասին տեղեկանալու հավասար հնարավորություն, որոնք երկուսն էլ հիմնված են տեղեկատվության հասանելիության վրա: Իրավական եւ վարչական կառուցվածքը հիրավի համարվում է ճգնաժամային երկրների, ներառյալ հետխորհրդային երկրների՝ ինչպիսին Հայաստանն է, տնտեսական զարգացման ամենաքարացած խոչընդոտներից մեկը: Էլեկտրոնային կառավարումը նպատակ ունի թափանցիկության խթանման, տեղեկատվության հավասար մատչելիության եւ իրավական ու վարչական համակարգերի վրա ազդելու հնարավորություն տալու միջոցով մեծացնել քաղաքացիների, փաստաբանների եւ հանրության շահագրգիռ խմբերի դերը: Դրանք պետք է դառնան անվիճարկելի չափանիշների վրա հիմնված կոնկրետ քայլեր, որոնցով մասնավոր եւ հանրային հատվածները կկարողանան միասին

զարգացնել բարենպաստ գործարար միջավայրի ստեղծման եւ կառավարման բարելավման համար անհրաժեշտ լծակներ եւ գործընթացներ: Այս համագործակցությունը միեւնույն ժամանակ կնպաստի մասնավոր եւ հասարակական հատվածների միջեւ վստահության աճին:

Սա հանրությանը տեղեկատվությամբ ապահովելու ամենահեշտ եւ էժան ձեւն է, հատկապես հանրության այն հատվածին, որը կարող է ազդել համակարգի վրա եւ նպաստել համակարգային բարեփոխումներին: Այս ծրագրերը հեշտ է թարմացնել: Այն հեշտ է նաեւ որոնման իմաստով: Տեղեկությունները կարելի է ստանալ ամեն տեղից, մինչդեռ տպագրված նյութերը թանկ են, նրանցում պարունակվող տեղեկությունները արագ հնանում են, դրանց հաշվառումը դժվար է եւ ծախսատար եւ դրանք արագ վերանում են հանրային շրջանառությունից: Էլեկտրոնային կառավարումը ներառում է մշակութային գույքի ինթերնետային գույքագրում, էլեկտրոնային թանգարաններ եւ գրադարաններ, թույլտվություններ ստանալու համար դիմումների ընդունում ինթերնետի միջոցով, նոր օրենքների եւ ենթօրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ ծանուցումներ եւ առաջարկների ընդունում ինթերնետի միջոցով:

## 2. Մշակութային ժառանգության սահմանումը

Որպես ներդաշնակեցման գործընթացի մաս շատ երկրներ ընդունում են ԵԽ-ի ընդունած տերմինոլոգիան: Չնայած ոչ նյութական մշակութային ժառանգությունը ոչ պակաս կարելու է, քան նյութական ժառանգությունը, սույն ուսումնասիրությունը կենտրոնանում է նյութական շարժական եւ անշարժ արժեքների վրա, քանի որ դրանք են Հայաստանի օրենքների կարգավորման անմիջական առարկան:

Մշակույթի հիմնադրույթների նոր օրենքի նախագիծը տալիս է մշակութային արժեքների լայն եւ համապարփակ սահմանում, որը ներառում է “մշակույթի և արվեստի երկեր, գեղարվեստական ժողովրդական ստեղծագործություններ և արհեստներ, բանահյուսություն, բարոյագիտական և գեղագիտական գաղափարատիպեր (իդեալներ), վարվեցողության կանոններ և ձևեր, լեզուներ, բարբառներ և խոսվածքներ, ազգային ավանդություններ և սովորույթներ, պատմաաշխարհագրական տեղանուններ, մշակութային գործունեության մասին գիտական հետազոտությունների արդյունքներ և մեթոդներ, մշակութային ժառանգության առարկաներ (օբյեկտներ):” Այն նաեւ տալիս է մշակութային ժառանգության սահմանում, որպես “անցյալում ստեղծված մշակութային արժեքների ամբողջություն, որ Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի մշակութային ինքնատիպության պահպանման ու զարգացման, համաշխարհային քաղաքակրթության մեջ ներդրման համար հնագիտական, ծարտարապետական, պատմական, գեղագիտական կամ սոցիալ-մշակութային հայեցակետից ունի կարևոր նշանակություն”: Այս սահմանումները չեն համապատասխանում ԵԽ-ի կամ միջազգային սահմանումներին:

Քանի որ ԵԽ-ի նորմերը ներառում են միջազգային ստանդարտները եւ ավելի հաճախ ու ակտիվորեն են թարմացվում մեկնաբանություններով եւ առաջարկություններով, եւ առավել ուղղակիորեն եւ անմիջականորեն

կիրառելի են Հայաստանի օրենսդրական դաշտի զարգացման տեսանկյունից, սույն զեկույցում կորդեգրվի ԵԽ-ի մոտեցումը:

## 2.1. Անշարժ մշակութային արժեքներ

Գոյություն ունեն անշարժ մշակութային արժեքների սահմանման մի քանի միջազգայնորեն ընդունված տարբերակներ: Հայաստանի օրենսդրությանը ուղղակիորեն կիրառելի ստանդարտների երկու հիմնական աղբյուրներից են. Միացյալ ազգերի կազմակերպության կրթության, գիտության եւ մշակույթի կազմակերպության («ՅՈՒՆԵՍԿՈ») Կոնվենցիան աշխարհի մշակութային եւ բնական ժառանգության պահպանության մասին (1972), որով ստեղծվեց Համաշխարհային ժառանգության ցուցակ եւ դրա հետ կապված ծրագրեր, եւ ԵԽ-ի 1985թ. (Գրանադա) ու 1992թ. (Մալթա) Կոնվենցիաները համապատասխանաբար ծարտարապետական եւ հնագիտական հուշարձանների վերաբերյալ: Միտումը կայանում է արհեստական եւ բնական տեղանքների ինտեգրացիայի եւ պահպանման ու քաղաքաշինության պլանավորման գործունեությունների ինտեգրացիայի մեջ: Այնպիսի կազմակերպություններ ինչպիսիք են Հուշարձանների եւ Վայրերի Միջազգային Խորհուրդը («ICOMOS») եւ Բնության եւ բնական ռեսուրսների կոնսերվացման միջազգային միությունը («IUCN») ունեն ուղեցույցներ օրենսդրական դաշտի նկատմամբ ինտեգրված մոտեցման եւ տերմինոլոգիայի վերաբերյալ: Այդ միտումն են արտահայտում, օրինակ, ԵԽ-ի անդամ երկրների նախարարների խորհրդի Առաջարկ No. R (95)-ը մշակութային միջավայրի ինտեգրված պահպանման վերաբերյալ (ընդունված 1995թ. սեպտեմբերի 11-ին, նախարարների տեղակալների 543 հանդիպման կողմից): Մշակութային արժեքները փչացումից կանխելուց հետո, ամենաառաջին գերապատվություններից է հանդիսանում անշարժ մշակութային արժեքների գույքագրումը: Սա պահանջում է միջազգայնորեն ընդունված սահմանում: ՀՀ “Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների եւ պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին” օրենքի սահմանումը նման է, բայց նույնական չէ միջազգային ստանդարտներին:

### 1972թ. ՅՈՒՆԵՍԿՈ-ի Կոնվենցիայի սահմանումները

1. հուշարձաններ. ճարտարապետական, հուշարձանային քանդակագործության եւ զեղանկարչության ստեղծագործությունները, հնագիտական բնույթի տարրերը կամ կառուցվածքները, արձանագրություններ, անձավային կացարանները եւ տարրերի համադրումները, որոնք ունեն պատմության, արվեստի եւ գիտության տեսանկյունից համընդգրկուն արժեք;
2. համալիրներ՝ մեկուսացված կամ իրար միացած կառույցների խմբեր, որոնք իրենց ճարտարապետության, միասեռության կամ բնապատկերում իրենց տեղի շնորհիվ հանդիսանում են պատմության, արվեստի եւ գիտության տեսանկյունից բացառիկ համընդգրկուն արժեք;

3. տեսարժան վայրեր. ձեռակերտ աշխատանքները կամ մարդու եւ բնության համատեղ ստեղծագործությունները, ինչպես նաեւ հնագիտական տեսարժան վայրերը ընդգրկող գոտիները, որոնք հանդիսանում են պատմական, էսթետիկական, ազգագրական կամ մարդաբանական տեսանկյունից համընդգրկուն արժեք:
 

Եվրոպայի ծարտարապետական ժառանգության պահպանման մասին Գրանադայի Կոնվենցիայի սահմանումները (1985)
1. հուշարձաններ՝ ակնհայտ պատմական, հնագիտական, գեղագիտական, գիտական, սոցիալական կամ տեխնիկական կարեւորություն ունեցող բոլոր շենքերը եւ կառույցները՝ ներառյալ դրանց ներքին հարդարանքը:
2. համալիրներ՝ ակնհայտ պատմական, հնագիտական, գեղարվեստական, գիտական, սոցիալական եւ տեխնիկական կարեւորություն ունեցող քաղաքային եւ գյուղական շենքերի համասեռ խմբեր, որոնք բավարար կապակցված են քարտեզագրորեն սահմանելի միավորներ ձեւավորելու համար;
3. տեսարժան վայրեր՝ ձեռակերտ աշխատանքները կամ մարդու եւ բնության համատեղ ստեղծագործությունները, մասնակի կառուցապատումներով, որոնք բավարար չափով յուրահատուկ են ու քարտեզագրորեն համասեռ եւ ունեն ակնհայտ պատմական, հնագիտական, գեղագիտական, գիտական եւ սոցիալական նշանակություն:

## 2.2. Շարժական մշակութային ժառանգություն

Շարժական մշակութային ժառանգությունը համընդգրկուն ձեւով սահմանվել է 1970թ. Փարիզի Կոնվենցիայում: Այդ սահմանմանը համահունչ է նաեւ 77 օրենքը մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին: Փարիզի Կոնվենցիան սահմանում է՝

1. բուսական, կենդանական եւ երկրաբանական հազվագյուտ նմուշներ եւ հավաքածուներ, անատոմիայի եւ հնէագիտության համար հետաքրքրություն ներկայացնող առարկաներ;
2. պատմական արժեքներ, ներառյալ գիտության եւ տեխնիկայի, ռազմական եւ սոցիալական կյանքի, ինչպես նաեւ նշանավոր մարդկանց, քաղաքական գործիչների, գիտնականների եւ արվեստի գործիչների կյանքի ու գործունեության հետ կապված առարկաներ;
3. հնագիտական պեղումներից (կանոնավոր եւ պատահական) ստացված գտածոներ;
4. գեղագիտական կամ պատմական հուշարձանների տարրեր կամ հնագիտական տեղանքներ, որոնք բաժանվել են մասերի;
5. 100 տարուց ավել հնության անտիկվարիատ, ինչպիսիք են արձանագրությունները, մետաղադրամները եւ փորագրված դրոշմները
6. գեղագիտական արժեքները, ինչպիսիք են՝

ա) ամբողջովին կամ մասամբ ձեռքով արված պատկերներ եւ նկարներ՝ ցանկացած միջոցով եւ նյութերով կատարված (բացառությամբ արդյունաբերական նախագծերի եւ ձեռքով ձեւավորված արդյունաբերական ապրանքների)

բ) յուրատեսակ քանդակներ եւ քանդակագործական արվեստի գործեր

գ) փորագրություններ, արտասպություններ եւ դրոշմվածքածեւեր

դ) յուրատեսակ գեղագիտական համալիրներ եւ մոնտաժներ ցանկացած նյութից;

7. հատուկ հետաքրքրության (պատմական, գեղարվեստական, գիտական, գրական եւ այլն) առանձին կամ հավաքածու հնագույն գրքեր, ձեռագրեր, փաստաթղթեր եւ հրատարակություններ

8. առանձին կամ հավաքածու փոստային նամականիշներ, այլ նամականիշային նյութեր;

9. արխիվներ, ներառյալ ձայնագրական, տեսագրական, լուսանկարչական եւ կինոարխիվներ

10. 100 տարուց ավել հնության կահույք եւ երաժշտական գործիքներ

Շարժական մշակութային ժառանգությունը ներառված է նաեւ ԵԽ-ի ուղեցույցներում՝ որպէս մշակութային արժեքների երկու կարեւորագույն տեսակներից մեկը: Շարժական մշակութային արժեքներին առընչվող հարցերը դիտարկվում են հինգ հիմնական ուղղություններով. (1) տեսակները, (2) պահպանմամբ զբաղվող ինստիտուտները եւ քաղաքականությունը (3) շրջանառությունը, ներառյալ արտահանումը եւ ներմուծումը (4) օրինական սեփականատերերի իրավունքների վերականգնումը (5) շարժական գույքի նկատմամբ մտավոր սեփականության պաշտպանությունը:

(1) շարժական գույքի տեսակներն են գրքերը, ձեռագրերը, արվեստի գործերը, գեղանկարչության եւ կիրառական արվեստի գործերը, ձեռագործ իրերը, գործվածքները, ձայնագրությունները, կինոնկարները, ինչպէս նաեւ կատարողական արվեստի արժեքները, ինչպիսիք են երաժշտական գործիքները, զգեստները, կինոնկարները, ազգագրական ուսումնասիրությունները եւ այլ միջոցները:

(2) ինստիտուտները ներառում են գրադարանները, արխիվները, թանգարանները, հետազոտական եւ կրթական ինստիտուտները, եկեղեցիները եւ այլ հանրային եւ մասնավոր հավաքածուները, հրատարակչությունները, ինքերներթային էջերը՝ վիրտուալ գրադարանները եւ թանգարանները:

(3) շրջանառությունը ներառում է գույքագրումը, առեւտրային գործարքների կարգավորումը, արտասահման փոխանցումները, ժամանակավոր արտահանումը եւ ներմուծումը;

(4) օրինական սեփականատերերին մշակութային արժեքների վերադարձը: Սա հանդիսանում է միջազգային օրենքի եւ ԵԽ-ի կոնվենցիաների եւ համաձայնագրերի նորմ:



(5) շարժական գույքի նկատմամբ մտավոր սեփականության պաշտպանությունը՝ օրինակ հեղինակային իրավունք, անօրինական վերարտադրությունից պաշտպանություն, շրջանառության ռոյալթիները վերավաճառքի դեպքում:

2.3. Ոչ նյութական/ներկա մշակույթ, որը ներառում է բոլոր կատարողական արվեստները, ինչպիսիք են թատրոնը, երաժշտությունը, պարը եւ կինոն, ինչպես նաեւ ժողովրդական արվեստը, արհեստները եւ ավանդույթները:

ՅՈՒՆԵՍԿՈ-ն սահմանում է այն հետեւյալ կերպ. «Ոչ նյութական ժառանգությունը կարող է սահմանվել որպես ավանդական կամ ժողովրդական մշակույթի բոլոր ձեւերի ամբողջություն, այսինքն համատեղ ստեղծագործություններ, որոնք ստեղծվել են տվյալ համայնքում եւ հիմնված են ավանդույթի վրա: Այս ստեղծագործությունները փոխանցվում են բանավոր կամ նշանների միջոցով եւ վերափոխվում են ժամանակի ընթացքում կոլեկտիվ վերարտադրման միջոցով: Դրանք ներառում են բանավոր ավանդույթները, բարքերը, լեզուն, երաժշտությունը, պարը, ծեսերը, տոները, ավանդական բժշկությունը, ազգային ճաշատեսակները եւ բոլոր տեսակի այլ գիտելիքները, որոնք կապված են նյութական մշակույթի հետ, ինչպիսիք են գործիքները եւ կացարանները»:

Ոչ նյութական մշակույթի պահպանման մեջ ներգրավված հաստատություններն են թանգարանները, զրադարանները, հետազոտական եւ կրթական ինստիտուտները, եկեղեցիները, թատրոնները, նվագախմբերը, պարային համույթները, ժողովրդական արհեստների արհեստակցական միությունները եւ արհեստանոցները, ատելյեները, կոնսերվատորիաները, կինոստուդիաները, ձայնագրման ստուդիաները, լրատվամիջոցները, ինթերնեթը եւ այլ ֆորմալ եւ ոչ ֆորմալ հաստատությունները, որտեղ այդ մշակույթը ստեղծվում է, փոխանցվում (ուսուցվում) է կամ ներկայացվում:

### 3. Ընդհանուր Քաղաքականության Նպատակները

#### 3.1 Պաշտպանություն եւ Պահպանություն, Գույքագրում եւ Դասակարգում

Մշակութային ժառանգության պահպանումը ինքնին վերջնական նպատակ է, ինչպես նաեւ մի շարք այլ կարեւոր նպատակների հասնելու միջոց: Յուրաքանչյուր սերունդ պահպանում է, պաշտպանում եւ ավելացնում մշակութային ժառանգությունը հաջորդ սերունդների համար: Մշակութային ժառանգության պահպանման պատճառները եւ դրան վերաբերվող հայեցակարգերը բազմաթիվ են, սկսած կոնսերվացումից կամ փլուզման կանխարգելումից, վերջացրած վերականգնմամբ կամ այլ նպատակների համար օգտագործման համար հարմարեցմամբ:

Մշակութային արժեքների փլուզումը կամ վիճակի վատթարացումը կանխելուց հետո, ամենաառաջնայինը դրանց գույքագրումն է եւ

դասակարգումը առարկայական չափանիշների հիման վրա, հանրության համար հասանելի եղանակով:

### 3.2 Ազգային Ինքնություն

Ազգային ինքնությունը կարելու է խթանել և մշակութային ժառանգության պահպանման համար, ոչ միայն այդ ազգի համար այլ նաև մյուս ազգերի համար: Այլ ազգերի մշակույթների նկատմամբ հարգանքը ներկայումս, կարող է դառնալ անցյալում պատճառած վերքերի սպեղանի: Նյութական արժեքների բացակայության դեպքում, մշակույթը դառնում է վերացական եւ դժվարանում է դրա ճանաչումը, եւ երբ ոչ նյութական մշակույթի փոխանցումը եւ վերարտադրությունը դադարում է, այն դառնում է անկենդան եւ սկսում է վերանալ: Բնական զանազանության նման մշակութային զանազանությունը նույնպես մարդկային հարստության մաս է կազմում, եւ դրա ցանկացած կորուստ վնասում է համաշխարհային մշակութային ժառանգությանը:

### 3.3 Մշակութային Ջրոսաշրջություն

Ջրոսաշրջությունը մշակութային փոխանակման եւ միջազգային կապերի ձեւ է, որը խթանում է մշակութային զանազանության ճանաչումը եւ զնահատումը: Ջրոսաշրջությունը տալիս է մշակութային ժառանգության պահպանությանը եւ դրա պատշաճ ներկայացմանը տնտեսական բաղադրիչ, միեւնույն ժամանակ սպառնում է մշակութային ժառանգությանը՝ դարձնելով դա առելուրի առարկա: Հայաստանի նման երկրի համար պետք է գտնվի տարբերակված մշակութային զբոսաշրջության տեսակ, որպեսզի ապահովվի, որ զբոսաշրջության քանակի ավելացումով, չնվազի որակը եւ Հայաստանի դիրքը, որպես անդորրի երկիր, որպես լեռներում ծվարած, մաքուր եւ խորհրդավոր Արեւլյան Քրիստոնեության երկիր:

Մշակութային զբոսաշրջությունը շատ կարելու է Հայաստանի եւ հայերի համար, քանի որ Հայաստանի պատմական տարածքը ընկած է Հայաստանի Հանրապետության ժամանակակից սահմաններից դուրս, եւ Հայաստանի պատմության մի շատ մեծ մաս կապված է Հայաստանի սահմաններից դուրս տեղի ունեցած պատմական դեպքերի հետ: Քրիստոնեական/կրոնական թեմաններով այն կապված է Երուսաղեմի եւ վաղ քրիստոնեական բազմաթիվ սրբավայրերի ու Առաքյալների կատարած ճանապարհորդությունների հետ: Հետագայում այդ կապերը զարգացան Կիլիկիայի եւ Երուսաղեմի Հայկական Թաղամասի միջոցով խաչակիրների հետ շփումների շնորհիվ: Այլ մշակութային ճանապարհներ էին Եվրոպայից Հեռավոր Արեւելք ճանապարհները, այնպիսիք ինչպիսիք էին Մարկո Պոլոյի ճանապարհը եւ Մետաքսի Ուղին, ինչպես նաև հյուսիս հարավ ճանապարհները Ռուսաստանից Իրանի վրայով դեպի Մերձավոր Արեւելք եւ Պարսկաստան: Հայաստանը որպես հնդեվրոպական լեզվաընտանիքի բնօրրան կապված է թե

արելելքին թե արեւմուտքին, ինչպես նաեւ Կովկասին եւ Մերձավոր Արեւելքին:

### 3.4 Հայաստանի համար հատուկ կարեւորության հարգեր

#### 3.4.1 Փոքր մասշտաբ եւ կենսունակություն

Մշակութային ժառանգության պահպանման գործում Հայաստանը հանդիպում է մի շարք յուրօրինակ խնդիրների: Չնայած այն բանին, որ Հայաստանը հարուստ մշակույթով հնագույն ժողովուրդ է, Հայաստանի տարածքի եւ բնակչության փոքր չափերը, խոչընդոտում են միջազգային ասպարեզում Հայաստանի մշակույթի մրցունակությունը այլ, մեծ երկրների մշակույթների հետ, որոնք ունեն առավել մեծ շուկա՝ խթանելու համար իրենց մշակութային ժառանգությունը: Այնպես ինչպես տնտեսության եւ պետության այլ ասպարեզներում փոքր մասշտաբը պակասեցնում է ռեսուրսները եւ մեծացնում է մարքեթինգի, վերադիր եւ կառավարման ծախսերը մշակութային ժառանգության պաշտպանության ասպարեզում: Բնակչության կողմից մշակույթի բարձր գնահատման պատճառով Հայաստանում մշակութային ժառանգության ուղղվելիք ֆինանսական միջոցների պահանջարկը ավելի մեծ է քան մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի միլիարդն մակարդակ ունեցող այլ երկրներում:

#### 3.4.2 Սփյուռք

Հայաստանի մշակութային ժառանգության մեկ այլ կարեւոր բաղադրիչ է հայ բազմադարյա Սփյուռքը, որը աշխարհով մեկ տարածեց հայկական մշակույթը, ստեղծելով Հայ մշակութային կյանքի կարեւոր կենտրոններ Հայրենիքից դուրս: Հայաստանի մշակութային ժառանգության այս առանձնահատկությունը ավելի է բարդացնում մշակութային ժառանգության գույքագրումը եւ հաշվառումը, մասնավորապես շարժական արժեքների համար (արվեստի գործեր, արխիվներ), ինչպես նաեւ ոչ նյութական մշակույթի համար (ազգային ավանդույթներ, պարեր, բանահյուսություն եւ այլն): Եթե հաստատությունները, օրենքները եւ քաղաքականությունը պատշաճորեն մշակվեն, Սփյուռքը, իր միջոցների շնորհիվ, կարող է դառնալ Հայաստանի մշակութային ժառանգության աջակից եւ այն համաշխարհային ասպարեզում տարածող, ինչպես նաեւ կարող է դառնալ սեփական փորձով Հայաստանում մշակութային զբոսաշրջության առաջին խթանողը:

#### 3.4.3 Արտասահմանում գտնվող մշակութային արժեքներ

Հայաստանի մշակութային ժառանգության անշարժ արժեքների նշանակալից մասը գտնվում է Թուրքիայում, Վրաստանում, Ադրբեջանում եւ Իրանում: Ինչպես հայ ժողովրդի այնպես էլ հայկական մշակութային ժառանգության մի մեծ մաս գտնվում է Հայաստանի Հանրապետության ժամանակակից սահմաններից դուրս, ուստի արտասահմանում գտնվող մշակութային արժեքները մեծ նշանակություն ունեն Հայաստանի մշակույթի համար, մասնավորապես անշարժ մշակութային արժեքները: Հայաստանի պատմական տարածքի մեծ մասը գտնվում է այսօրվա արեւելյան Թուրքիայի տարածքում, որտեղից հայերը տեղահան արվեցին 1915թ. Մեծ եղեռնի ընթացքում: Հայ միջնադարյա Կիլիկյան քաղաքակրթության տարածքի մեծ մասը նույնպես գտնվում Թուրքիայի ժամանակակից տարածքում, ինչպես նաեւ Մերձավոր Արեւելքի այլ երկրների տարածքներում: Այս պատճառով շատ կարելի էր միջազգային համագործակցությունը հայկական մշակութային ժառանգության պահպանման համար: Միջազգային պայմանագրերի եւ ծրագրերի միջոցով հայկական մշակութային ժառանգության պաշտպանությունը հատկապես կարելի է Թուրքիայում, Ադրբեջանում եւ Վրաստանում, որտեղ հայկական մշակութային հուշարձանները քանդվում եւ ոչնչացվում են:

Վերջերս ԵՄ-ի Մշակույթի, գիտության եւ կրթության հանձնաժողովի նիստի ժամանակ մտահոգություն հայտնվեց Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող հայկական մշակութային արժեքների վիճակի վերաբերյալ: Մասնավորապես նշվեց, որ 1912թ. Արեւմտյան Հայաստանում (Թուրքիայի ժամանակակից տարածք) կար հայկական գործող 2,260 եկեղեցի եւ վանք, որոնցից 2,150 ավերվել են 1915թ. Մեծ եղեռնի ընթացքում: 1974թ. ՅՈՒՆԵՍԿՈ-ի զեկույցի համաձայն Մեծ եղեռնից հետո Թուրքիայում պահպանված 913 հայկական հուշարձաններից 464-ը անբողջությամբ ավերված էին, 254-ը հավասարեցված էին գետնին, իսկ 197-ը անհասպաղ վերանորոգման կարիք ունեին: Ադրբեջանում հայկական մշակութային ժառանգությունը գտնվում է նույն վիճակում: Այս տվյալները մեկ անգամ եւս կարելի էր հաստատել Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող մշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ ԵՄ-ի շրջանակներում անհասպաղ միջոցառումների ձեռնարկման հարցը: Ավելին, հայկական մշակութային հուշարձաններ կան նաեւ Արեւմտյան Եվրոպայում, Ռուսաստանում, Հնդկաստանում, Եգիպտոսում, Պաղեստինում, Մերձավոր եւ Հեռավոր Արեւելքում, ինչը ավելի է մեծացնում հայկական մշակութային ժառանգության պահպանության սահմանները:

3.4.4 Հին եւ ժամանակակից քաղաքակրթության խաչմերուկ եւ հանգրվան

Հայկական Լեռնաշխարհը մարդկային քաղաքակրթության բնօրրաններից մեկն է, որտեղ գտնվում են հնդեվրոպական լեզուների արմատները: Այն գտնվում է սեմական եւ կովկասյան հնագույն մշակույթների հարեւանությամբ: Հայաստանի եւ հայկական մշակույթի հետ տարբեր ժամանակներում շփվել են խեթերը, ուրարտացիները, ասորիները, մեդիացիները, պարսիկները, մակեդոնացիները, հույները, հռոմեացիները, բյուզանդացիները, պարթեւները, արաբները, վրացիները, աղվանները, եվրոպական խաչակիրները, հետագայում թուրքերը, մոնղոլները, եւ ռուսները: Այսպիսով Հայաստանի մշակույթը համաշխարհային մշակույթի կարեւոր բաղադրիչներից է:

3.4.5 Ֆինանսական ռեսուրսների սղություն

Ինչպես նշվեց Հայաստանը ունի մեծ եւ բազմաբնույթ մշակույթ՝ չնայած այսօրվա իր համեմատական փոքր տարածքի եւ բնակչության: Ի հավելումն դրան համայնավարությունից դեպի շուկայական տնտեսության անցումը եւ համաշխարհային գլոբալ տնտեսության մեջ ինտեգրման գործընթացները բացատրում են ռեսուրսների սղությունը: Հայկական մշակութային ժառանգությունը չի ստանում համապատասխան ֆինանսավորում: Ցայսօր չեն ստեղծվել այնպիսի մշակութային ֆոնդեր, մշակութային ժառանգության հիմնադրամներ, որոնք կկարողանային լուծել Հայաստանի մշակութային ժառանգության պահպանության եւ տարածման ընթացքում առաջացող հիմնախնդիրները:

3.4.6 Անցում համայնավարությունից

Համայնավարությունից դեպի շուկայական տնտեսություն անցումը Հայաստանի մշակութային ժառանգության մեծ մասը թողել է սակավառեսուրս պայմաններում: Սա մանավանդ վերաբերվում է մշակութաբաններին եւ արվեստի գործիչներին, որոնք դեռ չեն գտել իրենց տեղը շուկայական տնտեսության մեջ եւ որոնց մասնագիտական հեռանկարները չեն երեւում ոչ միայն այս սերնդի այլ նաեւ հաջորդ սերունդների համար: Միեւնույն ժամանակ Հայաստանի անկախությունը նոր շունչ հաղորդեց հայկական մշակույթին, որը ձերբազատվեց սովետական եւ ռուսական վերահսկողությունից եւ վերագտավ իր ինքնությունը: Այսօր հայկական մշակույթը մրցակցում է առավել լավ ֆինանսավորվող, ավելի տարածված մշակույթների հետ: Ավելին, հայկական մշակույթի եւ պատմության որոշ բնագավառներ, մասնավորապես եկեղեցին եւ կրոնական մշակույթը, որոնք խորհրդային շրջանում ճնշվում էին եւ

ենթարկվում զրկանքների, վերականգնում են իրենց պատճառված վնասները, ֆինանսական սղության պայմաններում դիմագրավելով նաև համաշխարհային ավելի լավ ֆինանսավորվող մշակույթի, ազատ շուկայի եւ մոդեռնիզացիայի ճնշումներին: Այս իմաստով ժամանակակից զանգվածային եւ ժողովրդական արվեստները, այնպիսիք ինչպիսիք են կինոն, երաժշտությունը, պարը ավելի են վտանգված, քան լեզուն եւ գրականությունը:

### 3.4.7 Եկեղեցի-Պետություն հարաբերություններ

Ինչպես ցույց տվեց քրիստոնեության որպես պետական կրոն հռչակման 1700 ամյակի տոնումը, եկեղեցին կենտրոնական դեր է խաղացել հայկական մշակույթում: Եկեղեցին Հայաստանի մշակութային ժառանգության ստեղծման, կառավարման եւ պահպանման գործում ամենակարեւոր հաստատություններից է: Դժվար է գերազնահատել այն դերակատարությունը, որը եկեղեցին շարունակում է կատարել Հայաստանի եւ, մանավանդ, Սփյուռքի համար: Եկեղեցին այսօր վերականգնում է Մեծ Եղեռնի եւ սովետական հալածանքներից կրած իր վնասները, չնայած ցայսօր էլ այն դեռ չունի մարդկային եւ ֆինանսական բավարար ռեսուրսներ եւ վարչական համակարգ աշխարհով մեկ տարածված ժառանգությունը հետ պահանջելու եւ կառավարելու համար: Այնուամենայնիվ պետության եւ եկեղեցու միջեւ տարածայնություններից խուսափելու, ինչպես նաև պետության եւ եկեղեցու անջատման սահմանադրական եւ միջազգային իրավական նորմերը պահպանելու համար, եկեղեցու գույքային պահանջների լուծումը ավելի հրատապ է դառնում: Խորհրդային շրջանից հետո մեծ պահանջ կա Հայաստանի եկեղեցիները, ծեմարանները, ուխտատեղիները ըստ իրենց նշանակության օգտագործելու համար: Զբոսաշրջության համար գրավչությունը չպետք է վնասի հուշարձանների օգտագործմանը ըստ իրենց նշանակության, պատմական պահպանվածությանը եւ նվիրական մթնոլորտի պահպանմանը: Հայաստանից դուրս գտնվող վտանգված մշակութային արժեքների համար անհետաձգելի միջամտության ձեւ կարող է լինել այդ արժեքների սեփականության վերադարձը եկեղեցուն, քանի որ երկրների մեծ մասում եկեղեցական սեփականությունը առավել պաշտպանված է, քան աշխարհիկը: Հայաստանում գտնվող մշակութային արժեքների համար սեփականության եւ օգտագործման հարցերը պետք է կարգավորվեն այնպես, որպեսզի եկեղեցու եւ պետության միջեւ տարածայնությունների հնարավորությունները հասցվեն նվազագույնի, միեւնույն ժամանակ ապահովվելով որ մշակութային ժառանգության առարկանները լինեն մատչելի լայն հասարակության համար, եւ պետությունը կարողանա

*Միջամտել դրանց պաշտպանության գործին՝ արտակարգ  
իրավիճակներում:*

#### 4. Առաջարկների ամփոփագիր

##### 4.1 Ռիսկի գնահատում

Հայաստանի մշակութային ժառանգության մեծ մասը, ինչպես անշարժ, շարժական այնպես էլ ոչ նյութական, վտանգված է: Դա կապված է խորհրդային շրջանում կիրառված քաղաքականության, անցումային շրջանի միջոցների սղության եւ Սփյուռքում տեղի ունեցող սերնդափոխության հետ: Այժմ ամենապահանջված միջոցառումները պահպանության եւ պաշտպանության հետեւողական ծրագրերն են, որոնց նպատակը պետք է լինի.

- տարբերակված պահպանության կիրառումը,
- վտանգված ժառանգության դասակարգումը ըստ առաջնայնության ինչպես (1) մշակութային նշանակության իմաստով, այնպես էլ (2) սպառնացող վտանգի չափով:
- ռեսուրսների ռացիոնալ բաշխումը, խուսափելու համար գույքի անդառնալի կորուստներից եւ մասնագետների անվերադարձ արտահոսքից:
- համապատասխան միջոցների ձեռնարկումը, որոնք կապահովեն միջպետական խնդիրների լուծումը, հաշվի առնելով, որ Հայաստանի մշակութային ժառանգության մի մեծ մաս գտնվում է Հայաստանի Հանրապետության ժամանակակից սահմաններից դուրս:
- հաշվի առնելով միջոցների սակավության պատճառով պատշաճ հետազոտությունների իրագործման դժվարությունները՝ հնագիտական պեղումների հրապարակների եւ թանգարանային հավաքածուների պահպանումը, դրանց անդառնալի կորուստները կանխելու համար:

##### 4.2 Գույքագրում եւ դասակարգում

Ցանկացած մշակութային ժառանգության պաշտպանության, կառավարման եւ օգտագործման համակարգի հիմքը հանդիսանում է տվյալների կենտրոնացված շտեմարանը, որը տեղեկություն է պարունակում մշակութային ժառանգության յուրաքանչյուր առարկայի մասին, դասակարգում է դրանք օբյեկտիվ չափանիշների հիման վրա, հստակ նշելով առարկաների յուրաքանչյուր կատեգորիայի համար նախատեսված իրավունքները եւ պարտականությունները: Տվյալների շտեմարանները պետք է մատչելի լինեն մշակութային ժառանգության պաշտպանության հետ առնչվող բոլոր պետական եւ մասնավոր կազմակերպությունների եւ անհատների համար: Բնական, անշարժ, շարժական եւ ոչ նյութական մշակութային ժառանգության համապարփակ գույքագրումը նպատակահարմար է նաեւ արդյունավետության, հետեւողականության, կանխատեսելիության առումով. այն հեշտացնում է մշակութային փոխկապակցված ոլորտներում իրականացվող քաղաքականությունների համակարգումը եւ տեղեկատվության միջազգային փոխանակումը: Գույքագրման



նորմեր եւ համակարգեր մշակվել են եւս, Թանգարանների Միջազգային Խորհրդի («ICOM»), Արխիվների Միջազգային Խորհրդի («ICA»), Թանգարանային փաստաթղթավորման միության («MDA») եւ այլ կազմակերպությունների կողմից: Հայաստանի գույքագրումը պետք է համապատասխանեցվի գույքագրման միջազգային չափանիշներին, Գրանադայի Կոնվենցիայի 17-20 հոդվածներով նախատեսված տեղեկատվության փոխանակման համակարգերը ստեղծելու համար: Տես օրինակ ճարտարապետական ժառանգությանը, պատմական շենքերին եւ հուշարձաններին առնչվող փաստաթղթերի, մեթոդների եւ համակարգերի կողորդինացման եւս թիվ R(95) 3 առաջարկը ընդունված 1995թ. հունվարի 11-ին:

#### 4.3 ԵՒ-ի միջազգային նորմերի հետ ներդաշնակեցում եւ ինտեգրացիա

Եվրոպայի Խորհրդին եւ մի շարք այլ միջազգային կազմակերպություններին անդամակցելու եւ միջազգային համաձայնագրերին միանալու հետ կապված՝ Հայաստանը պարտավորություն է ստանձնել համապատասխանեցնել իր ազգային օրենքները ԵՒ-ի եւ միջազգային համաձայնագրերի պահանջներին: Այս պահանջները հիմնված են միջազգային փորձի վրա եւ տալիս են հիմնական խնդիրների լուծում միջազգային դրական փորձի համաձայն: Այդ խնդիրների շարքից կարելի է առանձնացնել հետևյալը.

- տերմինաբանությունը եւ ստանդարտների ու ընթացակարգերի համապատասխանությունը,
- արտասահմանում գտնվող մշակութային ժառանգության արդյունավետ պաշտպանությունը,
- իշխանության բաշխումը համակարգի ներսում.
  - (1) քաղաքականություն,
  - (2) սեփականություն,
  - (3) կարգավորում եւ
  - (4) վերահսկում

Համաձայն Գրենադային Կոնվենցիայի 20-րդ հոդվածի եւ ԵՒ-ի պահանջներին Հայաստանը ունի նաեւ մոնիթորինգի եւ հաշվետվություններ հանձնելու պարտավորություն:

#### 4.4 Արդյունավետություն, ռեսուրսների արդյունավետ բաշխում

Ռեսուրսների հայթայթումը եւ բաշխումը անկախությունից ի վեր Հայաստանի մշակութային ժառանգության ամենահիմնական խնդիրն է: Ինչպես նշվել է վերելում, Հայաստանի մշակութային ժառանգությունը վտանգված է վերանորոգումների ու շահումների եւ արդյունավետ վերահսկողության բացակայության պատճառով: Համակարգը սփռված է, իսկ հիմնական ծանրությունը դրված է օգտագործողի ուսերին, որը իր գործողությունները ՀՀ օրենքների համապատասխան իրականացնելու համար պետք է մի շարք հաստատությունների որոշումներ ստանա:

Այսպիսով, շատ անարդյունավետ է իրավական նորմերի իրագործումը, եթե նույնիսկ դրանք իրավական տեսակետից ընդունելի են: ԵՒՆ-ն եւ ՅՈՒՆԵՍԿՈՒ-ն խորհուրդ են տալիս միասնականացնել մշակութային ժառանգության կառավարման համակարգը: Կան երկրներ, որոնք այդպիսի միասնականացմամբ հասել են բարձր արդյունավետության: Դրանցից Հայաստանի հետ համեմատելի օրինակ է Կիպրոսը:

Կենտրոնացված եւ ապակենտրոնացված համակարգերի համեմատության մեկ այլ կարեւոր հանգամանք է ծախսերի արդյունավետությունը, այսինքն պարզել թե որ ֆունկցիաներն են, որ ավելի արդյունավետ է կենտրոնացնել՝ իսկ որոնք՝ ապակենտրոնացնել հաշվի առնելով Հայաստանի համեմատական փոքր չափսերը, եւ ոչ մեծ բնակչությունը, եւ ընդունելով, որ կան վերահսկողության համար համապատասխան կոմունիկացիաներ եւ ծանապարհներ, գույքագրման, դասակարգման եւ հետազոտման մեծ մասը կարելի է կորոդինացնել եւ միասնականացնել, խնայելով ռեսուրսներ եւ ապահովելով որակի համապատասխան մակարդակ: Նպատակը պատասխանատու եւ հաշվետու համակարգի ստեղծումն է, որտեղ հստակ են բոլորի իրավունքները եւ պատասխանատվությունը, եւ որտեղ կբացառվեն տարբեր կարգավորող մարմինների միջեւ տարածայնությունների բացասական հետեւանքները դրանց ծառայություններից օգտվողների համար: Համակարգի կենտրոնացումը կարող է ունենալ նաեւ բացասական ազդեցություն օրինակ վտանգ որ մեկ սխալը կարող է ազդեցություն ունենալ ամբողջ համակարգի վրա, այդ իսկ պատճառով պետք է հիմնվեն հատուկ մեխանիզմներ (էլեկտրոնային կառավարում, հասարակության մասնակցություն), որպեսզի ապահովվի քաղաքականության համապատասխան զարգացում, նման սխալներից եւ դրանց բացասական հետեւանքներից խուսափելու, ինչպես նաեւ դրանց հետեւանքները անհապաղ վերացնելու համար: Արդյունավետության բարձրացման միջազգայնորեն ընդունված միջոցներ են.

1. արտահանման սերտիֆիկատների տրամադրում գնման պահին վաճառողի կողմից (օր. խանութի սեփականատերը կապվում է կենտրոնացված քոմփյութերացված համակարգի հետ, որը թողարկում է արտահանման թույլտվությունները, որոնք մեկ անգամ եւս կարող են ստուգվել արտահանման պահին սահմանի վրա, պատշաճ գրանցվածության եւ նույնության հաստատման համար),
2. սերտիֆիկատի ստացում արտահանման պահին (օր. գույքագրման կենտրոնացված քոմփյութերային շտեմարան, մաքսային մասնագետի տրամադրության ներքո, որը կարող է մշակութային ոլորտի մասնագետ չլինի, բայց որը կարող է տեսնել պոտենցիալ խնդիրները, օգտվել տվյալների քոմփյութերային շտեմարանից, հեռախոսով ճշտել մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության մասնագետի հետ եւ եթե անհրաժեշտ է, մերժել արտահանման իրավունքը մինչեւ

հստակեցվի, որ արտահանումը կամ ներմուծումը թույլատրվում է),

3. տվյալների շտեմարաններ,
4. հաստատությունների պարզեցում,
5. միասնական համակարգ, մեկանգամյա արտոնում,
6. ստեղծել միասնական համապարփակ համակարգ, վերացնելով իրավասություններում կրկնությունները եւ բացթողումները, օրինակ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարությունը եւ մաքսային վարչությունը կարող են ունենալ մեկ միասնական մարմին, որը մասնագիտացված լինի հատուկ մշակութային արժեքների արտահանման ներմուծման համար:

4.5 Ֆինանսավորվող հնստիտուտներ՝ հանրային-պետական համագործակցություն, հարկային քաղաքականություն

Հայաստանի մշակութային ժառանգության մեծ մասը հանդիսանում է կամ պետության, կամ եկեղեցու սեփականությունը: Որոշ մասը գտնվում է մասնավոր անձանց կամ կազմակերպությունների սեփականության ներքո, մասնավորապես շարժական գույքի եւ արխիվների մի մասը: Ոչ նյութական մշակույթի մեծ մասը մասնավոր է, չնայած եւ պետությունը եւ եկեղեցին աջակցում են որոշակի հաստատություններին (թատրոններ, համերգասրահներ, երգչախմբեր, դպրոցներ եւ այլն): Եկեղեցին ֆինանսավորումը կատարում է հիմնականում նվիրատվություններից եւ դրամաշնորհներից առաջացած միջոցների հաշվին, իսկ պետությունը՝ հարկային եկամուտներից, վարկերից եւ դրամաշնորհներից: Ոչ եկեղեցին, ոչ էլ պետությունը չունեն այսօր բավարար միջոցներ ապահովելու համար Հայաստանի մշակութային ժառանգության պահպանությունը: Ֆինանսավորող հաստատությունները պետք է լինեն թափանցիկ, հաշվետու եւ լայն մասնակցություն ապահովող: Քանի որ մոտակա ապագայում հարկային եկամուտները չեն կարող բավարարել մշակութային ժառանգության կարիքները, պետք է ստեղծվեն հատուկ մեխանիզմներ՝ միջոցներ ներգրավելու համար եւ Հայաստանի մշակութային ժառանգությունը անդառնալի կորուստներից փրկելու համար: Պետք է ուսումնասիրել ֆինանսավորման աղբյուրները եւ Հայաստանի օրենսդրությունը պետք է ապահովի, որ պետությունը եւ եկեղեցին ունենան համապատասխան հանրային եւ մասնավոր հաստատություններ արդյունավետորեն ֆինանսավորում ներգրավելու եւ օգտագործելու համար: Հանրային եղանակով ստեղծված եւ մասնավոր եղանակով կառավարվող այդպիսի հիմնադրամի օրինակ կարող է լինել Ինգլիշ Հերիտիջ (Մեծ Բրիտանիա) հիմնադրամը: Ի հավելումն սրան պետք է նշել, որ ոչ նյութական մշակույթը ունի դրամաշնորհների կարիք նաեւ կրթական ծրագրերի, հանրային տեղեկացվածության բարձրացման, ինչպես նաեւ անհատների եւ

խմբերի աջակցման համար: Սփյուռքը հատկապես հետաքրքրված է աջակցել Հայաստանի մշակութային ժառանգությանը: Սփյուռքի շատ ներկայացուցիչներ ելնելով իրենց արժեքների եւ ժամանակային սահմանափակումներից ավելի հարմար են համարում մշակութային ժառանգության աջակցումը, քան Հայաստանում առեւտրային գործունեություն ծավալելը: Պետության հարկային քաղաքականությունը կարելուք նշանակություն ունի մշակութային ժառանգության պահպանման համար, ինչպես նաեւ ոչ-շահութաբեր գործունեության համար ընդհանրապես, որի զարգացման մակարդակը Հայաստանում բավարար չէ:

#### 4.6 Սեփականության հստակեցում՝ հատկապես Եկեղեցի-Պետություն հարաբերություններում

Ինչպես Հայաստանում այնպես էլ աշխարհի մյուս երկրներում անշարժ մշակութային ժառանգության ամենամեծ կատեգորիան եկեղեցիներն են եւ եկեղեցիների հետ առնչվող գույքը: Եկեղեցական գույքի վերադարձը եկեղեցուն ընթացքի մեջ է, սակայն դեռ կան մի շարք խնդիրներ կապված այդ փոխանցման վերահսկողության եւ փաստաթղթավորման հետ, որոնք կարող են տարածայնություններ առաջացնել եկեղեցու եւ պետության միջեւ: Եվրոպայի Համայնքի կազմում կան բազմաթիվ երկրներ հին պատմություն ունեցող ազգային եկեղեցիներով: Անգլիայում, օրինակ, եկեղեցիների մեծամասնությունը պատկանում է եկեղեցուն, եւ դրանք օգտագործվում են իրենց նշանակության համապատասխան, որպես աղոթատեղիներ: Եկեղեցիները չեն ենթարկվում պետական վերահսկողության, բացառությամբ ծայրահեղ անհրաժեշտության դեպքերի, եւ ստանում են Ինգլիշ Չեբիտիջ («Անգլիական ժառանգություն») կազմակերպության աջակցությունը: Դանիայում եւ Գոլանդական կղզիներում, որտեղ եկեղեցին սահմանադրությամբ ունի հատուկ կարգավիճակ, պետության մասնակցությունը եկեղեցական գույքի ֆինանսավորման եւ պահպանության գործում ավելի ակտիվ է: Շվեդիայում գոյություն ունի հատուկ հիմնադրամ, որը գոյանում է եկեղեցական հարկի միջոցով եւ օգտագործվում է եկեղեցու գույքի պահպանման վրա: Ֆինլանդիայում նույնպես կա եկեղեցական հարկ, որը պետությունը հավաքում է եկեղեցուն աջակցելու նպատակով:

Ընդունելով, որ Հայաստանի հարկային բազան ներկայում եւ մոտակա ապագայում բավարար չի լինելու եկեղեցու կարիքները հոգալու համար, եւ որ եկեղեցուն օժանդակող հիմնական աղբյուրը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, անգլիական մոդելը առավել ընդունելի է Հայաստանի համար: Եկեղեցու եւ պետության հարաբերությունների անգլիական մոդելը առավել մանրամասն ներկայացված է 6.4 բաժնում: Կաթոլիկ երկրների փորձը (Ֆրանսիա, Իտալիա եւ Իսպանիա) ուղղակիորեն կիրառելի չէ Հայաստանյայց եկեղեցու համար Հայաստանում, քանի որ այդ երկրներում հարաբերվում են միջազգային/վերազգային եկեղեցին եւ առանձին երկրներ: Մյուս կողմից Հայաստանյայց եկեղեցու հարաբերությունները

այլ երկրների հետ նման են Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու եւ առանձին պետությունների միջեւ գոյություն ունեցող հարաբերություններին, երբ Հայաստանյայց Եկեղեցին Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող հայկական մշակութային ժառանգության պահպանման գործում, հաշվի է առնում տեղական օրենքները եւ առանձնահատկությունները:

#### 4.7 Էլեկտրոնային կառավարում

Մշակութային ժառանգության պաշտպանության եւ դրա մասին հասարակության տեղեկացվածության հիմնական բաղադրիչ է գույքագրումը, եւ այդ գույքագման մատչելիությունը հանրության համար: Այս խնդիրները կարող են լուծվել էլեկտրոնային կառավարման միջոցով, այն է՝ տվյալների համակարգչային շտեմարաններ, ինթերնեթ կամ լազերային սկավառակներ: Հաշվի առնելով տեղեկատվական տեխնոլոգիաներում Հայաստանի մեծ ավանդույթները, եւ տեղեկատվական տեխնոլոգիաներին այսօր Հայաստանում տրվող մեծ նշանակությունը, էլեկտրոնային կառավարումը կարող է դառնալ տրամաբանորեն ընդունելի լուծում վարչական համակարգի օպտիմալացման եւ տարբեր կառույցների միջեւ տեղեկատվության փոխանակման համար: Այս լուծումը համընկնում է նաեւ Մալթայի եւ Գրանադային Կոնվենցիաների միասնականացման պահանջներին: Էլեկտրոնային կառավարումը կնպաստի նաեւ մշակութային ժառանգության հետ կապված մի շարք այլ խնդիրների լուծմանը, այդ թվում արտահանման եւ ներմուծման թույլտվությունների տրամադրումը գնման պահին, մաքսային ձեւակերպումները, գոտիավորման կամ գույքի օգտագործման այլ սահմանափակումների ժամանակ սեփականատիրոջ տեղեկացումը: Էլեկտրոնային կառավարումը կհեշտացնի Հայաստանի տարբեր շրջաններում իրականացվող գործողությունների միասնականությանը եւ կնպաստի նաեւ մշակութային ժառանգության ասպարեզում միջազգային համագործակցությանը: Էլեկտրոնային կառավարման հիմնական ծախսերը ֆինանսական ռեսուրսներն են եւ ինթերնետային ենթակառուցվածքը, սակայն այս ծախսերի իմաստով էլեկտրոնային կառավարումը նույնպես ավելի արդյունավետ է, քան թղթային տարբերակը: Էլեկտրոնային կառավարումը կդարձնի մշակութային ժառանգության պահպանման ասպարեզը ավելի թափանցիկ, ինչը ընդհանուր առմամբ կմեծացնի դոնոր կազմակերպությունների վստահությունը եւ ավելի կհեշտացնի ֆինանսական միջոցների հայթայթման գործը:

#### 4.8 Բնական եւ արհեստական միջավայրի ինտեգրացված կոնսերվացիա, քաղաքաշինության պլանավորում եւ պահպանում, անշարժ, շարժական եւ ոչ նյութական մշակութային արժեքների նկատմամբ քաղաքականություն

Մշակութային ժառանգության պահպանության բնագավառում ամենակարեւոր միջազգային միտումը՝ տարբեր բնագավառներին

վերաբերվող բոլոր գործընթացների միավորումն է մեկ միասնական գործընթացի մեջ: Այս միտումը մշակութային ժառանգության պաշտպանության քաղաքականությունը դարձնում է ռացիոնալ եւ արդյունավետ:

#### 4.9 Մշակութային եւ կրթական քաղաքականությունների ինտեգրացիա

Մշակութային ժառանգության պահպանությունը, վերջին հաշվով, կատարվում է լայն հասարակության համար: Մշակութային ժառանգության պաշտպանությունը, մասնավորապես վանդալիզմից եւ ոչնչացումից, կատարվում է հանրություն աջակցության եւ բարի կամքի շնորհիվ. հասարակությունը սահմանափակում է իր գործողությունները, վճարում է հարկեր, կատարում նվիրատվություններ եւ ձեռնպահ է մնում մշակութային ժառանգության գույքի որոշ տեսակներ, անկախ դրանց սեփականության ձեւից, այս կամ այն կերպ օգտագործելուց: Շատ կարելու է որպեսզի բնակչությունը հասկանա մշակութային ժառանգության պաշտպանության ուղղությամբ իրականացվող քաղաքականությունը, համարի դրանք իր սեփականը, ընդունի որ այն ճիշտ է եւ արդար, քանի որ հենց լայն բնակչությունն է համարվում այդ քաղաքականության աջակցողը եւ դրանից օգտվողը: Մշակութային ժառանգության պաշտպանության եւ կրթական ծրագրերը պետք է ինտեգրել, որպեսզի հասարակությունը լինի լավ տեղեկացված, եւ ընկալի մշակութային ժառանգության պահպանությունը ոչ թե որպես առանձին մասնագետների ոլորտ, այլ որպես բոլորի պարտականություն: Սրան կարելի է հասնել հասարակական կազմակերպությունների եւ հասարակական տեղեկացվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի միջոցով, ինչպես նաեւ աշխատելով լրագրողների եւ զանգվածային լրատվության միջոցների հետ մշակութային ժառանգությունը, որպես մարդկանց միասնական ժառանգություն եւ պատասխանատվություն ներկայացնելու համար: Վերջապես շատ կարելու է չկորցնել մշակութային ժառանգության պաշտպանության վերջնական նպատակի իմաստը, որը յուրաքանչյուրի կյանքի հարստացումն է ինքնաճանաչման, պատմական գնահատանքի եւ գեղեցիկի միջոցով:

#### 4.10 Օրենքների եւ ինստիտուտների փորձարկում

Օրինաստեղծ աշխատանքը չի կարող իրականացվել մշակութային բնագավառում քաղաքականության մշակումից, քաղաքականության նպատակների որոշումից եւ այդ նպատակների իրագործման համար վարչական համակարգի մշակումից անկախ: Տարբեր աղբյուրներից վերցված օրենքները, առանց փորձարկման եւ հարմարեցման չեն կարող միասին արդյունավետ աշխատել: Այդ պատճառով մասնակի դեպքերի վրա օրենքի նախագծի փորձարկումը եւ դրա որակի վերահսկողությունը պետք է լինեն պարտադիր պայման օրենքների բարեփոխման ժամանակ: Բաժին II-ում ներկայացված են փորձարկման դեպքերի օրինակներ: Պետք է փորձարկվի նաեւ այն, թե արդյոք օրենքները աշխատում են որպես մեկ միասնական համակարգ,

որը լուծում է Հայաստանի մշակութային ժառանգության պաշտպանության ժամանակ առաջացող հիմնական խնդիրները:

4.11 Արտասահմանում գտնվող մշակութային արժեքները

Կան մի շարք հատուկ ուշադրության արժանի խնդիրներ կապված այն փաստի հետ, որ Հայաստանի մշակութային ժառանգության մի մեծ մաս գտնվում է արտասահմանում, հատկապես սահմանակից երկրներում կամ Սփյուռքի համայնքներում, որոնցից շատերում այսօր չկա հայ բնակչություն:

Առաջարկներ արտասահմանում գտնվող մշակութային արժեքների վերաբերյալ.

1. մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության կամ արտաքին գործերի նախարարության կազմում ստեղծել հատուկ բաժին, որը եկեղեցու հետ համագործակցված, կուսումնասիրի Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող հայկական մշակութային ժառանգության իրավական պաշտպանության հնարավորությունները:
2. աշխատել այդ համակարգերի շրջանակներում, ինչպես նաեւ մշակութային ժառանգության պաշտպանության միջազգային եւ տարածաշրջանային կառույցների շրջանակում, ներառյալ Հայաստանի մշակութային ժառանգության արժեքների Համաշխարհային ժառանգության, Վտանգված Հուշարձանների եւ Համաշխարհային Հուշարձանների Հիմնադրամի ցուցակների մեջ նտցնելը:
3. կատարել հանրային եւ մասնավոր համագործակցված աշխատանք տեղական հայկական համայնքների եւ այլ շահագրգիռ խմբերի («Հայկական մշակույթի բարեկամներ») հետ միասին արտասահմանում գտնվող հայկական մշակութային ժառանգությունը պաշտպանելու համար:
4. քանի որ եկեղեցական գույքը երկրների մեծ մասում ավելի պաշտպանված է քան աշխարհիկ սեփականությունը, անել հնարավոր ամեն ինչ եկեղեցական գույքը թե Հայաստանում, թե արտասահմանում եկեղեցու սեփականության ներքո փոխանցելու համար, միեւնույն ժամանակ պահպանելով պետության չձանրաբեռնող վերահսկողությունը, որը կապահովի պաշտպանության կրկնակի մակարդակ, եւ պետության միջամտության իրավունքը արտակարգ իրադրություններում:

5. Հայաստանի քաղաքականության, օրենքների, ինստիտուտների եւ պրակտիկայի վերլուծություն եւ առաջարկներ միջազգային նորմերի համատեքստում

5.1. Համաձայնագրեր<sup>1</sup>

Հայաստանը անդամակցում է մշակութային արժեքների պահպանության միջազգային եւ տարածաշրջանային հիմնական համաձայնագրերին, որոնք են.

- Միացյալ ազգերի կազմակերպության («ՄԱԿ») Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների միջազգային համաձայնագիրը («ICESCR»),
- Հաագայի կոնվենցիան մշակութային արժեքների պահպանության գինված հակամարտության դեպքում, 1954, Հաագա,
- Համաձայնագիր մշակութային արժեքների անօրինական ներմուծման, արտահանման եւ սեփականության իրավունքի փոխանցման կանխման միջոցների վերաբերյալ, նոյեմբեր 17 1970, Փարիզ,
- ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաձայնագիրը համաշխարհային մշակութային եւ բնական ժառանգության պահպանության մասին, 1972, Փարիզ,
- Սեւծովյան տնտեսական համագործակցության համաձայնագիր մշակույթի, կրթության, գիտության եւ տեղեկատվական ոլորտներում, 1993, Ստամբուլ,
- Հիմնադիր պայմանագիր ԱՊՀ մշակութային համագործակցության աջակցման հիմնադրամի ստեղծման վերաբերյալ, 1998, Մոսկվա:

Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում ԵԽ-ի առաջարկները եւ այլ Եվրոպական համաձայնագրերը եւ առաջարկները այս ոլորտում, քանի որ դրանք պարունակում են մշակութային ժառանգության պահպանության նորմերի, քաղաքականության եւ միտումների ներկա ամենակիրառելի ձեւակերպումները: Այս պատճառով օրենքների եւ կարգերի մեր վերլուծությունը կկենտրոնանա Եվրոպական ստանդարտների վրա: ԵԽ-ն հիմնադրել է տեխնիկական համագործակցության եւ խորհրդատվության ծրագիր եվրոհամայնքի երկրներին իրենց օրենսդրությունը ԵԽ-ի նորմերի հետ ներդաշնակեցնելու գործին աջակցելու համար: Ծրագիրը ղեկավարում

<sup>1</sup> Հավելվածում ներկայացված են առաջարկների ամփոփում, որը պատրաստվել է Միջազգային իրավունքի հայկական ընկերակցության կողմից: Այն պատրաստվել է ավելի քան մեկ տարի առաջ, մինչեւ Հայաստանի անդամակցությունը ԵԽ-ին: Մենք գտնում ենք որ այս առաջարկները, այնպես ինչպես բոլոր այլ օրենսդրական եւ սահմանադրական բարեփոխումների առաջարկները, պետք է անցնել իրական սցենարների փորձարկում, ապահովելու համար, որ դրանք չունենան անբարենպաստ արդյունքներ երբ դրանք ընդունվեն եւ աշխատեն Հայաստանի ամբողջ իրավական դաշտի համակարգում:



է պրն Ռոբերտ Պիկարդը: ԵՒ-ի հիմնական ուղեցույցները կարելի է գտնել ԵՒ-ի չորս հետեւյալ հրատարակություններում<sup>2</sup>:

- Եվրոպական մշակութային համաձայնագիր՝ կնքված 1954թ. դեկտեմբերի 19-ին, Փարիզում, ուժի մեջ է մտել 1955թ., մայիսի 5-ին (Փարիզի կոնվենցիա),
- Առաջարկություններ հնագիտական պեղումների միջազգային սկզբունքների վերաբերյալ, 1956, Նյու Դելի,
- Մասնավոր հրավումբի միասնականացման միջազգային ինստիտուտի («UNIDROIT») կոնվենցիան գողացված կամ անօրինական արտահանված մշակութային արժեքների մասին, 24 հունիսի 1995թ, Դոնո,
- Եվրոպական կոնվենցիա մշակութային արժեքներին վերաբերող հանցանքների մասին, 23 հունիսի 1985թ., Դելի
- Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պահպանության կոնվենցիա (Գրանադայի կոնվենցիա, 1985թ. հոկտեմբերի 3): Եվրոպայի կոնվենցիա հնագիտական ժառանգության պահպանման վերաբերյալ, 1992թ., հունվարի 16, Վալետտա (Մալթայի կոնվենցիա):

Քանի որ Հայաստանը պատրաստվում է ներդաշնակեցնել իր օրենսդրությունը Եվրոպական նորմերի հետ՝ կապված ԵՒ-ին անդամակցելու հետ, նշված կոնվենցիաների հետեւյալ դրույթները հատուկ նշանակություն են ձեռք բերում:

Համաձայն ՀՀ սահմանադրության հոդված 6-ի միջազգային պայմանագրերը ունեն օրենքի ուժ, բացառությամբ այն դեպքի, երբ այդ դրույթները հակասում են ՀՀ սահմանադրությանը կամ օրենքներին, որի դեպքում սահմանադրությունը կամ օրենքները պետք է փոփոխվեն մինչեւ պայմանագիրը կվավերացվի եւ կմտնի ուժի մեջ: Բացի այդ, համաձայն ՀՀ սահմանադրության հոդված 43-ի. "Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները սպառիչ չեն եւ չեն կարող մեկնաբանվել որպէս մարդու եւ քաղաքացու այլ հանրաճանաչ իրավունքների եւ ազատությունների բացառում": Հոդված 43-ը նախատեսում է ՀՀ-ում միջազգային նորմերի կիրառման հիմքերը:

#### 5.1.1. ՄԱԿ-ի միջազգային կոնվենցիա տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների վերաբերյալ («ICESCR»)

ICESCR-ի 15.1 եւ 2 հոդվածները հատուկ կարեւորություն են ներկայացնում մշակութային ժառանգության պահպանման եւ զարգացման համար: Այն երաշխավորում է քաղաքացիներին

<sup>2</sup> Եւ ուղեցույց ճարտարապետական ժառանգության պաշտպանության վերաբերյալ (Ստրասբուրգ 2000), Եւ ուղեցույց Շառժական ժառանգության պաշտպանության վերաբերյալ (Ստրասբուրգ 2000), Եւ ուղեցույցը Հնագիտական ժառանգության պաշտպանության վերաբերյալ (Ստրասբուրգ 2000), Եւ ուղեցույց Մշակութային ժառանգության ասպարեզի օրենսդրության եւ վարչական համակարգի զարգացման վերաբերյալ (Ստրասբուրգ 2000):

օգտվելու մշակույթի ձեռքբերումներից եւ պարտավորություն է դնում պետության վրա ձեռնարկելու անհրաժեշտ քայլեր ապահովելու գիտության եւ մշակույթի պահպանումը, զարգացումը եւ տարածումը: Պետությանը տրվում է նաեւ իրավունք իրականացնելու կարգավորման գործառույթներ համաձայն հոդված 4-ի, որոնք անհրաժեշտ են համընդհանուր բարեկեցության համար, ինչպես նաեւ աջակցելու ժողովրդավարական հասարակությանը իրավունքների գործադրման մեջ:

ICESCR-ի հետ կապված առաջարկություններ: Կիրառել ICESCR-ի հոդված 4-ը<sup>3</sup> պատշաճ գործընթացի եւ կարգավորման ստանդարտի դրույթները, որոնք սահմանափակում են պետության իրավասությունը այն իրավունքներով, որոնք անհրաժեշտ են համընդհանուր բարեկեցության համար եւ ժողովրդավարական հասարակությանը իրավունքների գործադրման հարցում աջակցելու համար:

5.1.2. Հասագայի կոնվենցիա զինված հակամարտությունների ժամանակ մշակութային ժառանգության պաշտպանության մասին (1954)

Հայաստանը հանդիսանում է սույն կոնվենցիայի անդամ: Սույն կոնվենցիայով սահմանանվում են հետեւյալ պարտավորությունները (1) փոփոխություններ քրեական օերնսգրքում՝ կոնվենցիայի պահանջները խախտելու համար պատիժներ սահմանելու նպատակով (հոդված 28), (2) յուրաքանչյուր չորս տարին մեկ ՅՈՒՆԵՍԿՈ-ի գլխավոր տնօրենին զեկուցել թարգմանության համապատասխանության եւ պահադրման մասին (հոդված 26), (3) Հասագայի կոնվենցիայի մասին տեղեկատվության տարածում մասնավորապես զինվորների շրջանում (հոդված 7) եւ (4) ձեռնարկել քայլեր խաղաղ ժամանակ մշակութային արժեքները պահպանելու համար (հոդված 8):

Առաջարկներ Հասագայի կոնվենցիայի վերաբերյալ.

1. պատրաստել մշակութային արժեքների ցուցակ, որոնք պետք է ներառվեն “Հատուկ պահպանության

<sup>3</sup> ICESCR հոդված 4. «Սույն Կոնվենցիայի մասնակից երկրներն ընդունում են, որ պետությունը կարող է սույն Կոնվենցիային համապատասխան իր սահմանած իրավունքների իրականացումը ենթարկել միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանում են օրենքով եւ միայն այնքանով, որքանով դա համատեղելի է նշված իրավունքների բնույթի հետ, եւ բացառապես ժողովրդավարական հասարակությունում ընդհանուր բարեկեցությանը նպաստելու նպատակով»

մշակութային արժեքների միջազգային ռեգիստրում”  
(հոդված 8(6)),

2. պատրաստել շարժական մշակութային արժեքների պատասխարան եւ հատուկ ռազմական եւ մշակութային անձնակազմ պատերազմի դեպքում մշակութային արժեքների պահպանման նպատակով:
3. համագործակցել հարեւան երկրների հետ արտերկրներում Հայաստանի մշակութային արժեքների պահպանությունը ապահովելու համար՝ փոխադարձության սկզբունքի հիման վրա:
4. նիշավորել այդ արժեքները, մասնավորապես այն հուշարձանները, որոնք գտնվում են վտանգի տակ, օրինակ Արցախում, Վրաստանում եւ Թուրքիայում:

### 5.1.3. 1954թ. Եվրոպական մշակութային կոնվենցիա

Հայաստանը սույն կոնվենցիայի մասնակից է: Եվրոպական մշակութային կոնվենցիան մի շարք պարտավորություններ է դնում յուրաքանչյուր մասնակցի վրա իրենց մշակութային արժեքները պահպանելու ուղղությամբ, որպես ներդրում Եվրոպայի համընդհանուր մշակութային ժառանգության մեջ (հոդված 1), ինչպես նաեւ համագործակցելու ԵԽ-ի այլ անդամների հետ Եվրոպայի համընդհանուր մշակութային ժառանգության պահպանման համար (հոդված 3 եւ 5): Այս նպատակների իրագործման շրջանակում մասնակից-պետությունները իրավունք ունեն ներկայացնել կոնվենցիայի կիրառմանն ուղղված առաջարկներ (հոդված 6) եւ սահմանել տարածքներ որոնցում ցանկանում են որպեսզի կիրառվի կոնվենցիան (հոդված 10): Մասնակից-պետությունները պարտավորվում են նաեւ, խթանել իրենց սեփական լեզվի ուսուցումը արտասահմանում (հոդված 2), ինչպես նաեւ այլ Եվրոպական երկրների լեզուները իրենց երկրում (հոդված 4): Այս բոլոր նպատակները միասին վերցրած՝ նրանց իրականացումը եւ օժանդակ գործունեությունները կարող են ապահովել այն ֆոնը, որտեղ կքննարկվեն Հայաստանին ներհատուկ հարցերը կապված իր մշակութային ժառանգության եւ բնակչության արտասահմանում տեղադրված լինելու հետ:

### Առաջարկներ Եվրոպական մշակութային կոնվենցիայի վերաբերյալ

1. աջակցել Եվրոպայի ընդհանուր մշակութային ժառանգությանը Հայաստանի ներդրման գիտակցմանը,
2. Հայաստանում եւ նրանից դուրս փնտրել այն տարածքները, որոնց նկատմամբ կիրառելի է կոնվենցիան,

3. ստեղծել փոխադարձ համագործակցության հիմքեր եւ մշակութային ժառանգության նկատմամբ հարգանք՝ պաշտպանելով օտարերկրյա մշակութային արժեքները Հայաստանում,
4. խրախուսել հայոց լեզվի ուսուցումը արտասահմանում եւ այլ լեզուների ուսուցումը Հայաստանում,
5. ակտիվորեն ներգրավել մշակութային փոխանակումների մեջ,
6. ջանալ կիրառել կոնվենցիան այլ երկրներում գտնվող հայկական մշակութային ժառանգության նկատմամբ, որպես Եվրոպայի մշակութային ժառանգության մաս:

5.1.4. Փարիզի կոնվենցիա մշակութային արժեքների անօրինական արտահանման, ներմուծման եւ սեփականության փոխանցման կանխարգելման եւ արգելման միջոցների մասին (Փարիզի կոնվենցիա, նույնքեր 14, 1970):

Փարիզի կոնվենցիան մեկն է այն մի քանի կոնվենցիաների, որոնք կարգավորում են շարժական մշակութային արժեքների շրջանառությունը: 1995թ. UNIDROIT-ի կոնվենցիան եւ Եվրոպական կոնվենցիան մշակութային արժեքներին վերաբերող հանցանքների վերաբերյալ նույնպես այդ հարցերին է վերաբերում: ԵԽ-ն ընդունել է նաեւ ուղեցույցներ օրենսդրության մշակման եւ մշակութային ժառանգության ոլորտում ադմինիստրատիվ համակարգերի վերաբերյալ, որոնք քննարկվում են ստորեւ:

Հայաստանը արդեն իր օրենսդրության շատ դրույթներ համապատասխանեցրել է Փարիզի կոնվենցիայի պահանջներին, դրանցից են՝

1. մշակութային ժառանգության պահպանման ազգային գործակալության ստեղծում (հոդված 5),
2. մշակութային արժեքների վկայագրի տրամադրումը (արտահանման վկայագիր) (հոդված 6ա), այնուամենայնիվ հատուկ պահանջները, համակարգի ֆիզիկական վարչարարությունը, ինչպես նաեւ զբոսաշրջիկների եւ ստեղծագործողների տեղեկացվածության պակասը եւ արագ բողոքարկման արդյունավետ եղանակների բացակայությունը դարձնում են այս մեխանիզմը ծանրաբեռնող եւ խոչընդոտում է արտահանման համար ստեղծվող արվեստի զարգացումը Հայաստանում:
3. հնոճ իրերի առևտրով զբաղվողներից գրանցամատյաններ վարելու պահանջը (հոդված 10ա),

4. օրինական սեփականությունների կողմից գողացված կամ կորցված իրերի վերականգնման համար քայլերի ձեռնարկումը (հոդված 13գ),
5. որոշ արժեքները որպես անօտարելի սահմանելու պետության իրավունքի ճանաչումը (հոդված 13դ),
6. գողացված մշակութային արժեքների վերականգնման եւ վերադարձման համար դիվանագիտական միջոցների օգտագործում պահանջող կողմի կողմից բարեխիղճ գնորդին կամ օրինական սեփականատիրոջը պետության հաշվին փոխհատուցմամբ (հոդված 7բ):
7. Ինտերպոլի մեխանիզմի օգտագործումը գողացված արժեքի մասին տեղեկատվության փոխանակման եւ համագործակցության նրա վերադարձման ուղղությամբ,
8. հնագիտական վերահսկողություն եւ գտածոների իրենց գտնվելու վայրում պահպանում (հոդված 5դ):

Հայաստանը նաեւ մի շարք քայլեր է ձեռնարկել այս Կոնվենցիայի շրջանակներում իր պարտավորությունները կատարելու ուղղությամբ`

1. ազգային մշակութային պահպանման ծառայության համար համապատասխան հիմնադրամի ստեղծում կամ ֆինանսավորման ապահովում (հոդված 14) (ներկայումս մասնակիորեն ֆինանսավորվում է մշակութային արժեքների փորձագիտական գնահատման վճարներից ստացվող եկամուտներից),
2. Քրեական օրենսգիրքը (հոդված 73, մաքսանենգություն) մասնակիորեն նախատեսում է խախտումներ եւ փոխհատուցում, ինչպես եւ Քաղաքացիական օրենսգիրքը, օրինակ հոդված 274 (օրինական սեփականատերի իրավունքը գույքը վերադարձնելու պահանջը), 275 (բարեխիղճ ձեռք բերողը), 276 (անօրինական փոխանցումից փոխհատուցման իրավունքը), 284 (գույքային իրավունքների դադարումը), 344 (պահանջներ, որոնց վրա չի տարածվում հայցային վաղեմությունը), բայց սրանք կլինեն ավելի արդյունավետ, եթե հարմարեցվեն մշակութային արժեքներին եւ Կոնվենցիայի պահանջների միջազգային էությանը (հոդվածներ 7, 8, 13):
3. կանխել այնպիսի փոխանցումները, որոնք կարող են բերել մշակութային արժեքների անօրինական փոխանցումների ուղիների ձեւավորման (հոդված 13),
4. անօրինական ներմուծված մշակութային արժեքների ձեռքբերման արգելման դրույթներ (հոդված 7ա),
5. անօրինական գույքի ձեռքբերման առաջարկների ծանուցման համակարգի հիմնում գույքի ծագման երկրին (հոդված 7ա),

6. քրեական պատիժ կամ վարչական տույժ թանգարանների, կրոնական հաստատությունների եւ աշխարհիկ հուշարձանների գույքի մաս գրանցված գողացված մշակութային արժեքների ներմուծման կամ ձեռքբերման համար (հոդված 7բ):

Առաջարկներ Փարիզի կոնվենցիայի վերաբերյալ`

1. ՀՀ օրենքը մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին օգտագործում է մի փոքր տարբեր դասակարգում, քան Փարիզի կոնվենցիան: Կարելի է առաջարկել ՀՀ օրենքի սահմանումներ համապատասխանեցնել Փարիզի կոնվենցիայի հետ եւ թույլատրել բացառումներ կամ տեղայնացումներ կառավարության որոշմամբ,
2. ստեղծել պահպանվող գույքի քոմիյութերացված, միասնական եւ մատչելի ազգային գույքացուցակ եւ կարելուր պետական եւ մասնավոր մշակութային արժեքների ցուցակ, որոնք մատչելի կլինեն ազգային ծառայության, մաքսային մարմինների, իրավապահ մարմինների եւ մշակութային արժեքների մասնագետների (թանգարանների կուրատորների) եւ դրանց առելտրով զբաղվողների համար, քանի որ սա հանդիսանում է մշակութային գույքի վերականգնման եւ վերադարձման նախապայման կոնվենցիայի շրջանակում (հոդված 5բ),
3. հիմնել վերահսկման եւ սերտիֆիկացման կետ մշակութային ճյուղերը խթանելու համար (արվեստներ, արհեստներ) եւ պարզեցնել պահպանման տակ չգտնվող մշակութային արժեքների արտահանումը: Պարզեցնել եւ աջակցել վաղ կանխարգելման համակարգ հանրային գիտակցության բարձրացման, շուկայում ավելի մեծ ներգրավվածության եւ փոքրաթիվ անձնակազմ ունեցող պետական գործակալությունների ընդարձակման միջոցով. Սա կխթանի,
  - վաղ հայտնաբերումը եւ հնարավոր ամենաարագ փոխհատուցումը (հոդված 13),
  - այնպիսի փոխանցումների կանխումը, որոնք կարող են բերել մշակութային արժեքների անօրինական փոխանցումների ուղիների ձեւավորման (հոդված 13),
  - ավելի երկարաժամկետ վկայագրերի (սեփականտիրոջ հետ չկապված) թողարկումը եւ զանգվածային ապրանքների բացառման համակարգը (ԵԽ-ի Ուղեցույցներ, հոդված 5.2.),
4. խթանել արտասահմանում գտնվող ՀՀ մշակութային արժեքների պահպանությունը եւ վերադարձը`

ապահովելով ՀՀ համապատասխան քայլերը՝ կանխելու մշակութային արժեքների անօրինական ներմուծումը եւ աջակցելով դրանց վերադարձին (հոդված 2, 9),

- փաստաթղթավորել եւ ապահովել պահպանությունը եւ միջազգային օգնությունը՝ կանխելու հայկական մշակութային ժառանգությանը սպառնացող անվերականգնելի վնասը այլ պետություններում (հոդված 9),

5. Միջազգային ինտեգրացիան եւ համագործակցությունը եւ տեղեկատվության տարածումը Հայաստանի մշակութային արժեքների մասին.

- Ձեկույցներ ՅՈՒՆԵՍԿՈ-ին (հոդված 16),
- ՅՈՒՆԵՍԿՈ-ի կողմից տեխնիկական աջակցություն տեղեկատվության եւ կրթության բնագավառներում, խորհրդատվություն եւ փորձագիտական խորհուրդներ եւ կոորդինացում (հոդված 17),

6. վերանայել ներկա քրեական եւ քաղաքացիական օրենսգրքերը եւ ընդունել օրենքներ, որոնք հատուկ հարմարեցված են Փարիզի կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների համար եւ նախատեսում են քրեական պատիժներ եւ քաղաքացիական միջոցներ Փարիզի կոնվենցիայով արգելված անօրինական գործողությունները պատժելու եւ փոխհատուցելու համար (հոդված 3, 8) (հատուկ առաջարկներ են արվել Միջազգային օրենսդրության հայկական ասոցիացիայի կողմից, Հավելված),

7. ընդունել կանոններ կուրատորների, կոլեկցիոներների եւ գործակալների համար (հոդված 5ե), մասնավորապես ICOM, ICA, կրոնական իրերի փոխադրումների, եւ այլն,

8. մշակութային արժեքների սեփականության օրենքների բարելավում (հոդված 5ա),

9. աջակցել մշակութային արժեքների պահպանման ինստիտուտներին (թանգարաններ, գրադարաններ, հետազոտական հաստատություններ) (հոդված 5գ),

10. բարձրացնել մշակութային ժառանգության պահպանման գիտակցության (հոդված 5գ, 10),

11. ապահովել հանցանքների վերաբերյալ հրապարակայնություն (հոդված 5ե),

12. ստեղծել ազգային մշակութային արժեքների պահպանության ծառայության համար հիմնադրամ կամ ապահովել համապատասխան ֆինանսավորում:

5.1.5. 1995թ. UNIDROIT-ի կոնվենցիան գողագված կամ անօրինական ձեռով արտահանված մշակութային արժեքների մասին

Այս կոնվենցիան փաստորեն Փարիզի կոնվենցիայի իրականացումն է:

Առաջարկներ UNIDROIT-ի կոնվենցիայի վերաբերյալ.

1. Գույքագրել եւ գրանցել պետական հավաքածուները եւ խրախուսել մասնավոր հաքավածուների մշակութային արժեքների գույքագրումը հարկային եւ այլ խթանների միջոցով, քանի որ դա համարվում է վերադարձման նախապայման UNIDROIT-ի կոնվենցիայի շրջանակներում (հոդված 3),
2. Վերանայել քաղաքացիական եւ քրեական օրենսգրքերով նախատեսված հայցային վաղեմությունը կոնվենցիայի հետ համապատասխանեցման նպատակով (հոդված 2) (ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 344),
3. Ճանաչել, որ վերականգնման եւ վերադարձման համար մասնավոր գործողությունները նույնքան արդյունավետ են, որքան եւ պետական գործողությունները, հետեւաբար հայկական հայցվորների համար ապահովել հիմք համարժեք վերաբերմունք պահանջելու համար (հոդված 5),
4. ապահովել երրորդ կողմի վարույթի մասնակցության եւ վնասահատուցման հնարավորությունը (հոդված 6),
5. Վերանայել Քաղաքացիական օրենսգիրքը նախատեսելով, որ բարեխիղճ ձեռք բերողին վերաբերող դրույթները թույլատրեն արդյունավետ վերականգնում եւ վերադարձ (հոդված 5),
6. Ստեղծել մշակութային արժեքների մասնագետների եւ գործակալների էթիկայի կանոններ եւ ուսումնասիրման նորմեր (հոդված 4),

Տես Հավելվածը մշակութային արժեքների անօրինական փոխանցումներին վերաբերող այլ միջազգային ստանդարտների վերաբերյալ, մասնավորապես.

- Եվրոպական կոնվենցիան մշակութային արժեքների հետ կապված հանցագործությունների վերաբերյալ (1985թ. հունիսի 23),
- ԵԽ-ի Ցուցում 93/7/Եվրոպական Տնտեսական Համագործակցություն EEC մարտ,
- CEFIC - արտահանման վերահսկման քաղաքականության հայտարարություն (1992թ., հունիսի 16-ին),
- ԵԽ-ի միջոցները ընդդեմ մշակութային արժեքների անօրինական փոխադրումների (1996թ., մայիսի 30-31),



- *Համաշխարհային մշակութային եւ բնական ժառանգության պահպանման կոնվենցիա (1972թ., նոյեմբեր 16-ին):*

5.1.6. ՅՈՒՆԵՍԿՈ-ի Կոնվենցիան համաշխարհային մշակութային եւ բնական ժառանգության պահպանման վերաբերյալ (1972թ., նոյեմբեր 16-ին)

ՅՈՒՆԵՍԿՈ-ի կոնվենցիան հանդիսանում է հիմնարար կոնվենցիա անշարժ մշակութային արժեքների պահպանման վերաբերյալ, որով հիմնադրվում է Համաշխարհային ժառանգության Հանձնաժողովը, որն էլ ընտրում է մշակութային եւ բնական ժառանգությունը Համաշխարհային ժառանգության Ցուցակի համար (մոտավորապես 700 անուն): Ներկայումս երեք հայկական վայրեր ներառված են նրանում՝ Հաղպատը եւ Սանահին, Էջմիածին-Չվարթնոց, Գեղարդ եւ Նեմրուք Դաղը Թուրքիայում:

ՄԱԿ-ի համակարգում ՅՈՒՆԵՍԿՈ-ն պատասխանատու է մշակութային ժառանգության միջազգային իրավական պաշտպանության համար: Այն կառավարում է Կոնվենցիան զինված կոնֆլիկտների դեպքում մշակութային արժեքների պահպանության մասին (Հաագայի կոնվենցիան) եւ նրա Արձանագրությունները, Կոնվենցիան մշակութային արժեքների անօրինական արտահանման, ներմուծման եւ սեփականության փոխանցման կանխարգելման միջոցների մասին (Համաշխարհային ժառանգության կոնվենցիա, 1972), եւ ՅՈՒՆԵՍԿՈ-ի տասնմեկ առաջարկները մշակութային ժառանգության պահպանման վերաբերյալ: Ջրի տակ գտնվող մշակութային ժառանգության պահպանման կոնվենցիայի նոր նախագիծը գտնվում է վերջնական մշակման փուլում՝ ՅՈՒՆԵՍԿՈ-ի 2001թ. նոյեմբերին կայանալիք Գլխավոր Կոնֆերանսի ժամանակ ընդունելու համար: ՅՈՒՆԵՍԿՈ-ն նաեւ պատասխանատու է անօրինական ձեռքբերման դեպքում մշակութային արժեքների ծագման երկրին վերադարձի կամ դրա փոխհատուցման միջկառավարական հանձնաժողովի աշխատանքների համար: Հանձնաժողովը միջկառավարական մարմին է բաղկացած 22 անդամներից: Կոնվենցիան վերահսկվում է ՅՈՒՆԵՍԿՈ-ի կողմից եւ աջակցվում է երեք կապակցված կազմակերպությունների կողմից:

Հուշարձանների եւ վայրերի Միջազգային Խորհուրդ (ICOMOS)

ICOMOS-ը միջազգային, պրոֆեսիոնալների ոչ կառավարական կազմակերպություն է, որը նվիրված է համաշխարհային պատմական հուշարձանների եւ վայրերի պահպանմանը: ICOMOS-ը հիմնադրվել է 1965թ., որպես

արդյունք դրանից մեկ տարի առաջ Վենետիկում ընդունված  
Հուշարձանների եւ վայրերի պահպանման եւ վերականգնման  
Կանոնադրությանը: Այսօր, ICOMOS-ը ունի Ազգային  
Կոմիտեներ ավելի քան 107 երկրներում:

ICOMOS-ը ՅՈՒՆԵՍԿՈ-ի հիմնական խորհրդատուն է  
հուշարձանների եւ վայրերի պահպանման եւ վերականգնման  
հարցերով: Համաշխարհային Պահպանման Միության («IUCN») հետ  
մեկտեղ, ICOMOS-ը ունի Համաշխարհային Ժառանգության  
կոնվենցիայով սահմանված միջազգային դեր, որը կայանում է  
Համաշխարհային Ժառանգության հանձնաժողովին եւ  
ՅՈՒՆԵՍԿՈ-ին Համաշխարհային Ժառանգության ցուցակում նոր  
վայրերի ընդգրկման համար խորհրդատվություն մատուցելով:

ICOMOS-ը նպատակաուղղված է հիմնելու մշակութային  
միջավայրի պահպանման, վերականգնման եւ կառավարման  
միջազգային ստանդարտներ: Այս ստանդարտներից շատերը  
արտացոլված են կազմակերպությունների  
կանոնադրությունների մեջ:

Ազգային կոմիտեները հանդիսանում են ICOMOS-ի  
ասոցիացիաներ ազգային մակարդակում: Նրանք անհատական  
եւ ինստիտուցիոնալ անդամներին հնարավորություն են տալիս  
քննարկումների եւ տեղեկատվության փոխանակման համար:  
Ադրբեջանը, Վրաստանը, Իրանը եւ Թուրքիան, վերջերս նաեւ  
Հայաստանը անդամագրվել են ICOMOS-ին ազգային  
կոմիտեների միջոցով: Նշված երկրների հուշարձաններից ոչ  
մեկը, որոնք զետեղված են Համաշխարհային Ժառանգության  
ցուցակում հայկական չեն:

ICOMOS-ի կանոնները տրված են Հավելվածում: հավելյալ  
տեղեկությունների համարել տես [www.icomos.org](http://www.icomos.org)  
ինքերնեթային էջը:

#### 5.1.7. Բնության եւ բնական ռեսուրսների կոնսերվացման միջազգային միություն («IUCN»)

IUCN-ը հիմնվել է 1948թ., միության կազմում ընդգրկված  
են 78 պետություններ, 112 կառավարական գործակալություններ,  
735 ոչ-կառավարական կազմակերպություններ, 35  
կապակցված կազմակերպություններ եւ ավելի քան 10,000  
մասնագետներ 181 երկրներից: Միության առաքելությունը  
հասարակության խրախուսումն եւ աջակցումն է բնության  
միասնականության եւ բազմազանության կոնսերվացման  
ուղղությամբ, ինչպես նաեւ ապահովումը որպեսզի բնական  
ռեսուրսների ցանկացած օգտագործում չհնի արդարացված եւ  
վերականգնվող բնապահպանական տեսակետից: Միջազգային  
համաձայնագրերի շրջանակներում IUCN-ը աջակցել է ավելի  
քան 75 երկրի մշակելու եւ կիրառելու համար բնության  
կոնսերվացման եւ բնաբազմազանության ազգային  
ռազմավարություններ: IUCN-ը ունի 1000 աշխատող, որոնցից

մեծ մասը գտնվում են տարածաշրջանային եւ ազգային գրասենյակներում, իսկ 100-ը՝ Շվեդարիայի Գլանդ քաղաքում գտնվող կենտրոնական գրասենյակում:

Հայաստանը դեռ չի անդամակցել IUCN-ին եւ այդ պատճառով չի կարող մասնակցել դրա գործունեությանը, ստանալ պարբերաբար հրատարակվող նյութերը, ինչպես նաեւ ստանալ խորհրդատվություն եւ գործնական աջակցություն: IUCN-ի անդամ կարող են դառնալ ինչպես պետությունները այնպես էլ կառավարական գործակալությունները, քաղաքական եւ/կամ տնտեսական ինտեգրացիայի կազմակերպությունները, ազգային եւ միջազգային ոչ-կառավարական կազմակերպությունները: Անդամակցման համար անհրաժեշտ փաստաթղթերը կարելի է գտնել <http://www.iucn.org/> ինքերնեթային էջի վրա:

IUCN-ն յուրաքանչյուր տարի ընտրում է տարվա թեմա: 2002 թվականը լեռների միջազգային տարին է: Լեռների Միջազգային Տարի ծրագիրը նախատեսում է ավելացնել տեղական նախաձեռնությունները եւ գործունեությունները ուղղված լեռների զարգացմանը, ռեսուրսների ողջամիտ օգտագործմանը եւ կենսապայմանների բարելավմանը:

5.1.8. Մշակութային արժեքների պահպանման եւ վերականգնման ուսումնասիրության միջազգային կենտրոն («ICCROM», Հռոմի կենտրոն)

ICCROM-ը 1959թ. հիմնված միջազգային միջկառավարական կազմակերպություն է: ICCROM-ն անկախ մարմին է, որը ստեղծվել է ՅՈՒՆԵՍԿՈ-ի հովանավորության ներքո: ICCROM-ին ունի 100 անդամ երկիր, ինչպես նաեւ 103 թղթակից անդամ կազմակերպություն: Այն միակ կազմակերպությունն է իր ձեւի մեջ, որը ունի բոլոր տեսակի մշակութային արժեքների (անշարժ եւ շարժական) կոնսերվացման ոլորտում միջազգային մանդատ:

ICCROM-ն նպատակ ունի զարգացնել կոնսերվացման որակը, ինչպես նաեւ հանրության՝ դպրոցականից մինչեւ պետական պաշտոնյաները, տեղեկացվածությունը, ինչը իրականացվում է գործունեության հինգ հիմնական ոլորտների միջոցով. կրթական նոր ծրագրերի եւ աշխարհով մեկ անցկացվող ուսուցումների, կոնսերվացման վերաբերյալ ուսուցումների, ինքերնեթի վրա տեղադրված կոնսերվացման գրադարանների եւ տեղեկատվության տարածման միջոցով:

Իրանի Իսլամական Հանրապետությունը եւ Թուրքիան ICCROM-ի անդամ են, Հայաստանը, Ադրբեջանը եւ Վրաստանը չեն անդամակցել ICCROM-ին: Քանի որ Հայաստանը ՅՈՒՆԵՍԿՈ-ի անդամ է այն կորող է անդամակցել ICCROM-ին ՅՈՒՆԵՍԿՈ-ի գլխավոր տնօրենին հայտարարագիր ներկայացնելով: Յուրաքանչյուր անդամ-երկիր ICCROM-ի

բյուջե է վճարում Գլխավոր Ասամբլեայի կողմից սահմանված վճար: ICCROM-ին անդամության օգուտների մեջ են մտնում դրա ռեսուրսներից օգտվելը եւ ուսուցման ծրագրերին մասնակցելը:

Տես ICCROM-ի կանոնադրությունը (կցվում է) կամ կազմակերպության ինթերնետային էջը (<http://www.iccrom.org/>):

#### 5.1.9. Հուշարձանների համաշխարհային հիմնադրամ («WMF»)

Գոյություն ունեն մի շարք մասնավոր կազմակերպություններ, այնպիսին ինչպիսին է Հուշարձանների Համաշխարհային Հիմնադրամը, որը կազմում է վտանգված հուշարձանների ցանկը եւ որակավորում է դրանք դրամաշնորհային ծրագրերի համար: Հայաստանի պատմական մայրաքաղաք Անի 1996 եւ 1998 թվականներին մտել է WMF -ի առավել վտանգված 100 հուշարձանների ցանկի մեջ: Անիի վերաբերյալ տես նաեւ

<http://www.virtualani.freeseerve.co.uk/> ինթերնետային էջը: ՀՀ պատմության եւ մշակույթի հուշարձանների պաշտպանության վարչությունը ներկայումս աշխատում է WMF -ի հետ մի շարք ծրագրերով երերուկում եւ Մարմարաշենում Հայկական մշակույթի հետազոտման եւ փաստաթղթավորման կենտրոնի («CSDCA») (Centro di Studi e Documentazione della Cultura Armena) հետ միասին:

WMF -ն մասնավոր, շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը հիմնվել է 1965թ. մի խումբ անհատների կողմից, որոնք մտահոգված էին մշակութային եւ արվեստի համաշխարհային կարեւոր գանձերի ավելի ու ավելի արագ ոչնչացմամբ: WMF -ի նպատակն է այդ գանձերի կորստի դեմ ուղղված ծրագրերի մշակումը եւ իրագործումը: Իր գործունեության ավելի քան 30 տարիների ընթացքում WMF -ն կորորդինացրել է ավելի քան 208 խոշոր վերանորոգողական աշխատանք 70 երկրներում: WMF -ի գործունեության մեջ մտնում է փաստաթղթավորումներ, ուսումնասիրություններ, ուսուցողական ծրագրեր, ստրատեգիական պլանավորում, ֆինանսական միջոցների ներգրավում եւ հասարակական շահերի պաշտպանություն: WMF -ի կողմից 1995թ. ձեռնարկված ծրագիրը, որը կոչվում է Ուորլդ Մոնյումենտս Ուոտչ, նպատակ ունի հայտնաբերել մշակութային ժառանգության վտանգված հուշարձանները եւ ուղղել ֆինանսական եւ տեխնիկական օգնություն դրանց պահպանման ուղղությամբ: Ծրագրի նպատակն է գրավել համաշխարհային հանրության ուշադրությունը պատմության եւ մշակույթի վտանգված հուշարձանների վրա:

Յուրաքանչյուր տարի WMF -ն ստանում է իր անդամ երկրների կառավարությունների, մշակութային ժառանգության պահպանման գործով զբաղվող կազմակերպությունների եւ

անձանցից առավել վտանգված 100 հուշարձանների ցուցակի հավակնության առաջարկներ: 100 առավել վտանգված հուշարձանների ցանկի մեջ մտնելու համար կարող են առաջարկվել ցանկացած տիպի հուշարձաններ, ներառյալ պատմական կառույցներ, շենքերի խմբեր, պատմական շրջաններ, հնագիտական պեղումների հրապարակներ, հանրային արվեստ եւ մշակութային միջավայրեր՝ ինչպես մասնավոր, այնպես էլ պետական սեփականությամբ: Շարժական հուշարձանները եւ արվեստի գործերը կարող են ընդգրկվել ցուցակի մեջ միայն այն դեպքում, եթե դրանք համարվում են ճարտարապետական հուշարձանի անբաժանելի մաս: Ցուցակի մեջ կարող են ընդգրկվել ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր սեփականության տակ գտնվող հուշարձաններ: Միջազգային փորձագետների խորհուրդը հավակնությունները գնահատելուց հետո ընտրում է 100 վտանգված հուշարձանները աշխարհով մեկ, որոնք առավել լավ են համապատասխանում հետեւյալ չափանիշներին՝ հուշարձանի նշանակությունը մշակութային ենթատեքստում, անհապաղ ներագրեցության հրատապությունը եւ հուշարձանին սպառնացող վտանգների վերացման եւ այդպիսի ծրագրի հրականացման հնարավորությունը:

WMF -ն հրապարակում է առավել վտանգված 100 հուշարձանների ցանկը յուրաքանչյուր տարի: Ցուցակում ընդգրկված հուշարձանները հավակնում են սահմանափակ ֆինանսավորման՝ ստրատեգիական պլանավորման ծրագրերի, արտակարգ եւ տեխնիկական օգնության ծրագրերի, կրթական ծրագրերի, ֆինանսական միջոցների տեղական հայթայթման եւ կոնսերվացման աշխատանքների համար: Ֆինանսավորումը կատարվում է հանրային, մասնավոր եւ քորպորատիվ աղբյուրներից, իսկ դրամաշնորհները տատանվում են 10,000-ից 100,000 ԱՄՆ դոլարի շրջանակներում:

Չնայած որ WMF -ում գոյություն չունի անդամություն երկրների մակարդակի վրա, Հայաստանի կառավարությունը կարող է ներկայացնել Հայաստանին մտահոգող հուշարձանները առավել վտանգված 100 հուշարձանների ցուցակի մեջ ներգրավելու համար: Այդպիսի թեկնածություններ կարող են առաջարկվել ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում, այնպես էլ արտասահմանում գտնվող հուշարձանների համար, մասնավորապես Հայաստանի կառավարությունը, ինչպես նաեւ մտահոգված անհատներ կարող են առաջարկել որպես այդ ցուցակի հավակնորդներ Թուրքիայում, Վրաստանում եւ Ադրբեջանում գտնվող վտանգված հուշարձանների թեկնածությունները: Լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ստանալ WMF -ի ինթերնետային էջի վրա <http://www.wmf.org/> հասցեով:

Առաջարկներ ICOMOS-ի, ICCROM-ի եւ IUCN-ի վերաբերյալ

1. Խթանել ICOMOS-ի ազգային կոմիտե աշխատանքները, անդամակցվել ICCROM-ին եւ IUCN-ին, եթե դեռ անդամակցված չէ:
2. Ջարգացնել միասնական մշակութային եւ բնական ժառանգության քաղաքականություն եւ օրենսդրություն (հոդված 5(սի)):
3. Ակտիվորեն մասնակցել ՅՈՒՆԵՍԿՈ-ի գործունեությանը, քանի որ ՅՈՒՆԵՍԿՈ-ի շրջանակը հատկապես կարելու է սփռված մշակույթների համար, ինչպիսին է Հայաստանի մշակույթը, որտեղ սփռվածությունը կարելու է եւ նույնիսկ գերակայող: Տես օր. ՅՈՒՆԵՍԿՈ-ի հռչակագիրը Միջազգային մշակութային համագործակցության սկզբունքների վերաբերյալ ( նոյեմբեր 4, 1966, Փարիզ):
4. Ստեղծել փոխշահավետ հարաբերություններ, մեծացնել Հայաստանի բնության եւ մշակութային ժառանգության միջազգային ճանաչումը, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող մշակութային արժեքների եւ վայրերի պահպանության աջակցություն ստանալու նպատակով (հոդված 6.1):
5. Գույքագրել Հայաստանի համար էական նշանակություն ունեցող բնական եւ մշակութային վայրերը Հայաստանի Հանրապետությունում եւ դրանից դուրս:
6. Մասնակցել Լեռների Միջազգային Տարվան (2002), որը անց է կացվում IUCN-ի կողմից, հատկապես հաշվի առնելով Հայաստանի բնության լեռնոտությունը:

5.1.10. Գրանադայի եւ Մալթայի կոնվենցիաները

Սրանք հիմնական երկու կոնվենցիաներն են, որոնք վերաբերվում են շարժական եւ անշարժ գույքի ասպարեզում եւս-ի քաղաքականությանը: Մալթայի կոնվենցիան փոխարինում է հնագիտական ժառանգության պաշտպանության եվրոպական կոնվենցիան (Լոնդոն 1969): ՀՀ օրենքը նախատեսում է կոնվենցիաների կողմից բարձրացված հարցերը, սակայն տեղ տեղ մասամբ է արտահայտում դրանք կամ գործնականում դեռ չի կիրառվել: Օրինակ ՀՀ օրենքը ունի գույքագրման պահանջ, լիցենզավորման եւ թույլտվությունների ձեռք բերման պահանջ, պահպանման պայմանագրեր եւ վերահսկման զանազան մեխանիզմներ<sup>4</sup>, սակայն ամբողջական գույքագրումը եւ ռիսկի գնահատումը, հնագիտական տեղանքների ուսումնասիրությունները, քաղաքային պլանավորումը, բնական, մշակութային եւ հնագիտական ժառանգության պաշտպանությունը օրենքում միայն մասամբ է

<sup>4</sup> Տես բաժին 5.3-ը ՀՀ օրենքի վերոհիշյալ պահանջների մասին

նախատեսվում է կատարվում է ոչ ամբողջությամբ: Եթե այլ բան չի նշված թվարկված առաջարկները վերաբերվում են եւ Գրանադայի եւ Մալթայի կոնվենցիաններին:

Առաջարկներ Գրանադայի եւ Մալթայի կոնվենցիաների վերաբերյալ

1. Պատմության եւ մշակույթի հուշարձանների եւ պատմական միջավայրի պաշտպանության եւ օգտագործման սահմանումները համապատասխանեցնել կոնվենցիանների սահմանումներին: (հոդված 1):
2. Լրացնել կենտրոնացված քոնսերվացիայի գոյքագրումը տարբեր դասակարգումներով, որոնք պարունակում են ԵԽ-ի «Տվյալների Հիմնական Ինդեքս» տեղեկատվությունը համաձայն ԵԽ-ի R(95)3 առաջարկի, օրենսդրական ուղեցույցի (կետ. A2.1) եւ Հիմնական տեղեկությունների ստանդարտների, հնագիտական վայրերի եւ հուշարձանների համար (1999) օրենսդրական ուղեցույց B 2.0-ի, (հոդված 2):
3. Միասնականությունը եւ պատշաճ գործընթացը ապահովելու համար ռացիոնալիզացնել լիազորման մեխանիզմները, ինչպես նաեւ անշարժ մշակութային ժառանգության արդյունավետ պաշտպանությունը հանձնելով մեկ միասնական լիազորող մարմին: Օրենսդրական ուղեցույց A 4.6. (հոդված 3,4):
4. Պահպանել հնագիտական շարժական արժեքները հայտնաբերվելու վայրում, պահել իրար հետ կապված անշարժ եւ շարժական գույքը միասին (Մալթայի կոնվենցիա հոդված 4, Օրենսդրական ուղեցույց թիվ. A 1.3)
5. Ֆինանսավորում, հարկեր եւ մասնավոր խթաններ.
  - ապահովել թափանցիկության, հաշվետվության եւ պատշաճ գործընթացի միջազգային ստանդարտներ, խրախուսելու համար մասնավոր եւ հանրային ֆինանսավորմանը:
  - ընդունել հարկային արտոնություններ անշարժ մշակութային արժեքների սեփականատերերին եւ հարկային քաղաքականությամբ խրախուսել մշակութային ժառանգության պաշտպանության եւ ուսումնասիրության ուղղությամբ նվիրատվությունները:
  - որպես ֆինանսավորման մեխանիզ ստեղծել հանրային-մասնավոր ընկերակցություններ կամ մասնավոր հիմնադրամներ (Գրանադայի կոնվենցիա հոդված 6, Մալթայի կոնվենցիա հոդված 6):

6. Օրենսդրությամբ նախատեսել եւ կիրառել տուգանքներ մշակութային ժառանգության պահպանման օրենսդրության խախտման, վանդալիզմի, անօրինական տեղափոխումների, չարտոնված փոփոխությունների եւ պեղումների, վնասներ պատճառելու համար:
7. Համապարփակ կոնսերվացում եւ քաղաքային պլանավորում
- հստակեցնել անշարժ գույքի կոնսերվացման եւ դրա մոտակայքում կատարվող գործունեության եւ շինարարության սահմանափակումների գործընթացներ, հաշվի առնելով այդ վայրի անդորրը, նվիրականությունը եւ գեղագիտական գեղեցկությունը:
  - հստակեցնել շինարարության ընթացքում գտնված հնագիտական գտածոների պահպանման ընթացակարգը (Գրանադայի կոնվենցիա հոդված 10, Մալթայի կոնվենցիա հոդված 5):
8. Խթանել շենքերի ֆունկցիոնալ օգտագործումը՝ կիրառելով կոնսերվացման եւ օգտագործման հավասարակշռված քաղաքականություն եւ պատշաճ գործընթաց, հաշվի առնելով, որ հաճախ շենքը առավելագույնս պաշտպանված է, երբ այն օգտագործվում է (Գրանադայի կոնվենցիա հոդված 11, Օրենսդրական ուղեցույց հոդված 4.4):

## 5.2. Եվրոխորհրդի առաջարկները

5.2.1. Անդամ երկրների նախարարների կոմիտեի քիվ. R(95) 3 առաջարկը ճարտարապետական ժառանգության մաս կազմող պատմական շենքերի եւ հուշարձանների փաստաթղթավորման մեթոդների եւ համակարգերի ասպարեզում համագործակցության վերաբերյալ:

Ընդունվել է կոմիտեի կողմից 1995թ. հունվարի 11: Հիմնված է Գրանադայի կոնվենցիայի վրա, որը ճանաչում է, որ ճարտարապետական ժառանգությունը անտեղաշարժելի է: Ըստ կոնվենցիայի ճարտարապետական ժառանգությունը կազմում են հուշարձանները, շենքերի խմբերը եւ վայրերը: Հոդված 2-ը շեշտադրում է գույքագրման կամ համապատասխան փաստաթղթավորման անհրաժեշտությունը կոնսերվացման քաղաքականության համար: Հոդված 17-ը նախատեսում է կոնսերվացման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության փոխանակում, մասնավորապես գույքագրման մեթոդների եւ նոր տեխնոլոգիաների միջոցով ժառանգության հայտնաբերման եւ գրանցման նոր հնարավորություններ:

Հիմնական տվյալներ.



1. Անուն եւ հղումներ,
2. Գտվելու վայրը,
3. Նպատակային նշանակությունը,
4. Տարեթիվը,
5. Շենքի հետ կապված անձինք եւ կազմակերպությունները,
6. Շինարարության նյութերը եւ տեխնիկան,
7. Ֆիզիկական վիճակը,
8. Պահպանություն/հրավական կարգավիճակը,
9. Պատմական ակնարկ:

5.2.2. Առաջարկ թիվ. R(98) 4 անշարժ եւ շարժական գույքից բաղկացած պատմական համալիրների համապարփակ կոնսերվացման վերաբերյալ:

Ընդունվել է 1988թ. մարտի 17-ին Ճարտարապետական ժառանգության պահպանության եվրոպական կոնվենցիայի հոդված 1-ի հիման վրա, որը սահմանում է հուշարձանները որպես « ակնհայտ պատմական, հնագիտական, գեղարվեստական, գիտական, սոցիալական կամ տեխնիկական նշանակություն ունեցող բոլոր շենքերը եւ կառույցները, ներառյալ դրանց գույքը եւ պատկանելիքները»:

Շարժական մշակութային ժառանգությունը կազմում է եվրոպայի մշակութային ժառանգության հարստության եւ բազմազանության անտեղաշարժելի մաս: Ավելի շատ ուշադրություն պետք է դարձնել շարժական մշակութային ժառանգության հետ կապված եվրոպական ստանդարտների եւ փորձի վրա:

Հաշվի առնելով «Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին կոնվենցիան» 1954թ., «Մշակութային արժեքների անօրինական ներմուծման, արտահանման եւ սեփականության իրավունքի փոխանցման, արգելման ուղղությամբ միջոցառումների վերաբերյալ կոնվենցիան» 1970թ., «Մշակութային արժեքների հետ կապված հանցանքների վերաբերյալ եվրոպական կոնվենցիա» 1985թ. եւ «UNIDROIT-ի կոնվենցիան գողացված եւ ապօրինի արտահանված մշակութային արժեքների վերաբերյալ» 1995թ., առաջարկվում է անդամ երկրների կառավարություններին, որպես ճարտարապետական ժառանգության կոնսերվացման ընդհանուր քաղաքականության մաս, ստեղծել պայմաններ պահպանելու համար պատմական համալիրները, որոնք բաղկացած են շարժական եւ անշարժ գույքից համաձայն այս առաջարկի հավելվածում ներկայացված ուղեցույցի:

- Պաշտպանություն ա) պաշտպանության առարկան, բ) պաշտպանության արդյունքները
- Կառավարում

- *Հանրային տեղեկացվածություն*

**5.2.3. Առաջարկ թիվ. R(86) 11 – քաղաքային չկառուցապատված տարածքների վերաբերյալ**

*Ընդունվել է 1986թ. սեպտեմբերի 12-ին, Քաղաքային վերածննդի եվրոպական քարոզարշավի շրջանակներում:*

**Առաջարկներ`**

1. *ճանաչել այն բանաձեւը ըստ որի քաղաքները ոչ միայն շենքեր են այլ նաեւ չկառուցապատված տարածքներ եւ, որ չկառուցապատված տարածքները կազմում են քաղաքային միջավայրի եւ քաղաքի պատմական ժառանգության հիմնական մասերից մեկը, ինչը ծածկում է մեծ տարածքներ ինչպես քաղաքի պատմական տարածքում այնպես էլ նոր թաղամասերում:*
2. *Ձեռնարկել համապատասխան քայլեր ապահովելու համար, որ չկառուցապատված տարածքների կառավարումը լինի քաղաքային կառավարման բաղկացուցիչ մասը:*
3. *Ընդունել որ չկառուցապատված տարածքների ապահովումը, թույլատրումը եւ կառավարումը հիմնվում է մի շարք նոտեցումների վրա:*

**5.2.4. Առաջարկ թիվ. R(86) 15 – ճարտարապետական ժառանգության կոնսերվացման մաս կազմող արհեստավորական ապրանքների առեւտրի խթանման վերաբերյալ:**

*Ընդունվել է 1986թ. հոկտեմբերի 16-ին` հիմնված Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության կոնվենցիայի վրա: Առաջարկը հաշվի է առնում նաեւ որոշակի անհետացող արհեստների աջակցման վերաբերյալ թիվ. R(81) 13 առաջարկը:*

*Քաղաքականությունը իրականացնել հիմնված հետեւյալ սկզբունքների վրա`*

1. *ուսուցանել արհեստավորներին եւ բարելավել նրանց սոցիալական վիճակի,*
2. *զարգացնել արհեստների կենսունակությունը եւ արհեստավորների միջեւ կապերը,*
3. *հարմարեցնել արհեստները նոր տեխնոլոգիաներին, օրինակ նյութերի ընտրության հարցում,*
4. *զարգացնել համաեվրոպական փորձի փոխանակումը:*

5.2.5. Առաջարկ թիվ. R(89) 5 – հնագիտական ժառանգության պահպանությունը եւ զարգացումը քաղաքային եւ գյուղական պլանավորման համատեքստում:

Ընդունվել է 1989թ. ապրիլի 13-ին, ճարտարապետական ժառանգության պաշտպանության եվրոպական կոնվենցիայի եւ եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության կոնվենցիայի հիման վրա:

1. Առաջարկի նպատակը հնագիտական ժառանգության պաշտպանությունն է քաղաքների եւ գյուղական վայրերի զարգացման համատեքստում:
2. Նոր աշխատանքային մեթոդների զարգացում՝ տեխնիկական եւ գիտական լուծումներ, իրավական լուծումներ, պայմանագրային լուծումներ, ֆինանսական լուծումներ:
3. Ստեղծել պայմաններ աշխատանքների նախապատրաստման փուլում, աշխատանքի ընթացքում եւ աշխատանքներից հետո զարգացման եւ պաշտպանության անհրաժեշտ միջոցառումների ներդաշնակեցված ծրագրերի համար:

5.2.6. Առաջարկ թիվ. R(89) 6 – գյուղական ճարտարապետական ժառանգության պաշտպանության եւ զարգացման վերաբերյալ:

Ընդունվել է 1989թ. ապրիլի 13-ին, եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության կոնվենցիայի հիման վրա: Առաջարկը հաշվի է առնում Տարածքային համայնքների կամ իշխանությունների վերազգային համագործակցության կոնվենցիան (Մադրիդ):

1. Ապահովել գյուղական եվրոպայի կոլեկտիվ հիշողությունը, զարգացնելով դրա ճարտարապետական ժառանգության գնահատումը եւ ճանաչումը:
2. Ներառել ճարտարապետական ժառանգության պաշտպանությունը պլանավորման, տարածաշրջանային զարգացման եւ բնապահպանական պաշտպանության գործընթացներում:
3. Ակտիվացնել ժառանգության զարգացումը, որպես տեղական զարգացման կենսական անհրաժեշտություն,
4. Եվրոպայով մեկ խթանել գյուղական ժառանգության հանդեպ հարգանքը եւ բարձրացնել դրա ճանաչումը:

5.2.7. Առաջարկ թիվ. R (87) 5 – ճարտարապետական ժառանգության աղտոտման միջոցով արագացված քայքայման վերահսկողության վերաբերյալ:

Ընդունվել է 1988թ. մարտի 7-ին, եվրոպական մշակութային կոնվենցիայի եւ եվրոպայի ճարտարապետական

ժառանգության պաշտպանության կոնվենցիայի եւ Սալթայի կոնվենցիայի (վերանայված), ինչպես նաեւ ՅՈՒՆԵՍԿՈ-ի Ձինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին կոնվենցիայի (Հասագա) հիման վրա:

Սկզբունքները՝

- Ավերումից պաշտպանության իրավական եւ վարչական համակարգ,
- Ֆինանսական եւ ապահովագրական միջոցառումներ,
- Կրթություն եւ կրթական ծրագրեր,
- Ռիսկի գնահատում,
- Ավերումների կանխարգելում եւ զարգացման ռազմավարություն:

**5.2.8. Առաջարկ թիվ. R (93) 9 – ճառտարապետական ժառանգության պաշտպանությունը բնական աղետներից:**

Ընդունվել է 1993թ. նոյեմբերի 23 եվրոպայի մշակութային, գրանադայի եւ Սալթայի կոնվենցիաների, ինչպես նաեւ ՅՈՒՆԵՍԿՈ-ի «Ձինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954թ. Հասագայի կոնվենցիայի հիման վրա:

Սկզբունքները եւ միջոցառումները՝

- Աղետներից պաշտպանման իրավական եւ վարչական համակարգ,
- Ֆինանսական եւ ապահովագրական միջոցառումներ,
- Կրթական ծրագրեր,
- Ռիսկի գնահատում
- Աղետների կանխարգելում եւ վնասների մեղմացման ռազմավարություն:

**5.2.9. Առաջարկ թիվ. R (95) 9 - պատմական միջավայրի ինտեգրացված պաշտպանությունը, որպես միջավայրի պաշտպանության քաղաքականություն:**

Ընդունվել է 1995թ. սեպտեմբերի 11-ին Համաշխարհային մշակութային եւ բնական ժառանգության Փարիզյան, գրանադայի, Սալթայի կոնվենցիաների եւ Ռիո Դե ժանեյրոյում տեղի ունեցած Բնապահպանության եւ զարգացման վերաբերյալ ՄԱԿ-ի համագումարի եզրափակիչ արձանագրության հիման վրա:

Այս Առաջարկը ունի երկու հիմնական նպատակ՝

1. Եվրոպական ինքնության հարգմանը եւ զարգացմանն ուղղված միջավայրի պաշտպանության քաղաքականությունների ուղղեցույցների տրամադրում,

2. Մշակութային միջավայրի տեղանքների պահպանման եւ կառավարվող զարգացման միջոցների առաջարկներ:

Այլ սկզբունքները՝

- Մշակութային վայրերի սահմանման եւ գնահատման գործընթաց,
- Իրավասությունների մակարդակ եւ գործողությունների ռազմավարություն,
- Մշակութային վայրերի իրավական պաշտպանություն եւ կոնսերվացում, որպես միջավայրի պահպանման քաղաքականության մաս,
- Տեղեկատվություն եւ տեղեկացվածության բարձրացում,
- Ուսուցում եւ ուսումնասիրություններ,
- Միջազգային համագործակցություն

5.2.10. Առաջարկ թիվ. R (97) 2 – Մշակութային ժառանգության շարունակական պաշտպանությունը աղտոտման եւ այլ նմանատիպ գործոններից առաջացող վիճակի վատթարացումից:

Ընդունվել է 1997թ. փետրվարի 4-ին, Եվրոպայի մշակութային կոնվենցիայի, Գրանադայի եւ Մալթայի կոնվենցիաների հիման վրա:

Սկզբունքներն են՝

- «Աղտոտում եւ այլ նմանատիպ գործոններ» սահմանումը վերաբերվում է այն հանգամանքին, որ վիճակի վատթարացումը կատարվում է սիներգետիկ էֆեկտով, երբ եղանակային պայմանների բացասական ազդեցությանը գումարվում են աղտոտումը եւ ոչ պատշաճ օգտագործումը:
- Պակասեցնել վիճակի վատթարացում առաջացնող պատճառները:
- Իրավական եւ վարչական համակարգ:
- Կազմակերպչական եւ ժրագրային միջոցառումներ:
- Ուսուցում:
- Հանրության տեղեկացվածության բարձրացում:

5.2.11. Առաջարկ թիվ. R (96) 6 – Մշակութային ժառանգությունը անօրինական գործողություններից պաշտպանելու վերաբերյալ:

Ընդունվել է 1996թ. հունիսի 19-ին, հիմնված է Փարիզի, Գրանադայի, Մալթայի (վերանայված) եւ Դելֆիի կոնվենցիաների վրա:

Սկզբունքներն են՝

- «Անօրինական գործողություն» սահմանումը նշանակում է ցանկացած գործողություն, որը իրականացվում է օրենքի մշակութային ժառանգության պաշտպանությանն ուղղված պահանջների խախտումներով, անկախ նրանից, թե այդ գործողությունները կատարվում են մտադրված, թե առանց մտադրության:
- Կիրառումը՝ ռիսկի վերլուծությունը անհրաժեշտ է կանխարգելիչ միջոցառումների ծրագրերի զարգացման համար, որոնք կպակասեցնեն ռիսկը:
- Անօրինական գործողությունների հետ առնչվող ռիսկի վերլուծության մեթոդներ:
- Անօրինական գործողությունների կանխարգելման եւ դրանց հետեւանքների դեմ պայքարի ռազմավարություն:
- Աշխատակազմի ուսուցում եւ հասարակական տեղեկացվածության բարձրացում:

5.2.12. Առաջարկ թիվ. R (98) 5 – մշակութային ժառանգության ասպարեզում կրթության վերաբերյալ: Ընդունվել է 1998թ. մարտի 17-ին: Առաջարկը կարելի է մշակութային ժառանգության ասպարեզում հանրության տեղեկացվածության նշանակությունը, ինչպես մշակութային ինքնաճանաչողության այնպես էլ մշակույթների փոխադարձ ճանաչման համար, ինչպես նաև հանրության աջակցությունը մշակութային ժառանգության պահպանման գործում:

### 5.3. ՀՀ օրենսդրությունը

ՀՀ օրենսդրական եւ վարչական համակարգը ներառում է միջազգային նորմեր, որոնք արտահայտված են ՀՀ սահմանադրության (հոդված 6. եւ 43) եւ ներքին օրենսդրության մեջ<sup>5</sup>: ՀՀ իրավական

<sup>5</sup> ՀՀ Սահմանադրությունը հոդված 6 «Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքի գերակայությունը: Հանրապետության Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, եւ նրա նորմերը գործում են անմիջականորեն: Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքները, ինչպես նաև Սահմանադրությանը եւ օրենքներին հակասող ճանաչված այլ իրավական ակտերը իրավաբանական ուժ չունեն: Օրենքները կիրառվում են միայն պաշտոնական հրապարակումից հետո: Մարդու իրավունքներին, ազատություններին եւ պարտականություններին վերաբերող չիրապարակված իրավական ակտերը իրավաբանական ուժ չունեն: Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերը կիրառվում են միայն վավերացվելուց հետո: Վավերացված միջազգային պայմանագրերը Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված է օրենքով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը կարող են վավերացվել Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց հետո»: ՀՀ Սահմանադրությունը հոդված 43 Սահմանադրությանը ամրագրված իրավունքները եւ ազատությունները սպառիչ չեն եւ չեն կարող մեկնաբանվել որպես մարդու եւ քաղաքացու այլ հանրաճանաչ իրավունքների եւ ազատությունների բացառում:

համակարգում տեղ են գտել մշակութային ժառանգության պաշտպանության քաղաքականության բազմաթիվ էական տարրեր, այնուամենայնիվ այդ տարրերից եւ դրույթներից շատերը ուղակիորեն չեն մշակվել այս նպատակների համար: Ավելին, վերջին տասնամյակի ընթացքում, բավարար հնարավորություն, ժամանակ եւ ռեսուրսներ չեն եղել այդ տարրերի նոր կիրառությունները մեկ համընդգրկուն քաղաքականության կամ իրավական համակարգի մեջ ընդգրկելու համար, մասնավորապես, վերածելու այն ինտեգրացված վարչական եւ քաղաքականության մշակման գործընթացի, ինչը պահանջվում է, օրինակ, ԵԽ-ի Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պահպանման կոնվենցիայի հոդվածներ 10 եւ 13-ով (Գրանադայի կոնվենցիա, 1985թ. հոկտեմբերի 3):

5.3.1. ՀՀ սահմանադրությունը (ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ի հանրաքվեում)

Սահմանադրության 11 եւ 28 հոդվածները ուղղակիորեն առնչվում են մշակութային ժառանգության հարցին: Հոդված 11-ը սահմանում է մշակութային ժառանգության պաշտպանության բովանդակային, իսկ հոդված 28-ը ընթացակարգային հիմքերը: Հոդված 11-ը հռչակում է պետության պարտավորությունը պաշտպանելու հայկական մշակութային ժառանգությունը Հայաստանում եւ արտասահմանում, իսկ հոդված 28-ը սահմանում է պետության իրավունքը միջամտելու եւ սահմանափակելու մասնավոր իրավունքները պետության օրինական իրավունքները պաշտպանելու նպատակով: Սրանք ամրագրված են նաեւ միջազգային համաձայնագրերով եւ նորմերով, որոնք կիրառելի են Հայաստանի նկատմամբ:

*հոդված 11*

Պատմության եւ մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքներ գտնվում են պետության հոգածության եւ պաշտպանության ներքո:

Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի սկզբունքների եւ նորմերի շրջանակներում նպաստում է այլ պետություններում գտնվող հայկական պատմական եւ մշակութային արժեքների պահպանմանը, աջակցում հայ կրթական եւ մշակութային կյանքի զարգացմանը

*հոդված 28*

Յուրաքանչյուր ոք ունի սեփականության եւ ժառանգման իրավունք: Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները

եւ քաղաքացիություն չունեցող անձինք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում:

Սեփականության օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ:

### 5.3.2. ՀՀ քրեական օրենսգիրք

ՀՀ քրեական օրենսգիրքը վերանայման գործընթացում է: Չնայած այն հանգամանքի, որ Քրեական օրենսգիրքը մի քանի անգամ լրացվել եւ փոփոխվել է այն դեռեւս խորհրդային օրենսգիրք է եւ չի նախատեսում հատուկ դրույթներ միջազգայնորեն սահմանված մշակութային ժառանգության պաշտպանության խախտումների դեպքերում: Այնուամենայնիվ, հոդված 73-ը եւ հոդված 243-ը նախատեսում են քրեական պատիժ նման ընդհանուր հանցագործությունների համար:

#### Հոդված 73. Մաքսանենգությունը

Մաքսանենգությունը, այսինքն՝ ապրանքների, մշակութային կամ այլ արժեքների ապօրինի տեղափոխումը Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանի վրայով առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով, կամ մաքսային եւ այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելու միջոցով, եթե այն կատարվել է խոշոր չափերով (Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հազարապատիկի չափը գերազանցող գումարի (արժեքի))՝

պատժվում է ազատազրկմամբ երկուսից մինչեւ հինգ տարի ժամանակով՝ գույքի բռնագրավումով կամ առանց բռնագրավման:

Ձեռքի, զինամթերքի, թմրանյութերի, խիստ ներգործող, թունավոր, ռադիոակտիվ, պայթուցիկ նյութերի եւ պայթուցիկ հարմարանքների, կամ պաշտոնեական դիրքի չարաչափմամբ, կամ կազմակերպված խմբի կողմից կատարված մաքսանենգությունը, ինչպես նաեւ նախկինում նույն արարքի համար դատապարտված անձի կողմից կատարված մաքսանենգությունը՝

պատժվում է ազատազրկմամբ երեքից մինչեւ ութ տարի ժամանակով՝ գույքի բռնագրավումով:

#### Հոդված 243.

Պետության կողմից պահպանվող բնության օբյեկտները կամ պատմության եւ կուլտուրայի հուշարձանները վնասելը կամ ոչնչացնելը



Պետության կողմից պահպանվող բնության օբյեկտները կամ պատմության եւ կուլտուրայի հուշարձանները դիտավորությամբ վնասելը կամ ոչնչացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ մինչեւ երկու տարի ժամանակով, կամ ուղղիչ աշխատանքներով նույն ժամանակով, կամ տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչեւ քառասնապատիկի չափով:

**5.3.3. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ուժի մեջ է մտել 2000թ. մարտի 1-ից:**

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (ՔՕ) սահմանում է գույքային իրավունքների եւ գույքի օգտագործման, ներառյալ գույքի հայտնաբերման, վերադարձման եւ վերականգման ընդհանուր պայմանները:

Գույքային հարաբերությունները կարգավորելու պետության իրավունքը նախատեսվում է հոդված 163.2-ում, որը սահմանում է.

«Սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող եւ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման եւ տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով»:

Հողային հարաբերությունների երկարաժամկետ կարգավորման կարելու միջոց է սերվիտուտը, որը կիրառվում է անշարժ գույքի նկատմամբ: Քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է սերվիտուտների գրանցումը (հոդված 213) ի շահ պետության եւ հերեւանությամբ գտնվող գույքի/հողի սեփականատերերի՝ օրինակ, հողի նկատմամբ (հոդված 213 եւ Հողային օրենսգիրք, հոդված 50), շենքերի նկատմամբ (հոդված 217): Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածը թույլատրում է պետությանը ձեռք բերել եւ սահմանել սերվիտուտներ մշակութային, պատմամանական եւ բնական ժառանգությունը պաշտպանելու նպատակով: Սերվիտուտը գույքի երկարաժամկետ օգտագործման ձեւ է, որի համար սովորաբար պահանջվում է փոխհատուցում (հոդված 214): Բացի այդ, պետությունը իրավունք եւ պարտականություն ունի գնելու վտանգված մշակութային արժեքները (հոդված 279.2.4., հոդված 284<sup>6</sup>): Գույքային իրավունքները կարող են դադարել համաձայն

<sup>6</sup> ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք հոդված 284

հողված 282-ի, եթե գույքը չի կարող լինել մասնավոր սեփականություն, օրինակ, պարզվել է, որ այն կարելի է կրոնական կամ մշակութային նշանակություն ունի: Պետության կողմից առգրավման դեպքում գույքի սեփականատերը իրավունք ունի ստանալ փոխհատուցում ԳԳ սահմանդրության 28-րդ հոդվածի համաձայն, քաղաքացիական օրենսգրքի 287 հոդվածով սահմանված չափերով: Քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է նաև դատական վճիռ գրավադրված մասնավոր սեփականություն հանդիսացող մշակութային արժեքների բռնագանձման համար (հոդված 249.2.):

Գոտիավորումը նախատեսված է ՔՕ հոդված 188-ով<sup>7</sup> եւ Հողային օրենսգրքի հոդված 29-ով եւ Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին օրենքի հոդված 16, 19-ով:

Պահպանվող շենքերի եւ տեսարժան վայրերի հետ կապված շինարարությունը կարգավորվում է Քաղաքաշինության մասին օրենքի հոդված 19-ով<sup>8</sup> եւ Պատմության եւ մշակույթի

---

1. Այն դեպքում, երբ օրենքի համաձայն՝ առանձնապես արժեքավոր եւ պետության կողմից պահպանվող մշակութային արժեքների սեփականատերը դրանք պահում է անտնտեսվար, ինչը սպառնում է դրանց նշանակության կորստին, նման արժեքները դատարանի վճռով կարող են վերցվել սեփականատիրոջից՝ պետության կողմից դրանց գինը հատուցելու միջոցով:

2. Մշակութային արժեքները վերցնելիս սեփականատիրոջը դրանց արժեքը հատուցվում է կողմերի համաձայնությամբ, իսկ վեճի դեպքում՝ դատարանի սահմանված չափով:

7 ԳԳ Քաղաքացիական Օրենսգիրք. Հոդված 188. Ինքնակամ կառույցը և դրա հետևանքները

1. Ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց անհրաժեշտ թույլտվության կամ քաղաքաշինական ու շինանարկան նորմերի և կանոնների էական խախտումներով ստեղծված բնակելի շենքեր, շինություններ այլ կառույցը կամ այլ անշարժ գույքը:

2. Ինքնակամ կառույց իրականացրած անձը դրա նկատմամբ ձեռք չի բերում սեփականության իրավունք: Նա իրավունք չունի տնօրինել կառույցը՝ այն վաճառել, նվիրել, հանձնել վարձակալության, կնքել այլ գործարքներ:

3. Դատարանը կարող է ինքնակամ կառույցի նկատմամբ ծանաչել այն անձի սեփականության իրավունքը, որի սեփականության իրավունքով պատկանող հողամասում իրականացրել է շինարարություն:  
Ինքնակամ կառույցի նկատմամբ նշված անձի սեփականության իրավունքը չի կարող ծանաչվել, եթե կառույցը պահպանելը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

8 Հոդված 19. Քաղաքաշինության գործունեության հատուկ կարգավորման օբյեկտները  
Քաղաքաշինական գործունեությունը ենթակա է հատուկ կարգավորման, եթե տարածքների օգտագործումը, հատակագծումը, կառուցապատումը, քաղաքացիների, հասարակության, պետության շահերի ապահովումն առանց օրենսդրական լրացուցիչ լուծումների դառնում է դժվար կամ անհնար:  
Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների առանձնացումը որոշվում է՝ ելնելով դրանց սոցիալ-տնտեսական զարգացման ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և բնապահպան իրավիճակի հիմնահարցերի փոխկապակցված լուծման, ազգային, պատմամշակութային,

անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին օրենքի հոդվածներ 21 եւ 22-ով:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նաեւ նախատեսում է գողացված մշակութային արժեքների վերականգնման եւ պահպանման մեխանիզմներ, ներառյալ այն բարեխիղճ ձեռք բերողից (հոդված 275) եւ անսահմանափակ հայցային վաղեմության ժամկետ օրինական սեփականատերի իրավունքների վերականգնման համար (հոդված 344): Օրինական սեփականատերերին գույքի վերադարձը ապահովվում է նաեւ Քաղաքացիական օրենսգրքի հոդվածներ 180-182-ով, որոնք նախատեսում են գտնված գույքի մասին հայտարարելու պարտավորություն: Քաղաքացիական օրենսգրքով՝ հոդված 186, որպես մշակութային արժեքի հատուկ տեսակ կարգավորվում է նաեւ գանձերի հետ կապված հարաբերությունները: Գանձը դիտարկվում է որպես հողի սեփականատիրոջը պատկանող գույք, եթե այն պատմական կամ մշակութային գույք չէ, որի դեպքում, ՔՕ հոդված 186.3-ը պահանջում է, որ գանձը գտնողը դրա մասին տեղյակ պահի պետությանը, որի համար նրան տրվում է գանձի արժեքի 50%-ը որպես փոխհատուցում:

#### 5.3.4. Քաղաքաշինության մասին օրենք

ՀՀ Քաղաքաշինության մասին օրենքի (ընդունվել է 1998թ մայիսի 26-ին) 19, 23, 24 հոդվածները նախատեսում են հատուկ թույլտվություն այն տարածքներում աշխատելու համար, որոնցում գտնվում են պատմական եւ մշակութային արժեքներ:

#### 5.3.5. Հողային օրենսգիրք

ՀՀ հողային օրենսգիրքը (ընդունվել է 2001թ. հունիսի 5-ին) նախատեսում է մի շարք դրույթներ, որոնք կապված են հողի օգտագործման եւ հնագիտական վայրերի պահպանության հետ:

Հողի օգտագործումը կարգավորելու պետության իրավունքը նախատեսվում է հոդված 8-ով, որը կարող է ներառել հողի օգտագործման սահմանափակումներ պատմական եւ մշակութային արժեքները պահպանելու նպատակով: Այս կարգավորումները տարածվում են նաեւ պահպանվող հողերի օգտագործման (հոդված 19), եւ պատմական ու մշակութային

---

լանդշաֆտային և բնապատկերային արժեքների պահպանման, աղետների, պատերազմական գործողությունների, արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման անհրաժեշտությունից:

Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների սահմանները կարող են չհանդիսանալ վարչատարածքային միավորների սահմանների հետ:

Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների առանձնացումը և գործունեության կարգը սահմանվում են օրենքով:

Երևանը քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ է:

հողերի օգտագործման վրա (հողված 23), վերջինս ներառում է բնական այգիները, զերեզմանատների տարածքները, ճակատամարտերի վայրերը եւ հնագիտական վայրերը, ինչպես նաեւ պահպանվող գոտիները: Գոտիավորմանը վերաբերող դրույթները (հողված 29) նախատեսում են քաղաքի պլանավորման ավելի ընդհանուր կարգավորում: Մշակութային եւ պատմական ժառանգության պահպանումը աղտոտված տարածքներում կարգավորվում է հողված 38-ով: Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածը հատուկ թույլատրում է պետությանը ձեռք բերել սերվիտուտներ բնական, մշակութային եւ պատմական ժառանգության պահպանման համար: Որոշակի հողեր չեն կարող լինել մասնավոր սեփականություն, համաձայն հողված 60-ի, ներառյալ որոշակի բնական, մշակութային եւ պատմական վայրերը: Մասնավոր սեփականությունը կարող է դադարեցվել համաձայն հողված 102-ի (նաեւ ՔՕ, հողված 285)՝ փոխհատուցման պայմանով: Պահպանվող հողերում շինարարությունը թույլատրվում է միայն համաձայն հատուկ թույլտվությունների եւ կանոնների (հողված 73):

5.3.6. ՀՀ օրենք թիվ 261 պատմության եւ մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին (ընդունվել է 1998թ. դեկտեմբերի 12-ին)

Առաջարկներ հուշարձանների եւ պատմական միջավայրի պաշտպանության մասին օրենքի վերաբերյալ.

1. Վտանգի տակ գտնվող անշարժ մշակութային ժառանգության հայտնաբերում եւ գերապատվությունների սահմանում  
Կազմել վտանգի տակ գտնվող մշակութային ժառանգության ցուցակ, որոնց պահպանության համար պետք է տրամադրվեն համապատասխան միջոցներ: Որոշել եւ հրապարակել այն խախտումները, որոնք վտանգում են մշակութային ժառանգությունը:
2. Հուշարձանների դասակարգումը՝ տեղական եւ ազգային նշանակության  
Առավել նպատակահարմար է դասակարգումը կատարել ըստ մշակութային նշանակության, քան թե աշխարհագրական՝ հաշվի առնելով, որ Հայաստանը փոքր երկիր է՝ ոչ մեծ էթնիկ եւ մշակութային բազմազանությամբ: (ՀՀ օրենք, հողված 6.1., ԵԽ-ի օրենսդրական ուղեցույց A, 2.2, 3.3, 4.0):
3. Տվյալների ներդաշնակեցումը համապատասխան ԵԽ-ի «Օրինակելի տվյալների կատայոգ» առաջարկի (R(95)3)

Կարգավորել բազմամակարդակ եւ տարբեր կազմակերպություններում իրականացվող գործընթացը համաձայն ՀՀ օրենսդրության՝ օգտագործելով էլեկտրոնային կառավարման տարբերակը, պահպանվող մշակութային ժառանգության միասնական համակարգչային տվյալների շտեմարան ստեղծելու նպատակով (Օրենսդրական ուղեցույց A2.1, B2.0)

4. Քաղաքային պլանավորման եւ մշակութային ժառանգության պահպանման գործունեությունների հնտեզրագիւ, եւ միասնական թույլատրման համակարգ

Ներկայումս գոտիավորման եւ այլ շինարարական թույլատրությունները տրվում են տարբեր պետական մարմինների կողմից, ինչը կարող է հանգեցնել անհամատեղելիության եւ անարդյունավետության, վերասկողության եւ հաշվետվության բացակայության, անհարկի ուշացումների եւ անարդարության (Օրենսդրական ուղեցույցներ A4.6, Գրանադայի Կոնվենցիա հոդված 10 եւ ՀՀ օրենք հոդված 19, 21):

5. Եկեղեցի-պետություն հարաբերություններ

Եվրոպայում գոյություն ունեն տարբեր մոտեցումներ՝ հիմնված այնպիսի չափանիշների վրա, ինչպիսիք են եկեղեցի-պետություն պատմական հարաբերությունները, ազգային կամ վերազգային (Կաթոլիկ եկեղեցի) եկեղեցու ներկայությունը կամ եկեղեցու պետական ֆինանսավորման մակարդակը: ԵԽ-ն դեռեւս ուսումնասիրում է այս հարցը եւ չի ներկայացրել որեւէ առաջարկ: Ամենակարեւոր հարցերից է հանդիսանում այն, թե արդյո՞ք մշակութային ժառանգության պահպանման ընդհանուր կիրառման օրենքները կիրառելի են եկեղեցական գույքի նկատմամբ կամ արդյո՞ք եկեղեցուն պետք է տրվի ավելի մեծ ազատություններ, հատկապես պաշտամունքային գործող կառույցների պահպանելու եւ վերափոխելու հարցում: Ինչպես առավել մանրամասնությամբ տրված է Բաժին 6.4-ում՝ եկեղեցու եւ պետության առանձնացման դոկտրինայի լույսի ներքո եւ պետության եւ եկեղեցու միջեւ անհարկի տարածայնություններից եւ խառնաշփոթություններից խուսափելու նպատակով, Հայ եկեղեցուն պետք է տրվի եկեղեցական գույքը պահպանելու ազատ ռեժիմը՝ իրավունք, ինչպես դա ընթունված է մի շարք ազգային եկեղեցիների համար Եվրոպայում: Օրենսդրական ուղեցույց A4.3:

**6. ՀՀ տարածքից դուրս գտնվող մշակութային ժառանգություն**

Ընդլայնել ԵԽ-ի անդամների մասնակցությունը փոխանակումների եւ կորորդինացված քաղաքականության առումով համաձայն հոդված 18-19-ի՝ ՀՀ սահմանադրության հոդված 11 պահանջները կատարելու նպատակով: Միջազգային նորմերի շրջանակներում խթանել այլ տարածքներում գտնվող հայկական մշակութային հուշարձանների գրանցումը, ուսումնասիրումը, պահպանումը, կոնսերվացումը եւ վերականգնումը:

**7. Հուշարձանների օգտագործումը**

Խթանել պատմական հուշարձանների օգտագործումը եւ վերամշակումը որպես մշտատեւ պահպանության եւ զարգացման միջոցներ համաձայն Գրանադայի կոնվենցիայի հոդված 11 եւ Օրենսդրական ուղեցույց A4.4:

**8. Հեղինակի իրավունքները**

Ներկայումս ճարտարապետները կամ նրանց ժառանգները ունեն փաստացի վետոյի իրավունք նրանց կողմից գծագրված շենքի որեւէ վերափոխման նկատմամբ, եթե նույնիսկ նրանք դա կատարել են՝ լինելով պետական կամ մասնավոր ընկերության աշխատակիցներ: Հստակեցնել հեղինակի թույլտվությունը ստանալու ընթացակարգը շենքերը վերածելու համար, ներմուծել դրա հստակ չափանիշներ<sup>9</sup>:

**9. Պահպանության հիմնադրամ**

Զարգացնել իրավական դաշտը այնպես, որ թույլատրվի հիմնադրամների հիմնումը, գուցե մասնակի պետական մասնակցությամբ, աջակցելու համար սեփականատերերին պահպանել մշակութային արժեքները (տես օրինակ Նիդեռլանդական փոխանցիկ հիմնադրամի մոդելը):

**5.3.7. Ներմուծման-Արտահանման մասին օրենք**

ՀՀ օրենք թիվ 112 Մշակութային արժեքների ներմուծման եւ արտահանման մասին (ընդունվել է 1994թ. հուլիսի 8-ին):

<sup>9</sup> Օրինակ՝ անգլիական օրենքի համաձայն, շենքի նախագծի հեղինակային իրավունքը պատկանում է ճարտարապետների գործատու ընկերությանը, եւ սովորաբար շենքում փոփոխություններ կատարելը չի պահանջում հեղինակի թույլտվությունը: Anthony Speaight & Gregory Stone, Architect's Legal Handbook, 7th Ed., (Oxford: Architectural Press, 2000), p. 351.

Ներմուծման-արտահանման ռեժիմը

Յուրաքանչյուր երկիր պետք է ստեղծի մշակութային արժեքների արտահանման-ներմուծման թույլտվությունների իր յուրահատուկ համակարգը, սակայն գոյություն ունեն մի շարք արդեն փորձված եւ արդարացված մեխանիզմներ: Օրինակ Անգլիայում, ինչպես եւ շատ այլ երկրներում, կա ընդհանուր արտահանման արտոնագիր, որը թույլ է տալիս որպեսզի այն առարկաները, որոնք չեն ներկայացնում հատուկ մշակութային նշանակություն, արտահանվեն առանց լիցենզիայի: Հատուկ մշակութային նշանակության առարկաները պետք է գնահատվեն եւ որոշվեն, թե արդյոք դրանք կարող են արտահանվել՝ ժամանակավորապես կամ մշտապես: Արտահանման լիցենզիա շնորհելու համար հաշվի են առնվում մի շարք գործոններ. (1) ազգային ժառանգության պահպանությունը, (2) սեփականատերերի, գնորդների, արտահանողների իրավունքները, (3) Մեծ Բրիտանիայի վարկանիշը արվեստի առարկաների միջազգային շուկայում: Առարկայի մշակութային նշանակությունը որոշվում է հաշվի առնելով մի քանի չափանիշներ, որոնք հայտնի են որպես Wavely չափանիշներ եւ առաջին անգամ ձեւակերպվել են 1950թ.՝ (1) արդյո՞ք տվյալ առարկան այնքան սերտորեն կապված է մեր պատմության եւ ազգային կյանքի հետ, որ դրա բացակայությունը կդիտվի որպես մշակութային աղետ (2) արդյո՞ք այն ներկայացնում է բացառիկ գեղագիտական արժեք, (3) արդյո՞ք այն ներկայացնում է բացառիկ նշանակություն արվեստի որեւէ ճյուղի ուսումնասիրության կամ պատմության համար: Այս ստանդարտները կիրառվում են Վերանայման Հանձնաժողովի կողմից, որը բաղկացած է մասնավոր փորձագետներից, որոնք գործում են որպես Ազգային պահպանման պետական քարտուղարության խորհրդատուներ, որը կամ արտոնում է կամ մերժում արտահանումը<sup>10</sup>:

Ներմուծման-Արտահանման մասին օրենքի, հոդված 7-ը, նախատեսում է նմանատիպ ընդհանուր արտահանման լիցենզիա “մշակութային նշանակություն ունեցող սերիական եւ զանգվածային արտադրության առարկաների եւ ժամանակակից հուշանվերային արտադրանքների վրա”: Սակայն, հոդված 6-ի “ամեն ինչ ներառող” դրույթի այլ առարկաների թվարկումը, որը ներառում է “պատմական, գեղարվեստական, գիտական կամ այլ մշակութային նշանակություն ունեցող պատճեններ, որոնք որպես պատմության եւ մշակույթի հուշարձաններ վերցված են պետական պահպանության”, լայն մեկնաբանման պարագայում կարող են բերել ժամանակակից արվեստի եւ արհեստի գործերի արտահանման անհարկի ծանրացնող ռեժիմի եւ այդպիսով խոչընդոտել ժամանակակից արվեստի զարգացմանը եւ վնաս

<sup>10</sup> Paul Kearns, *The Concept of Art* (Oxford, 1998) pp. 150-154.

հասցնել դրա կենսունակությանը: Այդ վտանգը նշմարվում է նաև պետական պաշտոնյաների, արվեստաբանների եւ տուրիստների հետ բազմաթիվ հարցազրույցների ընթացքում: Շատ տուրիստներ եւ վաճառողներ կարծում են, որ գնորդի վրա նշված բեռը չափազանց մեծ է եւ, որ ավելի հեշտ ընթացակարգ պետք է մշակվի: Առաջարկվում է որպեսզի արտահանման թուլտվության ներկա ռեժիմի արդյունավետությունը վերանայվի բոլոր շահագրգիռ անձանց մասնակցությամբ:

Առաջարկներ ՀՀ արտահանման-ներմուծման օրենքի վերաբերյալ

1. Պատրաստել եւ հրապարակել կորսված եւ վտանգված շարժական մշակութային արժեքների ցանկ:
2. Ապահովել շենքերի, եւ դրանց պատկանելիք շարժական գույքի անվտանգությունը:
3. Օպտիմալացնել արտահանման վկայականի ստացման ընթացակարգը: Ստեղծել արտահանման վկայականների տրման համակարգ վաճառքի պահին: Ներդնել արտահանման երկարաժամկետ վկայականների: Սահմանել արտահանման վկայականների դիմումների քննման ավելի կարճ ժամկետ (այժմյան 3 ամսվա փոխարեն, հոդված 28): Ստեղծել արտահանման երկարաժամկետ (3-10 տարի) վկայականներ գույքի որոշ տեսակների համար, կամ սահմանել գույքի հատուկ տեսակներ, որոնց համար այդպիսի վկայականներ չեն կարող տրվել, փոխանակ ժամանակակից համակարգի, երբ վկայականը տրվում է գույքի ներկա սեփականատիրոջը եւ չի փոխանցվում հաջորդին (օրենսդրական ուղեցույց B 5.2): Սա կօգնի խթանել գեղարվեստի եւ կիրառական արվեստի առարկաների վաճառքը եւ զբոսաշրջիկային առեստուրը ընդհանրապես:
4. Գույքագրում: Ապահովել, որ հանրային սեփականության ներքո գտնվող շարժական մշակութային արժեք ներկայացնող գույքը պատշաճորեն գրանցված լինի, եւ մատչելի լինի կարգավորող մարմինների, մասնագետների եւ դիլերների համար կենտրոնացված միասնական քոնֆիլդերային տվյալների շտեմարանների միջոցով: Ընդունել մշակութային արժեք ներկայացնող գույքի փաստաթղթավորման ստանդարտ համակարգերից որեւէ մեկը, օր՝ CIDOC (Getty) կամ EMII (տես հավելվածը): Կիրառել հարկային գործիքներ, խթանելու համար



մշակութային ժառանգության մաս կազմող գույքի մասնավոր սեփականատերերին գրանցելու այդ գույքը: Խրախուսել գույքի գրանցումը՝ կատարելով գրանցված գույքի ապահովագրում կամ վերանորոգելով այն:

5. Ստեղծել Հիմնադրամ, որը կֆինանսավորի արտահանվող գույքը գնելու պետության առաջնային իրավունքի գործադրումը: Կրճատել այդ իրավունքից օգտվելու ժամկետը ներկայումս 38 հոդվածով նախատեսված 1 տարվանից:
6. Մշակել էթիկայի կանոններ դիլերների համար եւ հատուկ ուղեցույց եկեղեցական շարժական գույքի պահպանության համար: տես. Մշակութային արժեքների դիլերների էթիկայի կանոնները եւ ԵԽ-ի Վերջնական հռչակագիրը եկեղեցական սեփականության մշակութային արժեքների անօրինական փոխադրումների մասին:

#### 5.3.8. Արխիվների մասին օրենք

ՀՀ թիվ 161 օրենքը ազգային արխիվային ֆոնդի մասին (ընդունվել է 12 դեկտեմբերի 1997):

#### Առաջարկներ ՀՀ Արխիվների մասին օրենքի վերաբերյալ.

1. Հայաստանում եւ այլուր գտնվող վտանգված արխիվային նյութերի ցուցակագրում եւ այդ նյութերի պաշտպանության եւ հավաքագրման առաջնայնության որոշում:
2. Ստեղծել Հայաստանում եւ արտասահմանում գտնվող արխիվների կենտրոնացված քոնսիյուբերային գույքագրում եւ արխիվների կատալոգ, որը կլինի մատչելի մասնագետների եւ լայն հասարակության համար էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով:
3. Ուսումնասիրել արխիվային նյութերի կատալոգների կազմման միջազգային ստանդարտները եւ ընտրել դրանցից մեկը, օր՝ Արխիվների ընդհանուր նկարագրության միջազգային ստանդարտներ («ISAD»):
4. Բարելավել մասնավոր հավաքածուների միջեւ փաստաթղթերի փոխանցումների պայմանները: Փաստաթղթերի փոխանցումների ժամանակ պետության կողմից գնման առաջնային իրավունքը սահմանափակում է այդպիսի փոխանցումները (հոդված 4):

5. Ստեղծել թափանցիկ, հաշվետու կազմակերպություններ կամ հիմնադրամներ՝ աջակցելու համար Հայաստանի արխիվային ֆոնդի համալրմանը արտասահմանում գտնվող արխիվային նյութերի հաշվին համաձայն հոդված 15-ի:
6. Ծշտել հրատարակման իրավունքի, ինչպես նաև փաստաթղթերի հավաքածուների նկատմամբ հեղինակային իրավունքի, բարեխիղճ օգտագործման եւ ռոյալթիների հարցերը:
7. Կենսունակություն: Սահմանել որոշակի վճարներ, արխիվային ծառայությունների (ոչ-գիտական, մասնավոր շահերի համար) որոշակի տեսակների համար Արխիվային Վարչության 1996թ. հունիս 6-ին ընդունված թիվ. 4 «Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի փաստաթղթերի օգտագործման եւ հրատարակման ընդհանուր կարգի» համաձայն:
8. Ստեղծել սովետական շրջանում բռնադատվածների վերաբերյալ գոյություն ունեցող արխիվային նյութերի օգտագործման կարգ համաձայն օրենքի 21 հոդվածի, եւ Եվրոպական քաղաքականության արխիվների վերաբերյալ առաջարկ (2000/13):

### 5.3.9. Հեղինակային իրավունքի օրենք

ՀՀ թիվ. 28 օրենք «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» (ընդունվել է 1999թ. դեկտեմբերի 8-ին)

ՀՀ իրավական համակարգը նախատեսում է հեղինակային իրավունքի եւ մտավոր սեփականության պաշտպանության ոլորտում մի շարք միջազգայնորեն ընդունված դրույթներ, օր. Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1100 եւ վերջին փոփոխությունները Հեղինակային իրավունքի օրենքին, ինչը տեղի է ունեցել կապված Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը («ԱՀԿ») անդամակցելու հետ: Ներկայումս կան այլ առաջարկներ Քաղաքացիական օրենսգրքում եւ Հեղինակային իրավունքի մասին օրենքում փոփոխություններ կատարելու ուղղությամբ՝ Հայաստանի մտավոր սեփականությունը համաշխարհային շուկայում ավելի մրցունակ դարձնելու նպատակով: Այդ փոփոխությունները ներառում են “պատվիրատուի գույքային սեփականության” սկզբունքը, որը կօգնի ընկերություններին եւ կազմակերպություններին ստեղծելու մտավոր սեփականություն; ինչպես նաև մտավոր սեփականության լիցենզավորման 10-տարվա սահմանափակման եւ որոշակի հեղինակների ոչ գույքային իրավունքներից հրաժարման արգելքի վերացում, որոնք խոչընդոտում են մտավոր սեփականության ազատ

փոխանցմանը: Հայաստանը նաև միացել է Համաշխարհային մտավոր սեփականության կազմակերպությանը («WIPO») 1993թ., ապրիլի 27-ին և Փարիզի կոնվենցիային (մայիս 17, 1994թ.), Բեռնի կոնվենցիային (մայիսի 3, 2000թ.), Մադրիդի կոնվենցիային ապրանքանիշերի վերաբերյալ (ապրիլ 5, 2000թ.): Հայաստանը նաև պատրաստվում է միանալ ձայնագրությունների մասին մի քանի միջազգային կոնվենցիաների, օրինակ, Յոնի (1961թ.), ճենովայի (1972թ.) և Նիցցայի (1957թ.) ապրանքանիշերի կոնվենցիաներին և այլ բազմակողմ համաձայնագրերի, ինչպիսիք են Մադրիդի բազմակողմ կոնվենցիան հեղինակային իրավունքի ռոյալթիների երկակի հարկումից խուսափելու մասին (1979թ.) և Բրյուսելի կոնվենցիան կապված արբանյակի կողմից փոխանցվող ծրագրեր կրող ազդանշանների տարածման հետ (1974թ.):

### Հեղինակային իրավունք և վերարտադրություններ

Հեղինակային իրավունքը շատ առարկաների նկատմամբ, որոնք պահպանվում են թանգարաններում, հնագիտական վայրերում, ձեռագրերի գրադարաններում, արխիվներում այլևս “հեղինակի իրավունք” չեն, այլ “տիրապետողի” իրավունք: Տիրապետողը պարտավոր է այն պահպանել, ապահովել հանրային մատչելիությունը, ապահովել անհրաժեշտ ռեսուրսներ այդ պարտականությունները իրականացնելու համար, ինչպես նաև ունի իրավունք ստանալ եկամուտ դրանց օգտագործումից: Վերջինս, տեխնիկապես չի հանդիսանում “հեղինակային” իրավունք: Դա “տիրապետման” կամ “օգտագործման” իրավունք է: Այն առարկաների համար, որոնց հեղինակային իրավունքը դեռևս ուժի մեջ է (կյանքի ժամանակահատված + 50 տարի՝ համաձայն Բեռնի կոնվենցիայի և ՀՀ Հեղինակային և հարակից իրավունքների մասին օրենք, հոդված 26), ներկա տիրապետողը պետք է հստակեցնի հեղինակային իրավունքի հարցերը ձեռքբերման ժամանակ: Հեղինակը կարող է փոխանցել բոլոր կամ որոշ իրավունքներ, օրինակ թանգարանին: Հեղինակը և նրա ժառանգները պահպանում են բարոյական իրավունքները՝ չնայած այն բանին, որ նրանք կարող են հրաժարվել նրանցից մի քանիսից<sup>11</sup>:

Սովորաբար “արդար օգտագործման” որոշ ձևեր առանց թույլտվության կամ վճարի թույլատրվում են գիտական աշխատանքի կամ կրթության նպատակներով: Արխիվները, մասնավորապես, կարող են որոշել, թե որ տիպի օգտագործողներին և ինչպիսի օգտագործման կարող են տրամադրել, և թե որոնց նման ծառայությունները տրամադրել

<sup>11</sup> Simon Stokes, *Art & Copyright*, (Oxford: Hart Publishing, 2001), p. 47, 106.

վճարով կախված վճարելու նրանց կարողությունից կամ այդ օգտագործումից շահույթի ստացման հնարավորությունից: Օրինակ, գիտական հավաքածուների հրատարակիչները մեծ շահույթներ չեն ստանում, քանի որ շուկան շատ փոքր է եւ հրատարակության եւ թարգմանության եւ ինդեքսավորման ծախսերը բարձր: Այդպիսի հրատարակությունների համար հանրային շահը պատմական ինֆորմացիայի տարածման մեջ կարող է արդարացնել նյութերի մատչելի դարձնել “սիմվոլիկ” վճարով, որը ծածկում է արխիվի ծառայությունների եւ պատճենահանման ծախսերը: Մյուս կողմից առետրային կազմակերպությունը կարող է ուզենալ մտնել արխիվ գույքի սեփականությունը պարզելու համար: Այդ դեպքում, արդարացված է ստանդարտ վճարը, որը հիմնված է արխիվում աշխատելու համար պահանջվող ժամանակի եւ օգտագործվող նյութերի քանակի վրա: Օտարերկրյա հաստատությունների եւ նաեւ կառավարությունների եւ եկեղեցիների համար նույնպես կարող է հատուկ քաղաքականություն մշակվի ողջամիտ վճարներ սահմանելու առումով:

Թանգարանները ունեն տիրապետման շահագրգռվածություն իրենց կողմից պահպանվող առարկաների նկատմամբ եւ ունեն իրավունք այդ առարկաներից եկամուտ ստանալու իրենց պահպանման գործառույթները իրականացնելու նպատակով: Թանգարաններում նկարահանման սահմանափակումները կարող են հավասարակշռվել կրպակներում դրանց վերարտադրությունների, ալբոմների եւ բացիկների վաճառքով: Այդ վերարտադրությունների հրատարակիչները պետք է վճարեն միանվագ վճար կամ թանգարանի հետ կնքել շահույթի բաշխման պայմանագիր (ռոյալթի) այդ առարկաների օգտագործման համար: Վիրտուալ (ինթերնետային) թանգարանները եւ ցուցահանդեսները նույնպես կարող են ապահովել հավաքածուների ավելի մեծ մատչելիություն: Տարբեր տեսակի մուտքի վճարները, բաժանորդավճարները եւ թանգարանի հանդեսները նույնպես այդ առարկաներից եկամուտ ստանալու միջոցներ են:

Շենքերը հանրորեն մատչելի են եւ դրանց նկարահանելու համար վճարներ չեն կարող գանձվել: Այդ նկարների օգտագործումը շահույթ ստանալու նպատակով նույնպես չի կարող հատուկ թույլտվության առարկա լինել, ինչպես նաեւ ռոյալթի կամ այլ վճարում պահանջվել:

Հեղինակային իրավունքի մասին օրենքի եւ մշակութային քաղաքականության խաչաձեւումը ներառում է լայն պրոբլեմների շրջան.

1. Ճարտարապետների հեղինակային իրավունքը իրենց նախագծերի նկատմամբ՝ խորհրդային ժամանակաշրջանում ձեռք բերված բարոյական եւ

գույքային իրավունքների պատճառով ճարտարապետները եւ նրանց ժառանգները շարունակում են վերահսկել տարբեր խորհրդային նախագծային հաստատությունների կողմից նախագծված շենքերի հետագա փոփոխությունները: Սա կարող է պրոբլեմներ առաջացնել գոտիավորման, պահպանման, ժամանակակից օգտագործմանը հարմարեցման, քաղաքային պատմական պահպանության տարածքների համար, քանի որ ճարտարապետների հեղինակային իրավունքը շարունակվում է ամբողջ կյանքի ընթացքում՝ ավելացված եւս 50 տարի եւ կարող է գործադրվել նրանց ժառանգների կամ անձնական ներկայացուցիչների կողմից՝ խոչընդոտելով գոտիավորմանը կամ խորհրդային ժամանակաշրջանի գույքի այլ, արդյունավետ օգտագործմանը, որոնցից ոմանք ներառված են մշակութային արժեքների ցուցակների մեջ եւ 50-75 տարվա հնություն ունեն եւ այդպիսով դրանք կարող են գտնվել պատմական պահպանության տակ: Քաղ. օրենսգիրք, հոդված 1122, Հեղինակային իրավունքի մասին օրենք, հոդվածներ 11 եւ 26:

2. կիրառական արվեստի պարտադիր ռոյալթիները – ՀՀ Կառավարության թիվ 251 որոշում, ընդունված 1999թ. ապրիլի 22-ին:
3. արվեստի գործերի վերավաճառքի պարտադիր ռոյալթիները – Հեղինակային իրավունքի օրենքի հոդված 21:
4. մշակութային կոլեկտիվ աշխատանք – օր. ֆիլմեր, ձայնագրություն, երաժշտական թատրոն, հանրագիտարաններ եւ այլն. Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1119, Հեղինակային իրավունքի մասին օրենք, հոդված 25:

#### Առաջարկներ Հեղինակային իրավունքի վերաբերյալ

1. ապահովել մտավոր սեփականության եւ հեղինակային իրավունքի փոխադարձ հարգանք եւ պաշտպանություն, այսինքն ապահովել, որ արտասահմանյան հեղինակային իրավունքները եւ մտավոր սեփականությունը պաշտպանված լինի Հայաստանում, իսկ հայաստանյան հեղինակային եւ մտավոր սեփականությունը պաշտպանված լինի արտասահմանում:
2. վերագնահատել պարտադիր ռոյալթիները՝ հասկանալու համար արդյոք դրանք (1) կիրառվելի են, (2) խոչընդոտում են Հայաստանի մշակութային

գույքի եւ Հայաստանի ստեղծագործողների մրցունակությանը միջազգային ասպարեզում, (3) համապատասխանում են կյանքում հանդիպող դեպքերի բազմազանությանը (անհրաժեշտ է թողնել նման հարցերը պայմանագրին եւ եթե պայմանագրով ոչինչ չի նախատեսվում նոր միայն ղեկավարվել օրենքով):

3. վերագնահատել շենքի հետագա զարգացման նկատմամբ ճարտարապետների վերահսկողության իրավունքը, քանի որ սա կարող է խոչընդոտել, մասնավորապես, քաղաքային գոտիավորմանը եւ ազգային ճարտարապետության եւ այլ ստանդարտների պահպանությանը, եւ ճարտարապետության զարգացմանը:
4. Ապահովել, որ մտավոր սեփականության վերաբերյալ Հայաստանի օրենսդրությունը պաշտպանի ֆիլմերի եւ ձայնագրությունների պրոդյուսերների, դերասանների եւ բեմադրիչների իրավունքները արդյունավետորեն մրցակցելու համաշխարհային շուկայում, մասնավորապես նախատեսել խմբային աշխատանքի արդյունքում ստեղծված մտավոր սեփականության գույքային իրավունքների համախմբման իրավունք, այնպես, որ այդ իրավունքները հաջողվի լիցենզավորել Հայաստանում նույնքան հեշտորեն, ինչքան որ այլ երկրներում:

#### 5.3.10. Հարկային օրենսդրություն

- ՀՀ օրենք թիվ 115 Շահութահարկի մասին (ընդունվել է 1997թ. նոյեմբերի 17-ին, փոփոխվել է 2000թ. դեկտեմբեր 29-ին),
- ՀՀ օրենք թիվ 183 Եկամտահարկի մասին (ընդունվել է 1997թ. դեկտեմբեր 30-ին),
- ՀՀ օրենք թիվ 118 Ավելացված արժեքի մասին (ընդունվել է 1997թ. հունիս 16-ին, փոփոխվել է 2000թ. դեկտեմբեր 29-ին),
- Կառավարության որոշում թիվ 286 Մարդասիրական օգնության պետական հանձնաժողովի մասին (ընդունվել է 1997թ հուլիս 21-ին)

Քանի որ մշակութային գործունեությունը եւ արժեքները աշխարհում աջակցություն են ստանում հիմնականում բարեգործական հասկացումներից, մշակութային արժեքների եւ բարեգործական հասկացումների նկատմամբ հարկային

քաղաքականությունը հանդիսանում է մշակութային ժառանգության քաղաքականության կարեւոր գործոն: Հարկային քաղաքականությունը հանդիսանում է մշակութային ժառանգությունը եւ ներկա մշակույթը պահպանելու եւ զարգացնելու ուղիներից մեկը:

Այլ հետխորհրդային երկրների նման Հայաստանի հարկային քաղաքականությունը գնտվում է Արժույթի Միջազգային Հիմնադրամի («ԱՄՀ») խիստ հսկողության ներքո: Հարկային եկամուտները մեծացնելու եւ չարաշահումներից խուսափելու նպատակով Հայաստանի հարկային համակարգը էականորեն սահմանափակում է հարկային արտոնությունները մշակութային, բարեգործական կամ այլ շահույթ չհետապնդող գործունեությունների համար: Ժամանակի ընթացքում, այնուամենայնիվ, մշակութային ժառանգության անվերականգնելի փչացման վտանգը պետք է գնահատվի եւ համեմատվի ԱՄՀ-ի հարկահավաքման նպատակների հետ՝ որոշելու համար, թե որն է Հայաստանի ընդհանուր բարեկեցության համար առավել նպաստավոր: Մշակութային ժառանգության թերֆինանսավորումը բարենպաստ հարկային միջավայրի բացակայության պատճառով սպառնում է աղքատացնել երկիրը եւ թուլացնել նրա տնտեսական զարգացումը, որը կարող է ավելի վնասակար լինել երկրի համար քան թե հարկերի թերհավաքումը կամ հարկերից խուսափելուց առաջացող տնտեսական դեֆորմացիան:

Ներկայումս Հայաստանը առաջարկում է հետեւյալ հարկային խթանները մշակութային ժառանգության պահպանման եւ մշակութային հաստատություններին բարեգործական հատկացումների ուղղությամբ՝

1. գույքահարկի բացակայություն որոշակի գույքի տեսակների վրա (գույքահարկի դրույքը տատանվում է 0-ից մինչեւ 0.8% գնահատված արժեքից): ՀՀ օրենք թիվ 187 Գույքահարկի մասին, հոդված 9.5 (ընդունվել է 1998թ. հունվարի 13-ին),
2. եկամտահարկով հարկվող եկամտի նվազեցումները բարեգործական հատկացումների համար՝ սահմանափակված հարկվող եկամտի 5%-ով: ՀՀ եկամտահարկի մասին օրենք, հոդված 13,
3. շահութահարկով հարկվող շահույթից նվազեցումներ բարեգործական հատկացումների համար ոչ ավել քան ընդհանուր շրջանառության 0.25%-ը: ՀՀ Շահութահարկի մասին օրենք, հոդված 23ա,
4. Ավելացված արժեքի հարկից («ԱԱՀ») ազատում գույքային հատկացումների համար, եթե դրանք թույլատրված են ՀՀ մարդասիրական օգնության պետական հանձնաժողովի կողմից, ՀՀ Ավելացված

արժեքի հարկի մասին օրենք, հոդված 15.20,  
Կառավարության որոշում թիվ 286 (ընդունվել է 1997թ.,  
հունիսի 21-ին):

Որոշ հարկային խնդիրներ, որոնք խոչընդոտում են ոչ  
առեւտրային ոլորտի զարգացմանը`

1. հարկային արտոնություններ եկամուտ ստեղծող  
գործունեությունների համար` կապված նրանց շահույթ  
չհետապնդող նպատակների հետ,
2. բարեգործական հատկացումների համար  
անսահմանափակ հարկային նվազեցումները, ներառյալ  
գույքային հատկացումների համար ԱԱՀ-ից ազատում,
3. ծառայությունների ներմուծման եւ ապրանքների  
ներմուծման անհավասար հարկում ԱԱՀ-ով: Որեւէ  
հայկական հաստատություն, որը ունի արտաքին  
մարկետինգի կամ այլ օտարերկրյա խորհրդատվական  
ծառայության կարիք պետք է վճարի եւ հավաքագրի  
ԱԱՀ, սակայն չի կարող այն հաշվանցել, ինչը  
Հայաստանյան կազմակերպությունների համար կարելու  
միջազգային ծառայությունները դարձնում է 20%-ով  
ավելի թանկ, քան այլ երկրներում իր մրցակիցների  
համար:
4. դրամաշնորհների հարկումը որպես սովորական  
եկամուտ – դրամաշնորհները հանդիսանում են  
մշակույթի խթանման կարելու միջոցներից մեկը:  
Սակավության ժամանակաշրջանում շատ դժվար է  
աջակցել մշակույթին եւ կրթությանը այս հավելյալ  
հարկային բեռի առկայության դեպքում:

Առաջարկներ հարկային քաղաքականության վերաբերյալ

1. վերանայել ներկայիս հարկային խթանների համակարգը  
եւ ուսումնասիրել ներկա եւ պոտենցիալ դոնորներին.  
հասկանալու համար թե արդյոք այս խթանները լավ  
մշակված են Հայաստանի մշակութային ժառանգությունը  
պահպանելու ուղղությամբ բավարար չափով  
նվիրատվություններ ներգրավելու համար,
2. Հայաստանի հարկային համակարգը դարձնել մրցունակ  
այլ երկրների համակարգերի նկատմամբ` հարկային  
քաղաքականությունը համապատասխանեցնելով  
լավագույն միջազգային պրակտիկային: Սա  
նախապայման է սփյուռքից եւ միջազգային  
հիմնադրամներից միջոցների ներգրավման համար,
3. քննարկել մշակութային հաստատություններին եւ ներկա  
արվեստագետներին աջակցելու համար հարկային  
արտոնությունների ստեղծման հնարավորությունները



4. քննարկել ավելի լայն հարկային արտոնությունների հնարավորությունները (ԱԱՀ, եկամտահարկ եւ շահութահարկ), այդ թվում նախատեսելով հարկային արտոնություններ շահույթ չհետապնդող մշակութային եւ կրթական հաստատությունների եւ բարեգործական հատկացումների համար:

#### 5.3.11. Այլ օրենքներ

Լեզվական քաղաքականության մասին դրույթներ պարունակվում են ՀՀ օրենք թիվ 52 Լեզվի մասին, (ընդունվել է 1993թ. ապրիլի 17-ին); ՀՀ օրենք թիվ 97 Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին ( ընդունվել է 2000թ. նոյեմբերի 9-ին); ՀՀ օրենք թիվ 297 Կրթության մասին (ընդունվել է 1991թ. հունվարի 8-ին): Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին օրենքի հոդված 9 եւ 59 պարունակում են նաեւ հայրենական արտադրության հաղորդումների նվազագույն տեսակարար կշիռ հեռուստա-ռադիո ընկերությունների հաղորդումների համար, այն առաջիկա 5 տարվա ընթացքում պետք է 25%-ից աճի մինչեւ 65% (2005թ):

### 6. Հաստատություններ եւ մշակույթի այլ ոլորտներ

#### 6.1 Թանգարաններ

Հայաստանը ներկայումս չունի թանգարանների մասին օրենք: Ըստ Թանգարանների Միջազգային Խորհրդի («ICOM») սահմանման «թանգարանը ոչ շահութաբեր հաստատություն է, որը ծառայում է հասարակությանը եւ նրա զարգացմանը, բաց է հասարակության համար, եւ որը ուսուցման, կրթության եւ ժամանցի համար ձեռք է բերում, պահպանում, հետազոտում եւ ցուցադրում է ժողովրդի կենսագործունեության նյութական ապացույցներ»:

ICOM-ի գործունեությունը նվիրված է թանգարանների եւ թանգարանային մասնագիտության զարգացմանը, այն գործում է համաշխարհային մասշտաբով մշակութային ժառանգության պահպանման նպատակով: ICOM-ը հանդիսանում է թանգարանային մասնագետների համաշխարհային ցանց:

Ստեղծվելով 1946թ.՝ ICOM-ի գործունեությունը կենտրոնացված է հետեւյալ ուղղությունների վրա:

- մասնագիտական համագործակցություն եւ փոխանակություն,
- գիտելիքի տարածում եւ թանգարանների վերաբերյալ հասարակական գիտակցության բարձրացում,
- անձնակազմի ուսուցում,
- մասնագիտական ստանդարտների զարգացում,
- մասնագիտական էթիկայի մշակում եւ զարգացում,
- ժառանգության պահպանում եւ մշակութային արժեքների անօրինական փոխանցումների կանխարգելում:

ICOM-ը բաղկացած է ազգային եւ միջազգային հանձնաժողովներից, ինչպես նաեւ կապակցված եւ տարածաշրջանային կազմակերպություններից: Ազգային հանձնաժողովները ICOM-ի քարտուղարության եւ նրա անդամների միջեւ հաղորդակցության հիմնական միջոցն է: Յուրաքանչյուր երկրի ներսում ազգային հանձնաժողովը ապահովում է ICOM-ի շահերի պաշտպանությունը, ներկայացնում է նրա անդամների շահերը եւ օգնում է իրականացնելու ICOM-ի ծրագրերը:

Ներկայումս Հայաստանում չկա ICOM-ի ազգային հանձնաժողով: Այդպիսիք կան Ադրբեջանում, Իրանում եւ Թուրքիայում: ICOM-ի ազգային հանձնաժողով չկա նաեւ Վրաստանում:

Միջազգային հանձնաժողովների միջոցով ICOM-ը ձգտում է իր հիմնական նպատակներին՝ միջազգային մակարդակով գիտական տեղեկատվության փոխանակություն, մասնագիտական ստանդարտների մշակում, կանոնների եւ առաջարկների ընդունում եւ համագործակցության ծրագրերի իրականացում:

ICOM-ի կանոնները ներառված են Հավելվածում, ավելի մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել ICOM-ի ինթերնետ էջի վրա <http://www.icom.org>:

#### ICOM-ի մասնագիտական էթիկայի կանոնները

ICOM-ի մասնագիտական էթիկայի կանոնները մասնագիտական ինքնակարգավորման միջոց են: Դրանք սահմանում են գործունեության եւ արդյունավետության նվազագույն ստանդարտները, որոնց վրա կարող են հենվել աշխարհի բոլոր թանգարանների մասնագետները: Կանոնները ենթադրում են ինստիտուցիոնալ էթիկա, որպես թանգարանների կառավարման, հավաքածուների ձեռքբերման եւ ցուցադրման, ինչպես նաեւ մասնագիտական գործելակերպի սկզբունքներ: Տես Հավելվածը մասնագիտական էթիկայի կանոնների ամբողջական տեքստի համար:

Հավաքածուների մեջ գտնվող արժեքների վերարտադրության առևտրային օգտագործումը դեկավարվում է հեղինակային իրավունքի մասին օրենքով, որոնք տարբեր երկրներում տարբերվում են ինչպես նկարագրված է 5.3.9 բաժնում:

#### Առաջարկներ թանգարանների վերաբերյալ

1. Կատարել հավաքածուների ռիսկի գնահատում, ստեղծել վտանգված առարկաների եւ հաստատությունների պաշտպանության ցուցակ ըստ դրանց առաջնայնության:
2. Ընդունել եւ կիրառել թանգարանների աշխատակիցների եւ թանգարանային արժեքների դիլերների, ինչպես նաեւ համակարգի արդյունավետ կառավարման միջազգային կանոնակարգեր եւ ուղեցույցներ, թափանցիկության եւ հաշվետվության այնպիսի մակարդակով, որը կբավարարի դոնորներին եւ այլ հովանավորներին:

3. Վերակազմակերպել թանգարանների իրավական կարգավիճակը, կառավարման համակարգը եւ սեփականության ձեւը եւ/կամ ստեղծել մասնավոր կառավարմամբ կազմակերպություններ (Թանգարանների Բարեկամներ) ֆինանսավորման հայթայթման համար:
4. Որդեգրել այնպիսի հարկային քաղաքականություն, որը կխթանի թանգարաններին բարեգործական հատկացումներ կատարելը, արվեստի գործերի նվիրատվությունները, եւ այլ կերպ աջակցումը:
5. Իրագործել ՅՈՒՆԵՍԿՈ-ի առաջարկները թանգարանները բոլորի համար մատչելի դարձնելու ուղղությամբ:
6. կատարել մշակութային ժառանգության շարժական առարկաների կենտրոնացված գույքագրում, որը կլինի էլեկտրոնային կառավարման միջոցով մատչելի՝ թանգարանների, մասնագետների, հետազոտողների եւ օրինապահ մարմինների համար:
7. ստեղծել էլեկտրոնային եւ վիրտուալ թանգարաններ՝ հավաքածուները ավելի մատչելի դարձնելու համար, մասնավորապես հաշվի առնելով Սփյուռքի առկայությունը, տես օրինակ վիրտուալ Մատենադարան ծրագիրը ([www.matenadaran.am](http://www.matenadaran.am)) եւ Բաց Հասարակության ինստիտուտի վիրտուալ պատկերասրահը Ազգային պատկերասրահի հետ համտեղ:
8. ընդունել գույքագրման եւ առարկաների նկարագրման միջազգային ստանդարտներ՝ նպաստելով Հայաստանի մասնակցությանը տվյալների միջազգային փոխանակմանը: Ընդունել քոմփյութերային ստանդարտ ծրագրեր օր՝ Փաստաթղթավորման միջազգային կոմիտեի («CIDOC») ծրագրերը, Getty Information Institute Systems, տես օր՝ Computerized Collection Management: A Primer.
9. ստեղծել արժեքների օտարման ուղեցույց եւ օգտագործել աղբյուրների սահմանափակումը, տես Թանգարանների կառավարման վերաբերյալ հավելված:

## 6.2 Գրադարաններ

Հայաստանը չունի գրադարանների մասին օրենք:

Գրադարաններին վերաբերող հիմնական օրենսդրական հարցերը ամփոփված են Գրադարանային կազմակերպությունների միջազգային ֆեդերացիայի («IFLA» տես [www.ifla.org](http://www.ifla.org) ինթերնետային էջը) կողմից: Ազգային գրադարանը տպագրված ժառանգությունը բոլորի համար պահպանելու եւ մատչելի դարձնելու գործում հանդիպում է մի շարք խնդիրների: Շատ կարելու է ստեղծել գրադարաններին պարտադիր հատկացումների մեխանիզմ, երբ նոր տպագրության որոշակի թվով օրինակներ, պարտադիր պետք է տրամադրվեն կենտրոնական գրադարանին: Հայաստանի մեծ գրադարանները ստեղծել են

միություն , որը պետք է վերահսկի Բաց Հասարակության ինստիտուտի հետ համատեղ ստեղծվող միասնական համակարգչային շտեմարանի ստեղծման աշխատանքները:

ԵԽ-ը հրատարակել է ուղեցույցներ Եվրոպայի գրադարանային օրենսդրության եւ քաղաքականության վերաբերյալ, որի հիմնական դրույթները ներկայացվում են ստորև:

Գրադարանային տեղեկատվության եւ փաստաթղթավորման միության եվրոպական բյուրոյի («EBLIDA») ուղեցույց

Գրադարանները ներկայացնում են հասարակության մշակութային, կրթական եւ տեղեկատվական ենթակառուցվածքի էական եւ անփոխարինելի բաղկացուցիչ մասը, ավելին, մշակութային ժառանգության անփոխարինելի մաս: Այս գաղափարը հատկապես կարելի է ժամանակակից Եվրոպայի համար մի քանի պատճառներով՝

- այն երաշխավորում է մարդու արտահայտման ազատության եւ տեղեկատվության հանրային մատչելիության հիմնարար իրավունքի պաշտպանությունը,
- այն խրախուսում է նոր տեխնոլոգիաների եւ գլոբալիզացիայի ժողովրդավարական զարգացումները, որտեղ գրադարանները հանդիսանում են կարելի դերակատարներ Եվրոպայի տեղեկատվության եւ հաղորդակցության ոլորտում մշակութապես կողմնորոշված քաղաքականության մեջ,
- այն արտահայտում է գլոբալիզացիայի միտումները՝ շեշտադրելով տեղական պայմանները եւ բազմալեզու եւ բազմամշակույթ հասարակությունների բարգավաճումը,
- այն աջակցում է Արելեյան Եվրոպայում տեղի ունեցող ինստիտուցիոնալ եւ տնտեսական բարեփոխումներին, ինչը պահանջում է պետությունների ժողովրդավարության զարգացման գործում գրադարանների կարելիության գիտակցում,;
- այն ապահովում է ազգային հավաքածուների զարգացումը եւ պահպանումը՝ ցանկացած ձևով եւ բովանդակությամբ:

IFLA-ն մշակել է Տպագրվող գրգերի գրադարանների պարտադիր հատկացման օրենքների ուղեցույցը (Guidelines for Legal Deposit Legislation) (Փարիզ, 2000թ.), որը ներառված են Հավելվածում:

Գրադարանների մասին ռուսաստանյան օրենքը (1994թ.) կարող է ծառայել որպես սկզբնակետ Հայաստանի գրադարանների մասին օրենքի մշակման համար: Ռուսական օրենքը տարանջատում է գրադարանները հանրային, կառավարական, կրթական, ինստիտուցիոնալ եւ մասնավոր գրադարանների: Գրադարանները կարող են գտնվել մասնավոր սեփականության ներքո: Չկա

արտոնագրման պահանջ եւ բոլոր հանրային գրադարանները անվճար են; մասնավոր գրադարանները կարող են գանձել անդամության կամ օգտագործման վճարները: Նրանք պետք է լինեն երկրի միասնականացված տեղեկատվության ցանցի մաս եւ պետք է ապահովեն միջգրադարանային փոխառությունները եւ միասնական կատալոգների մեջ ներգրավվածությունը: Պետությունը պարտավոր է պատշաճ նակարդակով ֆինանսավորելու հանրային գրադարանները: Բոլոր նոր գրքերի օրինակներ պետք է հատկացվեն կենտրոնական գրադարանին:

Էլեկտրոնային Հրապարակումներ եւ Վիրտուալ Գրադարաններ

ԵԽ-ը թողարկել է նաեւ գրքերի հրատարակման եւ էլեկտրոնային հրատարակությունների օրենսդրական եւ քաղաքականության միջոցների ուղեցույցի նախագիծը: Սա կարող է հետաքրքիր լինի Հայաստանի համար ոչ միայն Հայաստանի մշակութային ժառանգության նկատմամբ կիրառման, այլեւ միջազգայնորեն մրցունակ ծառայությունների եւ գիտելիքների մշակման համար:

Առաջարկներ Գրադարանների վերաբերյալ.

- 1 Ապահովել հավաքածուների ֆիզիկական ամբողջականությունը: Կատարել հավաքածուների ռիսկի գնահատում, շրջանառության քաղաքականության գնահատում, նյութերի շարժի կառավարման համակարգերի գնահատում, կորսված գույքի գնահատում, գրքերի ֆիզիկական մաշվածքի չափի գնահատում: Հաստատել կորուստների կանխարգելման եւ հետեւանքների վերացման առաջնայնությունը:
- 2 Գնահատել հավաքածուները, վերանորոգել դրանք՝ անդառնալի կորուստները կանխելու համար:
- 3 Հայկական գրքերի, այդ թվում հազվագյուտ գրքերի գույքգրում, անկախ նրանից թե դրանք Հայաստանում են գտնվում թե արտասահմանում, մասնավոր հավաքածուներում թե հանրային հավաքածուներում:
- 4 Էլեկտրոնային կառավարման /կենտրոնացված կատալոգի օգտագործման միջոցով միասնականացնել գույքագրումը եւ դարձնել այն ամբողջությամբ մատչելի երկրով մեկ, խթանելով տարածաշրջանային մտավոր եւ գիտական զարգացումները, քչացնելով գյուղի եւ քաղաքի միջեւ տարբերությունը, եւ կանխելու համար բնակչության արտահոսքը գյուղական բնակավայրերից: 2002թ. Բաց հասարակության ինստիտուտի աջակությամբ ձեռնարկվելու է միասնականացված կատալոգի ստեղծումը գրադարանային կոնսորցիումի հովանու ներքո:

- 5 Ստեղծել մեքենայացված գրադարանների ցանց երկրով մեկ նվազեցնելու համար տեղեկատվության մատչելիության իմաստով քաղաք-գյուղ տարբերությունը եւ ապահովելու համար, որ նոր հրապարակումները հասնեն գյուղական բնակավայրեր:
- 6 Օրենքով անրագրել տպագրվող գրքերի օրինակների պարտադիր հանձնումը գրադարաններին:
- 7 Ընդունել այնպիսի օրենքներ եւ քաղաքականություն, որոնք կխթանեն էլեկտրոնային գրքերը, էլեկտրոնային հրատարակումները, եւ վիրտուալ գրադարանները, այնպիսիք ինչպիսին է օր` Հայաստանի ամերիկյան համալսարանի թվային գրադարանը, որպեսզի գրադարանները ավելի լավ ծառայեն աշխարհով մեկ սփռված հայությանը, եւ կարողանան դիմագրավել գլոբալիզացիայի ճնշումներին, որոնք առավել զգալի են փոքրաթիվ ազգերի եւ լեզուների համար:
- 8 Ջարգացնել քոմիյութերային արդյունավետ որոնողական ծրարգիր, ուղագրական կանոնների եւ տեքստային խմբագրման ծրագրեր հայերեն գրական երկու լեզուների եւ երկու ուղագրությունների համար:

### 6.3 Արխիվներ

Եւ-ի արխիվների վերաբերյալ առաջարկները նախատեսում են հետևյալը`

- Չնայած արխիվները հանդիսանում են երկրի սեփականությունը, նրանք պետք է ապահովեն տեղեկատվության ազատ շրջանառությունը;
- Արխիվներից օգտվելը պետք է կառավարվի օրենքի իշխանությամբ` կամայականությունները պետք է դադարեցվեն (հատկապես երբ այդ իրավունքով լիազորվում են “վստահելի” համարվող մարդիկ);
- Արխիվները կարող են պարունակել փակ փաստաթղթեր, սակայն, պետք է հեշտ լինի դրանք գտնելը:

Առաջարկներ Արխիվների վերաբերյալ (տես նաեւ Ազգային Արխիվային ֆոնդի մասին ՀՀ օրենքի առաջարկները, հոդված 5.3.8.)

1. Գնահատել արխիվները, ապահովել հավաքածուների պաշտպանվածությունը եւ ֆիզիկական ամբողջականությունը, ստեղծել արդյունավետ իրավական եւ վարչական համակարգ հրատապ հարցերի լուծման, ինչպես նաեւ մասնագետների պատրաստման համար:
2. Հայկական արխիվներ գտնվել են աշխարհի գրեթե բոլոր անկյուններում, որտեղ է հայկական համայնք, ինչպես նաեւ այն երկրների կառավարական արխիվներում, որոնք քննել են Հայկական Հարցը:

3. օգտագործել էլեկտրոնային կառավարումը եւ ինթերնետը, կատալոգների եւ գույքագրումների մատչելիությունը մեծացնելու նպատակով:
4. Ընդունել արխիվների միջազգային ստանդարտներ – օր՝ ICA ստանդարտները:
5. Ընդունել արխիվի աշխատողների էթիկայի կանոնները, ICA (տես հավելվածը):

#### 6.4 Եկեղեցի-պետություն հարաբերություններ

Հայաստանի առջեւ, որպես կարելու դերակատարություն իրականացնող եկեղեցի ունեցող երկիր եւ մշակույթ, ծառայած են յուրահատուկ խնդիրներ, որոնք պահանջում են յուրահատուկ լուծումներ: Միջազգային նորմերը պահանջում են եկեղեցու եւ պետության առանձնացում: Այնուամենայնիվ, մշակութային օրենսդրությունը մասնավորապես եվրոպայում եւ Ռուսաստանում, մշակութային արժեքները թողնում են երկակի տիրապետման ներքո: Պետություն/եկեղեցի համատեղ վերահսկողությունը, սեփականությունը եւ ֆինանսավորումը տանում են դեպի պետության եւ եկեղեցու միջեւ կոնֆլիկտների, որից պետության եւ եկեղեցու առանձնացման դոկտրինան նպատակ ունի խուսափելու: Տարբեր երկրներ ունեն տարբեր մոտեցումներ: Չկա Հայաստանի դրության ճշգրիտ համանման իրադրություն, ուստի լավագույն դեպքում այս մոդելները կարող են ծառայել որպես սկզբնակետ այս ոլորտում Հայաստանի օրենսդրության եւ քաղաքականության մշակման համար: Մասնավորապես, Անգլիան, Դանիան, Շվեդիան եւ Գերմանիան գտել են աշխատող մոդելներ իրենց ազգային եկեղեցիների գույքի կառավարման համար: Անգլիական մոդելը եկեղեցուն շնորհում է ամենամեծ ազատությունը, քանի որ եկեղեցին հանդիսանում է անշարժ մշակութային արժեքների սեփականատեր: Այլ երկրներում, մասնավորապես կաթոլիկ երկրներում, առկա է պետության մեծ վերահսկողություն եկեղեցական գույքի նկատմամբ, որը իր հերթին հիմնված է պետության կողմից ցուցաբերվող էական աջակցության վրա՝ եկեղեցական գործունեության համար նախատեսված հարկային եկամուտների միջոցով, ինչը անհավանական է Հայաստանի պարագայում կանխատեսելի ապագայում: Քանի որ այս հարաբերությունները զարգացել են յուրահատուկ մշակութային եւ պատմական համատեքստում, դրանք չեն կարող ուղղակի կիրառվել Հայաստանի նկատմամբ խորհրդային եւ ցարական անցյալի պատճառով: Ամեն դեպքում, այդ սկզբունքները մեկ համակարգից մյուսին տեղափոխելը կարող է լուրջ վնասներ պատճառել:

Ինչպես արդեն նշվել է, յուրաքանչյուր երկրի մոտեցում եկեղեցի-պետություն հարաբերություններին եւ եկեղեցական գույքին կախված է պատմական հանգամանքներից եւ տեղական պայմաններից: Օրինակ, Անգլիական եկեղեցու դերը եւ հնարավորությունները որպես ազգային եկեղեցի հանգեցրին շենքերի պատմական պահպանման ընդհանուր կանոններից “եկեղեցական բացառությանը”: Այդ բացառությունը

խարսխված է մի շարք պատմական եւ առարկայական չափանիշների վրա: Եկեղեցին պատմականորեն եղել է ինքնակարգավորվող եւ ունեցել է մեծ դեր հասարակության գույքային եւ անձնական իրավունքների հարցերում, իր սեփական եկեղեցական վարչարարությամբ եւ դատարաններով: Եկեղեցին ուներ նաեւ իր սեփական կանոնները եւ վարչական կառույցները եկեղեցական գույքի կառավարման համար, ներառյալ դրա պահպանումը որպես պատմական եւ մշակութային ժառանգություն: Այսպես, երբ Անգլիական ՅՆԱԳՈՒՅՆ ՅուՆԵՍԿՈՒՆԻՆԵՐԻ Ակտը ընդունվեց 1913թ., ակտիվ օգտագործման մեջ գտնվող եկեղեցական գույքը ազատվեց պետության ուղղակի վերահսկողությունից որոշակի շատ կարելուր բացառություններով հանդերձ, քանի որ համարվում էր, որ եկեղեցու վերահսկողությունը բավարար է: Սովորական պահպանման, կամ վերանորոգման աշխատանքների համար եկեղեցու ներքին կառավարման մարմնի հաստատումը վերջնական է: Այնուամենայնիվ, եթե կառույցը այլեւս չի օգտագործվում որպես եկեղեցի կամ պետք է քանդվի, պահանջվում է պետական պատմական պահպանման հանձնաժողովի հաստատումը: Պետությանն է վերապահված նաեւ արտակարգ իրավիճակներում միջամտելու իրավունքը կանխարգելելու փչացումը, եւ այն նաեւ դնում է որոշակի պահանջներ հանրային մատչելիության առումով: Այլ հարանվանություններին եւ կրոններին պատկանող գույքը նույնպես ազատվում են պետության ուղղակի վերահսկողությունից, պայմանով, որ այդ հարանվանությունները եւ կրոնները ունենան անհրաժեշտ վարչական կառույցներ եւ կանոնակարգեր այդ վայրերի պահպանումը եւ հանրային մատչելիությունը ապահովելու համար: Վերջապես, պետությունը շնորհներ է տրամադրում եկեղեցուն պահպանման ծախսերը ծածկելու համար<sup>12</sup>: Բացի այդ, պետության հետ կապված կազմակերպությունները, ինչպիսիք են «Անգլիական ժառանգություն»ը, եւ շահագրգռված խմբերը, ինչպիսին է SAVE Britain's Heritage-ը, ունեն իրավունք դիմելու եկեղեցուն, պետությանը եւ տեղական կառավարման մարմիններին, ինչպես նաեւ հարուցել դատական վարույթներ՝ վտանգված գույքը պաշտպանելու նպատակով: Անգլիական ժառանգություն հիմնադրամը, որի արմատները գնում են մինչեւ 1877թ.-ին հիմնադրված ՅՆԱԳՈՒՅՆ հուշարձանների պահպանման միություն, գործում է որպես թրասթ՝ կազմված 5 մասնավոր անձանց խորհրդից, որոնք նշանակվում են պետության կողմից յուրաքանչյուր հինգ տարին մեկ: Անգլիական ժառանգությունը առաջարկներ է կատարում եւ հաստատում է հուշարձանների դասակարգումը: Այն նաեւ գործում է որպես հանրային հիմնադրամ, որը ձեռք է բերում վտանգված հուշարձանները, ընդունում է նվիրատվությունները եւ կառավարական դրամաշնորհները եւ տրամադրում է շնորհներ դրանց պահպանման համար:

<sup>12</sup> Roger W. Suddards & June M. Hargaeves, *Listed Buildings*, 3<sup>rd</sup> ed., (London: Sweet & Maxwell, 1996), pp. 354-381.



Քանի որ Հայաստանյայց եկեղեցու ներկա վիճակը երկրի ներսում եւ երկրից դուրս բավականին տարբերվում է Անգլիական եկեղեցուց, վերջինիս մոդելի որոշ ասպեկտներ ավելի խորը ուսումնասիրության են արժանի՝ որոշելու համար, թե արդյոք դրանք կարող են ծառայել Հայաստանի կարիքների համար մոտակա եւ հեռու ապագայում: Անգլիական փորձառության վրա հիմնված իրավական համակարգի եւ քաղաքականության ձեւավորման համար կարող է հաշվի առնվել հետեւյալը. (1) Հայաստանի ներսում եւ դրսում իր գույքը կառավարելու եւ պահպանելու եկեղեցու հնարավորությունների զարգացումը; (2) Անգլիական ժառանգության նման հանրային թրասթ, որով սփյուռքահայերը եւ եկեղեցին կարող են միջոցներ հայթայթել պահպանման համար; (3) եկեղեցու եւ պետության դերի հստակեցում կապված եկեղեցական գույքի հետ; (4) արտակարգ իրավիճակներում պահպանման մեխանիզմներ եւ անվտանգության միջոցառումներ; (5) շահագրգռված անձանց կողմից բողոքարկման իրավունք դատարանների կամ պետական կառուցների եւ տեղական պլանավորման մարմինների միջոցով մշակութային ժառանգությունը անվերականգնելի փչացումից կանխելու համար:

Հայաստանի համար լավագույն մոտեցման որոշումը, պետք է կատարվի շահագրգիռ անձանց կողմից եւ կարող է ձեւավորվել ժամանակի ընթացքում, համընթաց եկեղեցու անցյալի հալածանքներից թոթափվելու գործընթացին: Եկեղեցական գույքի վերադարձը, մասնավորապես անշարժ գույքը, կարելի է գործոն է եկեղեցու վերականգնման համար: Վերադարձման սկզբունքը ընդունված է 2000թ. մարտի 17-ին եկեղեցու եւ պետության միջեւ կնքված հուշագրում, որպես եկեղեցու եւ պետության միջեւ հարաբերության հիմք: Հուշագիրը մեծ տեղ է հատկացնում եկեղեցական գույքին, դիտարկելով այն նշված հուշագրի երկրորդ հոդվածում (հոդված 1բ): “Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, իբրեւ իրավաբանական անձի սեփականության (հող, անշարժ եւ շարժական գույք, պատմամշակութային հուշարձաններ եւ այլն) հետ կապված հիմնահարցերի հստակեցում”:

Ներկայումս եկեղեցական անշարժ գույքի սեփականության եւ վերանորոգման հարցերի քննարկման եւ վերջնական լուծման գործընթացը անցնում է ավելի քան 5 պետական եւ եկեղեցական հաստատություններով՝ տեղական եկեղեցուց դիմում թեմին, այնուհետեւ Էջմիածին, Կրոնի գործերով պետական վարչություն, Պատմական հուշարձանների պահպանության վարչություն, Պետական գույքի կառավարման նախարարություն եւ Կառավարություն, ինչպես նաեւ կարող են նաեւ ներառել քաղաքի ծարտարապետին, պետական կադաստրը, եւ քաղաքաշինության նախարարությունը: Այս գործընթացը շատ ծանրաբեռնված է եւ անարդյունավետ եւ կարող է անհարկի ուշացումներ եւ օրենքի կիրառման անհամատեղելիություններ առաջացնել, որը կարող է վտանգել կամ խոչընդոտել արդյունավետ պահպանմանը կամ օգտագործմանը:

Կառավարությունը ընդունել է որոշումներ եկեղեցական գույքը վերադարձնելու ուղղությամբ, սակայն փաստացի վերադարձը շատ բարդ է կատարվել մի շարք տեղերում՝ հողի ուսուսմնասիրությունների, վկայականների եւ մշակութային ժառանգության վերահսկման գործընթացի ադավադումների պատճառներով:

Ներկայումս չլուծված ամենակարեւոր հարցերից մեկը դա ներկա կարիքներին հարմարեցումն է: Այս առումով, պետական կառավարման համակարգը եւ իրավական կուլտուրան դեռեւս գտնվում են անցումային շրջանում: Մի կողմից, եկեղեցին դեռեւս բավարար չափով չի վերականգնվել, որպեսզի պահի իր սեփական պատմական եւ մշակութային ժառանգության պահպանման ստորաբաժանումը, իսկ մյուս կողմից պետությունը եւ նրա աշխարհիկ մասնագետները դեռ պայքարում են հաղթահարելու համար խորհրդային ժառանգությունից եկող իրավական կուլտուրան եւ հաստատությունները եւ կրոնի եւ հավատացյալների նկատմամբ նոր մոտեցման գտնելու համար:

Միեւնույն ժամանակ ռեսուրսների սղության պատճառով ոչ եկեղեցին, ոչ էլ պետությունը ի վիճակի չեն իրականացնելու անհրաժեշտ պահպանությունը, ինչը վտանգում է Հայաստանի անշարժ մշակութային արժեքները: Սակայն եկեղեցին ավելի մեծ հնարավորություններ ունի միջոցներ ապահովելու առումով, քան պետությունը՝ միջազգային հարկային արտոնությունների եւ բարեգործական հատկացումների բարենպաստ օրենսդրության, ինչպես նաեւ եկեղեցու աշխարհասփյուռ կառույցների եւ հիմնադրամների շնորհիվ: Բացի այդ, գոյություն ունի սփյուռքահայերի եւ դոնորների ընդհանուր անվստահություն պետությանը տրված միջոցների եւ դրամաշնորհների օգտագործման թափանցիկության ու հաշվետվության վերաբերյալ:

Վերջապես, Հայաստանից դուրս գտնվող հայկական մշակութային արժեքների գերակշիռ մասը եկեղեցական գույք է եւ միջազգային եւ ազգային օրենքների համաձայն եկեղեցական եւ մասնավոր գույքը ունեն տարբեր պաշտպանվածություն, որպիսին սուվերեն պետությունը չի կարող ապահովել: Ուստի, պահպանության ուղղություններից մեկն էլ պետք է լինի այդ գույքը կենտրոնացնել եկեղեցու եւ մասնավոր ձեռքերում՝ ՀՀ դիվանագիտական գործունեության հետ համագործակցությամբ՝ ԵԽ-ի եւ ՅՈՒՆԵՍԿՈ-ի մշակութային ժառանգության պաշտպանության շրջանակներում: Այս միջոցների արդյունավետությունը էապես կտուժի, եթե Հայաստանյայց եկեղեցին չզրավի էական դեր անշարժ մշակութային արժեքների պահպանության եւ վերահսկման գործում:

Այս հանգամանքներում լավագույնս մշակութային ժառանգությունը պահպանելու համար անհրաժեշտ է պետության աջակցությունը եկեղեցուն՝ վերջինիս էական անկախության պայմաններով եւ առաջատար դերով, եթե այն ունենա հնարավորություններ, ֆինանսական եւ մասնագիտական ռեսուրսներ կառավարելու եւ պահպանելու այդ ժառանգությունը:

Առաջարկներ Եկեղեցի-Պետություն հարաբերությունների վերաբերյալ.

1. Գույքագրել Եկեղեցու ներկա եւ անցյալում պատկանած գույքը, կատարել գույքի ռիսկի գնահատում, եւ հաստատել նորոգման, պահպանման եւ վերագործարկման գերակայություններ:
2. Հրատապ ուշադրություն պետք է դարձվի Եկեղեցիների մոնիտորինգի, վանդալիզմից պաշտպանելու, անհամատեղելի զբոսաշրջության արգելման եւ Եկեղեցիների շուրջ պահպանության գոտիների ստեղծման վրա, ապահովելու համար, որ Եկեղեցիների սուրբ հողի վրա չկառուցվեն անհամապատասխան շենքեր եւ չկատարվեն անհամապատասխան միջոցառումներ:
3. Եկեղեցին կարիք ունի զարգացնել իր սեփական հնարավորությունները, ներառյալ ֆինանսական, կառավարման, փորձագիտական՝ կառավարելու համար մշակութային սեփականությունը (օր՝ Եկեղեցու Գույքի Հիմնադրամ):
4. Եկեղեցին կարիք ունի զարգացնելու թափանցիկ, օբյեկտիվ եւ հաշվետու համակարգ եւ չափանիշներ մշակութային ժառանգության պահպանման եւ օգտագործման համար, (օր՝ Պահպանման Կանոններ, ինքնակառավարվող մեխանիզմներ, փորձագետների խորհուրդներ հոգեւորական եւ աշխարհիկ մասնագետների մասնակցությամբ, երկարաժամկետ եւ կարճաժամկետ քաղաքականության մշակում):
5. Եկեղեցու եւ Պետության անջատման սկզբունքին համահունչ, իրավական դաշտը պետք է ապահովի պետության հնարավորինս քիչ ներգրավումը Եկեղեցու ինչպես նաեւ մասնավոր սեփականության ներքո գտնվող մշակութային արժեք ներկայացնող գույքի պահպանման գործում, բացառությամբ բացառիկ դեպքերի, ելնելով հասարակության շահերից, երբ կա այդ գույքի անդառնալի կորստի վտանգ:
6. մշակել Եկեղեցի-Պետություն-Սփյուռք հարաբերությունների համապարփակ քաղաքականություն, Եկեղեցական գույքի պաշտպանության համար: Ուսումնասիրել միջազգային եւ ազգային օրենքներով սահմանված իրավունքները, խթանելով հոգեւորական եւ մշակութային գույքի պահպանությամբ զբաղվող այլ կազմակերպությունների հետ համագործակցությունը, ակտիվորեն մասնակցել ՅՈՒՆԵՍԿՈ-ի եւ ԵԽ-ի կառույցներին՝ պայքարելով Հայաստանի մշակութային ժառանգության պահպանման համար, օր. երկրների միջեւ միմյանց մշակութային ժառանգության փոխադարձ պաշտպանության միջոցով (օր՝ Սբ. Թադեի վանքը Իրանում եւ Երկնագույն մզկիթը Երեւանում):
7. Ստեղծել Հայաստանում մշակութային ժառանգության պաշտպանության Եկեղեցու կողմից կառավարվող մեխանիզմ, որը հիմք կդառնա պահանջելու նույն սկզբունքի կիրառումը արտասահմանում գտնվող հայկական մշակութային ժառանգության նկատմամբ:

8. Մինչ եկեղեցու կողմից մշակութային ժառանգության պահպանման մեխանիզմի հաստատումը, պակասեցնել համակարգում գոյություն ունեցող թղթավարությունը, բարձրացնել արդյունավետությունը, թափանցիկությունը, պատշաճ գործընթացի սկզբունքը, որոնք վստահություն կներշնչեն հովանավորներին եւ այլ ֆինանսավորողներին, եւ հնարավորություն կստեղծեն ներգրավել համապատասխան ֆինանսավորում:

6.5 Մշակութային զբոսաշրջություն – մշակութային վայրեր

Մշակութային զբոսաշրջություն ՅՈՒՆԵՍԿՈ-ի եւ ԵԽ-ի նոր գերապատվություններից է: Դա հատուկ կարեւորություն ունի Հայաստանի համար, քանի որ Հայաստանը հարուստ է զբոսաշրջիկներին հետաքրքրող մշակութային եւ պատմական դեռելս քիչ հայտնի վայրերով: Մշակութային զբոսաշրջությունը սերտորեն կապված է ուխտագնացությունների հետ, որը հատուկ կարեւորություն ունի Հայաստանի համար, որպես Նոյյան տապանի, Էջմիածնի (վայր, որտեղ իջել է Միածինը), Թաղեոս եւ Բարդուղիմեոս առաքյալների ավետարանչության, առաջին քրիստոնյա պետության եւ հարյուրավոր վանքերի եւ եկեղեցիների երկրի: Տես օրինակ Թուրքիայի կողմից Սբ. Պողոսի կատարած ճանապարհորդությունների տեղերով կատարվող մշակութային զբոսաշրջության ծրագրերը:

ICOMOS-ը սահմանում է մշակութային զբոսաշրջությունը որպես զբոսաշրջության մի ձեւ, որի առարկան, այլ նպատակների շարքում, հուշարձանների եւ վայրերի այցելությունն է: Տուրիզմի այս ձեւը փաստորեն արդարացնում է այն ջանքերը, որոնք պահանջում է ժառանգության պահպանությունը՝ նրա բերած սոցիալական, մշակութային եւ տնտեսական օգուտների պատճառով:

ԵԽ-ն ուխտագնացությունը եւ մշակութային ուղիները դարձրել է հատուկ ծրագիր աջակցելու ընդհանուր Եվրոպական ժառանգության գիտակցմանը եւ տարածմանը: “Եվրոպական մշակութային ուղի տերմինը նշանակում է մեկ կամ երկու երկներով կամ տարածաշրջաններով անցնող ուղիներ, որոնք կազմակերպված են այնպիսի թեմաների շուրջ, որոնց պատմական, զեղազիտական կամ սոցիալական նշանակությունը ակնհայտորեն Եվրոպական է՝ կամ աշխարհագրական տեղանքի կամ դրա նշանակության եւ մասշտաբի հետեւանքով”: “Եվրոպական տերմինի կիրառումը որեւէ ուղու նկատմամբ պետք է ենթադրի նշանակալիություն եւ մշակութային ուղղվածություն, որը տեղականից ավելի վեր է: Ուղին պետք է հիմնված լինի մի շարք հիմնական տեղանքների վրա, պատմական հարուստ անցյալով, որոնք նաեւ Եվրոպական մշակույթի համար, որպես ընդհանրություն, ներկայացուցչական են:

Առաջարկներ մշակութային զբոսաշրջության եւ մշակութային վայրերի վերաբերյալ

1. Պատշաճորեն ապահովել զբոսաշրջության վայրերի ներկայացումը, զբոսաշրջության եւ դրա հետ կապված ենթակառուցվածքի կառավարումը, այդ վայրերի շուրջն իրականացվող միջոցառումները, որպեսզի մշակութային ժառանգության օբյեկտները անհրաժեշտ չափով պահպանվեն եւ զարգացվեն, եւ շարունակեն մնալ գրավիչ, չկորցնելով իրենց անդորրը, նիվրականությունը եւ կուսականությունը:
2. Ինտեգրվել թանգարանների եւ այլ հաստատությունների, կատարողական արվեստի, ժողովրդական մշակույթի եւ կիրառական արվեստի հետ, տես օր` ICOM-ի առաջարկած թանգարանների եւ մշակութային զբոսաշրջության կանոնակարգը:
3. Խթանել տարածաշրջանային զբոսաշրջությունը Հայաստանի մշակութային վայրերը ICOMOS-ում եւ ԵԽ-ում գրանցելու միջոցով, որը կարող է խթանել նաեւ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող հայկական մշակութային ժառանգության պաշտպանությանը եւ համաշխարհային քաղաքակրթության մեջ հայկական մշակույթի մեծ դերի գնահատմանը, օր` Երուսաղեմ-Հայաստան, Կիլիկիա-խաչակիրներ կապերը, Մետաքսե ճանապարհը, հնդեվրոպական բնօրրան եւ այլն: Գրանցել Հայաստանի մշակութային վայրերը ICOMOS-ում համաձայն Մշակութային Վայրերի Իդենտիֆիկացիայի Գրանցամատյանի, եւ Եվրոպական Մշակութային Վայրերի շարքում:
4. Կիրառել թիվ. R (96) 6 առաջարկը, ընդունվել է 1996թ. հունիսի 19-ին «Մշակութային ժառանգությունը անօրինական արարքներից պաշտպանելու վերաբերյալ»:
5. ԵԽ-ի ստանդարտների հիման վրա մշակել «Այցելուների կանոնադրություն», որի միջոցով խրախուսել այցելուներին, որպեսզի հարգանքով վերաբերվեն այցելության վայրերին եւ մշակութային հուշարձաններին ու գույքին:

## 6.6 Այլ մշակութային ոլորտներ

### 6.6.1 Ժողովրդական քանահյուսություն

Ինչպես UNESCO-ն այնպես էլ ԵԽ-ն որդեգրել են հատուկ քաղաքականություն ոչ նյութական մշակույթի պաշտպանության ասպարեզում: Տես օր` UNESCO-ի առաջարկը «Ավանդական մշակույթի եւ ֆոլկլորի պահպանման վերաբերյալ» (Փարիզ, 15 նոյեմբերի 1989թ.) եւ UNESCO-ի ազգային եւ հոգեւոր երաժշտության նվազադարանները:

### 6.6.2 Լեզու

Այս տարի Հայաստանը մասնակցեց Լեզվի Եվրոպական Տարվան, որպես ԵԽ-ի «Եվրոպական Ընդհանուր ժառանգություն» ծրագրի մի մաս: Պետք է մշակվեն հայերեն

լեզվի ինթերնեթային որոնողական արդյունավետ համակարգեր, տառաճանաչման եւ ուղղագրությունը ստուգող ծրագրեր եւ այլ տեքստային աշխատանքների գործիքներ վստահ լինելու համար, որ Հայաստանը դուրս չմնա ինֆորմացիոն հեղափոխության շրջադարձներից: Պետք է համապատասխան մոտեցում ցուցաբերվի ուղղագրության տեսակներին (դասական եւ սովետական), լեզվին եւ գրականությանը (դասական, միջնադարյան եւ ժամանակակից արեւմտյան եւ արեւելյան) եւ դրանք պետք է օժանդակվեն համակարգչային ծրագրերով եւ սովյալների շտեմարաններով, որպեսզի Հայաստանի լեզվագիտական ժառանգությունը չկորսվի տեխնիկական հնարավորությունների բացակայության պատճառով:

### 6.6.3 Արվեստ եւ կիրառական արվեստներ

Եւ Նախարարների Խորհրդի թիվ R (81) 13 առաջարկը անդամ երկրներին «Կիրառական արվեստի վերացող ոլորտների խրախուսման վերաբերյալ» (1 հունիսի 1981): Միջազգային գործադիր ծառայության կորպուսի («IESC») օժանդակությամբ Հայաստանում ստեղծվում են ժողովրդական Արհեստների Խորհուրդ եւ ժողովրդական Արհեստների Հիմնադրամ: IESC -ն նաեւ փորձում է ստեղծել տարբեր արհեստների գիլդիաներ եւ արհեստները կապել զբոսաշրջության հետ:

### Կինո, հեռուստատեսություն, ռադիո, ինթերնեթ եւ այլ զանգվածային լրատվամիջոցներ

Կինոն, հեռուստատեսությունը, ռադիոն, ինթերնեթը եւ այլ աուդիո-տեսողական զանգվածային լրատվամիջոցները (“կինո եւ դրա հետ կապված լրատվամիջոցներ”) նույնպես հանդիսանում են մշակութային ժառանգության էական բաղադրիչ, ինչպես նաեւ միջոցներ մշակույթի տարածման համար: Հայաստանը ունի մեծ ավանդույթներ կինոյի բնագավառում, ինչի վրա հիմնվելով կարելի է զարգացնել ոլորտը: Վերջերս Հայաստանի կինոգետների եւ կինոլրագրողների ասոցիացիայի կողմից թողարկվեց «Հայկական կինոն 1924-1999» կատալոգը հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով: Ներկա մշակույթի բարգավաճման եւ տարածման համար կինոն եւ դրա հետ կապված լրատվամիջոցները շատ կարեւոր են: Այնուամենայնիվ, կինոն եւ դրա հետ կապված լրատվամիջոցները պահանջում են զարգացած տեխնոլոգիաների օգտագործում, որոնք բավականին ծախսատար են, հատկապես անցումային շրջանում գտվող փոքր երկրների համար՝ իրենց յուրահատուկ լեզվով, թեմատիկայով եւ փոքրաթիվ լսարանով: ՅՈՒՆԵՍԿՈ-ն եւ Եվրոհամայնքը ունեն մի շարք նախաձեռնություններ ազգային կինոն, հեռուստատեսությունը, ռադիոն եւ այլ նոր լրատվամիջոցները աջակցելու ուղղությամբ:

Կինոմատոգրաֆիական աշխատանքների համատեղ կատարման աջակցության եվրոպական հիմնադրամը («EURIMAGES») ԵԽ-ի ծրագիր է, որը աջակցում է համատեղ արտադրությունը եւ տարածումը նշված ոլորտներում: Այն հիմնվել է 1989թ. եւ ունի 26 անդամ-երկրներ: ԵԽ-ի հետ կապված է նաեւ Եվրոպական Աուդիովիզուալ Օբսերվատորիան իր IRIS Plus իրավական օբսերվատորիան: Վերջինս, տրամադրում է ազգային օրենսդրությունների եւ միտումների վերաբերյալ ամփոփ նյութեր, ինչպիսիք են “Եվրոպայում ֆիլմերի արտադրությունը եւ տարածումը. ազգային հիմնախնդիրը”, ինչպես նաեւ ֆիլմերի ազգային արտադրության օժանդակության ուղեցույցներ`

